Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

2531 – 2533

1292
491.99-5
9-34

Y-3 w9

75

2010

2002

Ա. Մ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

491.99-5
Գ-34
№ 128
535

# ՀԱՄԱՌՕՏ ՆՈՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՂՂԵԱԼ ԵՒ ՃՈԽԱՑԵԱԼ

*Երկրորդ տպագրութիւն*

معارف نظارت جليله‌سنك ٧٧٤ نومرولى رخصتنامه‌سيله طبع اولنمشدر

Printed in Turkey

ԳՐԱՎԱՃԱՌ-ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
Բ. ՊԱԼԵՆՑ
Կ. ՊՈԼԻՍ-CONST/PLE
B.BALENTZ
LIBRAIRE-EDITEUR

Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐ. Մ. Ց. ՓԱՓԱԶԵԱՆ
Զափմաճըլար Եօգուշու, Ճիւմպիւլիւ խան թիւ 12, 17, 21
—
1892

12069

ՏԷՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ՄԻՀՐԱՆ Յ. ՓԱՓԱԶԵԱՆ

ՏՊԱԳՐԻՉ, ԿԱԶՄԱՐԱՐ ԵՒ ԳՐԱՎԱՃԱՌ

Կ. Պոլիս Զագմաճըլար-Եօգուշու, Ջիւմպիւլլի խան

Թիւ 12, 17, 21

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

**ՏԵԱՌՆ ՄԱԿԱՐԱՅ**

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

եւ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

**ՏԵԱՌՆ ՅԱՐՈՒԹԵԱՆ**

Սրբազան Արքեպիսկոպոսի

ՎԵՀԱՊԵՏԵԱՆ

եւ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ

**ՏԵԱՌՆ ԽՈՐԵՆԱՅ**

Սրբազան Արքեպիսկոպոսի

ԱՇԸԳԵԱՆ

1877 [illegible]

ՀԱՅԿ-СОРА
Им. А Мясникяна

3097
34

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Այս համառօտ Քերականութիւնը կը բովանդակէ առաջին, երկրորդ եւ երրորդ մասերուն մէջ, Հայերէն լեզուին կարեւոր սկզբունքը եւ կանոնները, եւ բաւական է անոնց համար՝ որոց դիտումն է Հայերէն հասկընալ, խօսել եւ փոքր ի շատէ գրել։

Այս տպագրութեան մէջ մանաւանդ ջանացինք Դասագիրս յարմարագոյն գործել Քերականութեան ստորին դասերուն, իւրաքանչիւր կանոնի պատշաճ համառօտ հարցում դնելով եւ կարեւոր յաւելուածներ ընելով ի դիւրութիւն նորընծայ աշակերտաց։

Համառօտութեան հետ դիւրիմացութիւն Քերականութեանս, կարեւորագոյն կանոններուն ամբողջութիւնը, գնոյն եւս մեծ չափաւորութիւնը են այն առաւելութիւնք որ կը պահանջուին այսպիսի նախնական դասագրքէ։

Ա. Մ. Գ.



Printed in Turkey

# ՀԱՄԱՌՕՏ
# ՆՈՐ
# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԵՐԷՆ

1. Հ. Ի՞նչ է քերականութիւն և ի՞նչ կ'ուսուցանէ ։

Պ. Քերականութիւն կը կոչուի այն գիտութիւնը որ կ'ուսուցանէ նախ՝ թէ լեզուի մը բառերը քանի՛ տեսակ են և ինչ փոփոխութիւններ կը կրեն լեզուին մէջ. երկրորդ՝ թէ ինչ է խօսքը, և ինչ գըլխաւոր մասեր ունի ։

Առաջին մասը կը կոչուի բառագիտութիւն, երկրորդն՝ շարադասութիւն ։

## ՄԱՍՆ Ա.

### ԲԱՌԱԳԻՏՈՒԹԻՒՆ

2. Հ. Ի՞նչ է բառ ։

Պ. Բառ կը կոչուին նշանակութիւն ունեցող ձայներ որ կը կազմուին մի կամ աւելի գիրերէ. զոր օրինակ, մարդ, ծառ, հոգի, իմաստութիւն՝ բառ են ։

3. Հ. Հայերէն լեզուին բառերը քանի՞ կարգ են ։

Պ. Հայերէն լեզուին բառերը կը բաժնուին ինը

կարգ, որ Մասունք բանի կը կոչուին, և են՝ Անուն կամ Գոյական, Ածական, Յօդ, Դերանուն, Նախդիր կամ Նախադրութիւն, Բայ, Մակբայ, Շաղկապ և Ձայնարկութիւն կամ Միջարկութիւն։

## ԳԼՈՒԽ Ա.

### ԱՆՈՒՆ, ԿԱՄ ԳՈՅԱԿԱՆ

4. Հ. Ի՞նչ է անուն կամ գոյական։

Պ. Անունը կամ գոյականը կը ցուցնէ անձ և իր. զոր օրինակ անձի անուն են հայր, մայր. իրի անուն են՝ հաց, քաղաք, հոգի, իմաստութիւն։

5. Հ. Քանի՞ կը բաժնուի անունը։

Պ. Անունը կը բաժնուի ընդհանրապէս երկու, Հասարակ, որ տեսակ կը ցուցնէ, ինչպէս՝ մարդ, ծառ, ծաղիկ, ևն. և Յատուկ, որ անհատ, այսինքն, անձ կամ տեղ կը ցուցնէ. ինչպէս Դաւիթ, Երուսաղէմ, Յորդանան, Սինա։

6: Հ. Քանի՞ փոփոխութիւն ունի անունը։

Պ. Անունն ունի երկու փոփոխութիւն, Թիւ և Հոլով։

7. Հ. Քանի՞ է անուան թիւը։

Պ. Անուան թիւն է երկու, Եզակի և Յոգնակի։

8. Հ. Ի՞նչ կը ցուցնէ եզակին։

Պ. Եզակին կը ցուցնէ թէ անուամբ նշանակուած անձը կամ իրը մի է. զոր օրինակ, մարդ, քաղաք, գետ, կը նշանակեն մի մարդ, մի քաղաք, մի գետ։



9. Հ. Ի՞նչ է յոգնակին։

Պ. Յոգնակին կը ցուցնէ թէ անուամբ նշանակուած անձը կամ իրը ոչ մի է այլ աւելի. զոր օրինակ, մարդք, քաղաքք, գետք, կը նշանակեն՝ մարդեր, քաղաքներ, գետեր. այսինքն՝ ոչ մի այլ աւելի մարդ, ոչ մի այլ աւելի քաղաք, ոչ մի այլ աւելի գետ։

10. Հ. Ի՞նչ է հոլով։

Պ. Հոլովն՝ անուան վերջաւորութեան փոխուիլն է։

11. Հ. Քանի՞ հոլով ունի Հայերէնը։

Պ. Հայերէնն ունի վեց հոլով. Ուղղական, Սեռական, Տրական, Հայցական, Բացառական, Գործիական։

12. Հ. Անուան վերջն այս վեց կերպով փոփոխելուն ի՞նչ կ՚ըսուի։

Պ. Անուան վերջն այս վեց կերպով փոփոխելուն կ՚ըսուի, անունը հոլովել։

13. Հ. Անուն մը, զորօրինակ՝ բան, խօսք, անունը հոլովէ։

Պ. Բան, խօսք, անունը կը հոլովի այսպէս.

### Ա. ՀՈԼՈՎՈՒՄ

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ուղղական | Բան. | Խօսք. | Սէօզ. |
| Սեռական | Բան-ի. | Խօսքի. | Սէօզիւն. |
| Տրական | Բան-ի. | Խօսքի. | Սէօզէ. |
| Հայցական | զԲան. | Խօսքը. | Սէօզիւ. |
| Բացառական | ի Բան-է. | Խօսքէ. | Սէօզտէն. |
| Գործիական | Բան-իւ. | Խօսքով. | Սէօզ իլէ. |

14. Հ. Ի՞նչպէս է այս անուան յոգնակի ձեւը։

Պ. Այս անուան յոգնակի ձեւն է այս.

Յոքնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ուղղական | Բան-ք . | Հայցական | զԲան-ս . |
| Սեռական | Բան-ից . | Բացառական | ի Բան-ից . |
| Տրական | Բան-ից . | Գործիական | Բան-իւք . |

Այսպէս կը հոլովին .

| | |
|---|---|
| Ախտ , տի , տէ , տիւ . | Ախտք , տից , տիւք . |
| Արքայ , յի , յէ , յիւ . | Արքայք , յից , յիւք . |
| Բանտ , տի , տէ , տիւ . | Բանտք , տից , տիւք . |
| Ձայն , նի , նէ , նիւ . | Ձայնք , նից , նիւք . |
| Վարդ , դի , դէ , դիւ . | Վարդք , դից , դիւք . |
| Ցեղ , ղի , ղէ , ղիւ . | Ցեղք , ղից , ղիւք . |

15. Հ. Այս կերպո՞վ կը հոլովի հայերէն ամէն անուն ։

Պ. Հայերէն անուանց հոլովման կերպերն այլեւայլ են ։

16. Հ. Քանի՞ են այս կերպերը ։

Պ. Այս կերպերն են երկոտասան , և կը կոչուին կանոնաւոր հոլովմունք ։

17. Հ. Քանե՞րորդ կերպն է Բան բառին հոլովումը։

Պ. Բան բառին հոլովումն է առաջին կերպ ։

18. Հ. Մնացեալ կերպերը որո՞նք են ։

Պ. Մնացեալ կերպերն են իրենց յոքնակի ձեւերովն ։



## Բ. ՀՈԼՈՎՈՒՄ

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Քաղաք . | Քաղաք . | Շէհր . |
| Ս. | Քաղաք-ի . | Քաղաքի . | Շէհրին . |
| Տ. | Քաղաք-ի . | Քաղաքի . | Շէհրէ . |
| Հ. | զՔաղաք . | Քաղաքը . | Շէհրի . |
| Բ. | ի Քաղաք-է . | Քաղաքէ . | Շէհրտէն . |
| Գ. | Քաղաք-աւ . | Քաղաքով . | Շէհր իլէ . |

Յոքնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Քաղաք-ք . | Քաղաքներ . | Շէհիրլէր . |
| Ս. | Քաղաք-աց . | Քաղաքներու . | Շէհիրլէրին . |
| Տ. | Քաղաք-աց . | Քաղաքներու . | Շէհիրլէրէ . |
| Հ. | զՔաղաք-ս . | Քաղաքները . | Շէհիրլէրի . |
| Բ. | ի Քաղաք-աց . | Քաղաքներէ . | Շէհիրլէրտէն . |
| Գ. | Քաղաք-օք . | Քաղաքներով . | Շէհիրլէր իլէ . |

| | |
|---|---|
| Աւազան , նի , նաւ . | Աւազանք , նաց , նօք . |
| Գաւազան , նի , նաւ . | Գաւազանք , նաց , նօք . |
| Թագաւոր , րի , րաւ . | Թագաւորք , րաց , րօք . |
| Ժամանակ , կի , կաւ . | Ժամանակք , կաց , կօք . |
| Իշխան , նի , նաւ . | Իշխանք , նաց , նօք . |
| Լեզու , զուի , զուաւ . | Լեզուք , զուաց , զուօք . |

## Գ. ՀՈԼՈՎՈՒՄ

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Զգեստ . | Զգեստ . | Խօճայ . |
| Ս. | Զգեստ-ու . | Զգեստի . | Խօճայըն . |
| Տ. | Զգեստ-ու . | Զգեստէ . | Խօճայա . |
| Հ. | զԶգեստ . | Զգեստը . | Խօճայը . |
| Բ. | ի Զգեստ-ե (1) . | Զգեստէ . | Խօճայտան . |
| Գ. | Զգեստ-ու . | Զգեստով . | Խօճայ իլէ . |

(1) Այս հոլովման անուններէն ոմանց բացառականը կ'ըլլայ , -ուէ , ինչպէս , Զարդ , զարդու , ի զարդուէ . Այգ , այգու , յայգուէ, Նախանձ , նախանձու , ի նախանձուէ ։

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո· | Զգեստ-ք · | Զգեստներ · | Էսվապլար · |
| Ս· | Զգեստ-ուց · | Զգեստներու · | Էսվապլարըն · |
| Տ· | Զգեստ-ուց · | Զգեստներու · | Էսվապլարա · |
| Հ· | զԶգեստ-ս · | Զգեստները · | Էսվապլարը · |
| Բ· | ի Զգեստ-ուց · | Զգեստներէ · | Էսվապլարտան · |
| Գ· | Զգեստ-ուք · | Զգեստներով · | Էսվապլար իլէ · |

Առիւծ , ծու , ծէ , ծու · Առիւծք , ծուց , ծուք ·
Գանձ , ձու , ձէ , ձու · Գանձք , ձուց , ձուք ·
Դաս , սու , սէ , սու · Դասք , սուց , սուք ·
Ծով , ծովու , վէ , ծովու · Ծովք , վուց , վուք ·
Շահ , հու , հէ , հու · Շահք , հուց , հուք ·
Ուղտ , տու , տէ , տու · Ուղտք , տուց , տուք ։

---

## Դ. ՀՈԼՈՎՈՒՄ

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| · | Գետ · | Գետ · | Ըրմագ · |
| Ս· | Գետ-ոյ · | Գետի · | Ըրմաղըն · |
| Տ· | Գետ-ոյ · | Գետի · | Ըրմաղա · |
| Հ· | զԳետ · | Գետը · | Ըրմաղը · |
| Բ· | ի Գետ-ոյ · | Գետէ · | Ըրմագտան · |
| Գ· | Գետ-ով · | Գետով · | Ըրմագ իլէ · |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո· | Գետ-ք · | Գետեր · | Ըրմագլար · |
| Ս· | Գետ-ոց · | Գետերու · | Ըրմագլարըն · |
| Տ· | Գետ-ոց · | Գետերու · | Ըրմագլարա · |
| Հ· | զԳետ-ս · | Գետերը · | Ըրմագլարը · |
| Բ· | ի Գետ-ոց · | Գետերէ · | Ըրմագլարտան · |
| Գ· | Գետ-ովք · | Գետերով · | Ըրմագլար իլէ · |



Գող , ղոյ , ղով · Գողք , ղոց , ղովք ·
Ծեր , րոյ , րով · Ծերք , րոց , րովք ·
Ձոր , րոյ , րով · Ձորք , րոց , րովք ·
Ցաւ , ւոյ , ւով · Ցաւք , ւոց , ւովք ·
Ձող , ղոյ , ղով · Ձողք , ղոց , ղովք ·
Փող , ղոյ , ղով · Փողք , ղոց , ղովք ։

---

## Ե. ՀՈԼՈՎՈՒՄ

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո· | Սահակ · | Սահակ · | Սահագ · |
| Ս· | Սահակ-այ · | Սահակի · | Սահագըն · |
| Տ· | Սահակ-այ · | Սահակի · | Սահագա · |
| Հ· | զՍահակ · | Սահակը · | Սահագը · |
| Բ· | ի Սահակ-այ · | Սահակէ · | Սահագտան · |
| Գ· | Սահակ-աւ · | Սահակով · | Սահագ իլէ · |

Շուշան , նայ , նաւ · Մաժաք , քայ , քաւ ·
Այրարատ , տայ , տաւ · Հռոմ , մայ , մաւ ·
Միհրդատ , տայ , տաւ · Մեսրոպ , պայ , պաւ ·

---

## Զ. ՀՈԼՈՎՈՒՄ

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո· | Հռիփսիմէ · | Հռիփսիմէ · | Հռիփսիմէ · |
| Ս· | Հռիփսիմ-եայ · | Հռիփսիմէի · | Հռիփսիմէնին · |
| Տ· | Հռիփսիմ-եայ · | Հռիփսիմէի · | Հռիփսիմէյէ · |
| Հ· | զՀռիփսիմէ · | Հռիփսիմէ · | Հռիփսիմէյի · |
| Բ· | ի Հռիփսիմ-եայ · | Հռիփսիմէէ · | Հռիփսիմէտէն · |
| Գ· | Հռիփսիմ-եաւ · | Հռիփսիմէով · | Հռիփսիմէ իլէ · |

Եսայի, յեայ, յեաւ. Նունէ, Նեայ, Նեաւ.
Եւփիմէ, մեայ, յեաւ. Օգոստոս, տեայ, տեաւ.
Յուլիոս, լեայ, լեաւ. Արէս, րեայ, րեաւ (1)։

## Է. ՀՈԼՈՎՈՒՄ

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Եկեղեցի. | Եկեղեցի. | Քիլիսէ. |
| Ս. | Եկեղեց-ւոյ. | Եկեղեցւոյ. | Քիլիսէնին. |
| Տ. | Եկեղեց-ւոյ, -ւոջ. | Եկեղեցւոյ. | Քիլիսէյէ. |
| Հ. | զԵկեղեցի. | Եկեղեցին. | Քիլիսէյի. |
| Բ. | (2) ՚ի Եկեղեց-ւոյ (3). | Եկեղեցիէ. | Քիլիսէտէն. |
| Գ. | Եկեղեց-եաւ (4). | Եկեղեցիով. | Քիլիսէ իլէ. |

(1) Հոլովմանց այս ձեւը յատուկ անուանց համար է, բայց կան յատուկ անուններ որ հասարակ անուններուն հոլովմանց պէս եւս կը հոլովին. զորօրինակ, Մովսէս, Մովսիսի, Մովսիսիւ. Նինուէ, Նինուէի, Նինուէիւ. Բաբելոն, նի, նիւ. Անտոն. նի, նիւ. Երուսաղէմ, ղեմի, ղեմաւ. Արտաշատ, Արտաշատու. Արագած, Արագածու. Յորդանան, Յորդանանու. Դուին, Դունոյ. Յակոբ, Յակոբու. Գեղարքունի, Գեղարքունեաց. Սիս, Սսոյ։ Ոս վերջաւորեալ անուններ ընդհանրապէս Ա. հոլովման պէս կը փոխուին. Պետրոս, Պետրոսի, Պետրոսիւ. Եգիպտոս, Եգիպտոսի, Եգիպտոսիւ, եւն։

(2) Ձայնաւորով սկսող բառերէն առաջ՝ փոխանակ ՚ի նախդրի՝ յ նախդիրը կը դրուի։

(3) Այս հոլովման անուններէն ոմանց բացառականը կ'ըլլայ նաեւ -ւոջէ, ինչպէս, Տեղի, ՚ի տեղւոջէ։

(4) Կան ի վերջաւորած բազմավանկ անուններ, ինչպէս, Որդի, Հոգի, եւ ացի վերջաւորեալ ազգի անուններ, ինչպէս, Իսրայելացի, Եբրայեցի, եւայլն, որոց եզակի գործիականը կ'ըլլայ -ւով, եւ յոգնակի սեռականը, տրականը՝ -ւոց, եւ գործիականը՝ -ւովք, ինչպէս, Որդի, որդւով, որդւոց, որդւովք. Հոգի, հոգւով, հոգւոց, հոգւովք. Իսրայելացի, իսրայելացւով, իսրայելացւոց, իսրայելացւովք։



Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Եկեղեցի-ք. | Եկեղեցիներ. | Քիլիսէլէր. |
| Ս. | Եկեղեց-եաց. | Եկեղեցիներու. | Քիլիսէլէրին. |
| Տ. | Եկեղեց-եաց. | Եկեղեցիներու. | Քիլիսէլէրէ. |
| Հ. | զԵկեղեցի-ս. | Եկեղեցիները. | Քիլիսէլէրի. |
| Բ. | ՚ի Եկեղեց-եաց. | Եկեղեցիներէ. | Քիլիսէլէրտէն. |
| Գ. | Եկեղեց-եօք. | Եկեղեցիներով. | Քիլիսէլէր իլէ. |

Բարի, րւոյ, րեաւ. Գոտի, տւոյ, տեաւ.
Գինի, նւոյ, նեաւ. Տարի, րւոյ, րեաւ.
Գործի, ծւոյ, ծեաւ. Տեղի, ղւոյ, ղեաւ։

## Ը. ՀՈԼՈՎՈՒՄ

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Փոքր. | Մանր. | Ուֆագ. |
| Ս. | Փոք-ու. | Մանրի. | Ուֆաղըն. |
| Տ. | Փոք-ու. | Մանրի. | Ուֆաղա. |
| Հ. | զՓոքր. | Մանրը. | Ուֆաղը. |
| Բ. | ՚ի Փոք-ուէ. | Մանրէ. | Ուֆագտան. |
| Գ. | Փոք-ումբ, Փոք-ու. | Մանրով. | Ուֆաղ իլէ. |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Փոք-ունք. | Մանրեր. | Ուֆագլար. |
| Ս. | Փոք-ունց. | Մանրերու. | Ուֆագլարըն. |
| Տ. | Փոք-ունց. | Մանրերու. | Ուֆագլարա. |
| Հ. | զՓոք-ունս. | Մանրերը. | Ուֆագլարը. |
| Բ. | ՚ի Փոք-ունց. | Մանրերէ. | Ուֆագլարտան. |
| Գ. | Փոք-ումբք. | Մանրերով. | Ուֆագլար իլէ. |

Ասր, սու, սուէ, սու. Ծաղր, ղու, ղուէ, ղու.
Բարձր(1), ձու, ձուէ, ձու. Մեղր, ղու, ղուէ, ղու.
Թանձր, ձու, ձուէ, ձու. Քաղցր, ցու, ցուէ, ցու։

(1) Բարձր բառին գործիականը կ'ըլլայ, Բարձումբ, յոգ. սեռականը եւ գործիականը՝ Բարձանց, Բարձամբք։

## Թ. ՀՈԼՈՎՈՒՄ

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ու. | Հիմն . | Հիմ . | Թէմէլ . |
| Ս. | Հիմ-ան . | Հիման . | Թէմէլին . |
| Տ. | Հիմ-ան . | Հիման . | Թէմէլէ . |
| Հ. | զՀիմն . | Հիմը . | Թէմէլի . |
| Բ. | ի Հիմ-անէ . | Հիմէ . | Թէմէլտէն . |
| Գ. | Հիմ-ամբ . | Հիմով . | Թէմէլ իլէ . |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ու. | Հիմ-ունք . | Հիմեր . | Թէմէլլէր . |
| Ս. | Հիմ-անց . | Հիմերու . | Թէմէլլէրին . |
| Տ. | Հիմ-անց . | Հիմերու . | Թէմէլլէրէ . |
| Հ. | զՀիմ-ունս (1) . | Հիմերը . | Թէմէլլէրի . |
| Բ. | ի Հիմ-անց . | Հիմերէ . | Թէմէլլէրտէն . |
| Գ. | Հիմ-ամբք . | Հիմերով . | Թէմէլլէր իլէ . |

Ակն , կան , կանէ , կամբ . Ակունք , կանց , կամբք .
Աղեղն , ղան , ղանէ , ղամբ . Աղեղունք , ղանց , ղամբք .
Հիւսն , սան , սանէ , սամբ . Հիւսունք , սանց , սամբք .
Որոմն , ման , մանէ , մամբ . Որոմունք , մանց , մամբք(2).
Ունկն , կան , կանէ , կամբ . Ունկունք , կանց , կամբք :

(1) Այս հոլովման անուններէն ոմանց յոքնակի Ուղղ . կը լինի —ունք , եւ հայցականն՝ —ունս , ինչպէս , Ցերմանք , սերմանս . Կողմանք, կողմանս ,

(2). Այս հոլովման ձեւն ունին ոչ սակաւ հասարակ անուններ . ինչպէս . Տուն , տան , ի տանէ , տամբ . Տունք , տանց , տամբք. Շուն . շան , ի շանէ , շամբ . Շունք , շանց , շամբք . Տատուն տտան , տտամբ : Անուն եւ ձեղուն բառերը կ'ըլլան . Անուն , անուան , անուամբ . Ձեղուն , ձեղուան , ձեղուամբ : Գարուն , Աշուն կ'ըլլան , գարնան , աշնան : Պաշտօն , կ'ըլլայ պաշտաման , պաշտամամբ . պաշտամունք , պաշտամանց , պաշտամամբք :

Եւ վերջաւորած բառերէն շատերն ունին հոլովման այս ձեւը , ինչպէս . Մարդիկ , մարդկան , ի մարդկանէ , մարդկամբ : Աղջիկ , աղջկան , յաղջկանէ , աղջկամբ . Աղջկունք , աղջկանց, աղջկամբք : Այսպէս նաեւ փոքրիկ , փոքրկան . Տնիկ , տնկան :



## Ժ. ՀՈԼՈՎՈՒՄ

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ու. | Գառն . | Գառնուկ . | Գուզու . |
| Ս. | Գառ-ին . | Գառնուկի . | Գուզունուն : |
| Տ. | Գառ-ին . | Գառնուկի . | Գուզույա . |
| Հ. | զԳառն . | Գառնուկը . | Գուզույու . |
| Բ. | ի Գառ-նէ . (1) | Գառնուկէ . | Գուզուտան . |
| Գ. | Գառ-ամբ . | Գառնուկով . | Գուզու իլէ . |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ու. | Գառ-ինք . | Գառնուկներ . | Գուզուլար . |
| Ս. | Գառ-անց . | Գառնուկներու . | Գուզուլարըն |
| Տ. | Գառ-անց . | Գառնուկներու . | Գուզուլարա . |
| Հ. | զԳառ-ինս . | Գառնուկները . | Գուզուլարը . |
| Բ. | ի Գառ-անց . | Գառնուկներէ . | Գուզուլարտան |
| Գ. | Գառ-ամբք . | Գառնուկներով . | Գուզուլար իլէ. |

Բեռն , ռին , ռանէ , ռամբ . Բեռինք , ռանց , ռամբք .
Դաշն , շին , շանէ , շամբ . Դաշինք , շանց , շամբք .
Եզն , զին , զանէ , զամբ . Եզինք , զանց , զամբք .
Եղն , ղին , ղանէ , ղամբ . Եղինք , ղանց , ղամբք .
Կաթն , թին , թանէ , թամբ . Կաթինք , թանց , թամբք .
Խաշն , շին , շանէ , շամբ . Խաշինք , շանց , շամբք :

(1) Այս հոլովման անուններուն ոմանց բացառականը չառնուր — զոր օրինակ . Ազն , ազին , յազնէ . Մասն , մասին , մասնէ , Հարսն , հարսին , հարսնէ : Ոմանց յոքնակի ուղղականը եւ հայցականը լինին —ունք , —ունս , զոր օրինակ, Թոռն, Թոռունք, Թոռունս . Հարսն , հարսունք , հարսունս . Մասն , մասունք , մասունս . Մատն , մատունք , մատունս . Շուրթն , շրթունք . շրթունս: Ոտն բառին յոքնակին է Ոտք , ոտից , ոտիւք : Ձեռն բառինն է՝ Ձեռք, ձեռաց , ձեռօք :

ՀԱՅՀ-СОРА

## ԺԱ. ՀՈԼՈՎՈՒՄ

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Նեղութ-իւն . | Նեղութիւն . | Տարլըք . |
| Ս. | Նեղութ-եան . | Նեղութեան . | Տարլըղըն . |
| Տ. | Նեղութ-եան . | Նեղութեան . | Տարլըղա . |
| Հ. | զՆեղութիւն . | Նեղութիւնը . | Տարլըղը . |
| Բ. | ի Նեղութ-ենէ . | Նեղութենէ . | Տարլըքտան . |
| Գ. | Նեղութ-եամբ . | Նեղութեամբ . | Տարլըղ իլէ . |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Նեղութ-իւնք . | Նեղութիւններ . | Տարլըքլար . |
| Ս. | Նեղութ-եանց . | Նեղութիւններու . | Տարլըքլարըն . |
| Տ. | Նեղութ-եանց . | Նեղութիւններու . | Տարլըքլարա . |
| Հ. | զՆեղութիւնս . | Նեղութիւնները . | Տարլըքլարը . |
| Բ. | ի Նեղութ-եանց . | Նեղութիւններէ . | Տարլըքլարտան . |
| Գ. | Նեղութ-եամբք . | Նեղութիւններով . | Տարլըքլար իլէ . |

Գիտութիւն, թեան, թենէ, թեամբ · թիւնք, թեանց, թեամբք ։
Մեծութիւն, թեան, թենէ, թեամբ · թիւնք, թեանց, թեամբք ·
Բարութիւն, թեան, թենէ, թեամբ · թիւնք, թեանց, թեամբք ·
Գերութիւն, թեան, թենէ, թեամբ · թիւնք, թեանց, թեամբք ·
Զարութիւն, թեան, թենէ, թեամբ · թիւնք, թեանց, թեամբք ·
Տէրութիւն, թեան, թենէ, թեամբ · թիւնք, թեանց, թեամբք (1) ։

(1) Կան անուններ որ թէպէտ եւ—ն չեն վերջաւորիր, կը հոլովին այս հոլովման պէս, ինչպէս . Արիւն, արեան, արեամբ. Անկիւն, անկեան, կեամբ . Անկիւնք, անկեանց, կեամբք · Սիւն,



## ԺԲ. ՀՈԼՈՎՈՒՄ

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Ոսկր . | Ոսկր . | Քէմիք . |
| Ս. | Ոսկ-եր . | Ոսկրի . | Քէմիյին . |
| Տ. | Ոսկ-եր . | Ոսկրի . | Քէմիյէ . |
| Հ. | զՈսկր . | Ոսկրը . | Քէմիյի . |
| Բ. | յՈսկ-երէ . | Ոսկրէ . | Քէմիքտէն . |
| Գ. | Ոսկ-երբ . | Ոսկրով . | Քէմիյլէ . |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Ոսկ-երք . | Ոսկրներ . | Քէմիքլէր . |
| Ս. | Ոսկ-երաց, ոսկերց . | Ոսկրներու . | Քէմիքլէրին . |
| Տ. | Ոսկ-երաց, ոսկերց . | Ոսկրներու . | Քէմիքլէրէ . |
| Հ. | զՈսկ-երս . | Ոսկրները . | Քէմիքլէրի . |
| Բ. | յՈսկ-երաց, յոսկերց . | Ոսկրներէ . | Քէմիքլէրտէն . |
| Գ. | Ոսկ-երօք, ոսկերբք . | Ոսկրներով . | Քէմիքլէր իլէ . |

Ադդր, դեր, դերէ, դերբ · դերք, դերաց, դերօք ·
Աստղ, տեղ, տեղէ, տեղբ · տեղք, տեղաց, տեղօք ·
Արկղ, կեղ, կեղէ, կեղբ · կեղք, կեղաց, կեղօք ·
Եզր, զեր, զեր, զերբ · զերք, զերաց, զերօք ·
Ուստր, տեր, տերէ, տերբ · տերք, տերաց, տերօք ·
Տարր, րեր, րերէ, րերբ · րերք, րերաց, րերօք (1) ։

սեան, սեամբ · Սիւնք, սեանց, սեամբք . Ջիւն, ձեան, ձեամբ. Կորիւն, կորեան, րեամբ . Կորիւնք, րեանց, րեամբք . Ծնունդ, ծննդեան, ծննդեամբ . յ—ք . Ծնունդք, ծննդոց, ծննդովք · Ժողովուրդ, ժողովրդեան, ժողովրդեամբ · յ—ք . Ժողովուրդ, ժողովրդոց, ժողովրդովք . Կորուստ, կորստեան, կորստեամբ · Փախուստ, փախստեան, փախստեամբ . Սնունդ, սննդեան, սննդեամբ ։ Այս եւ սոցին նման զարտուղութիւնք վարժութեամբ կ'ուսուին ։

(1) Այս հոլովման ձեւն ունին, Ալեւր, ալեր, յալերէ, ալերբ. Աղբեւր, աղբեր, յաղբերէ, աղբերբ · Աղբեւրք կամ Աղբերք, աղբերաց, աղբերօք . Եղջեւր, եղջեր, յեղջերէ, եղջերբ. Եղջիւրք, եղջերաց, եղջերօք ։

## ԳԻՏԵԼԻՔ

19· Հ· Անուններուն հոլովման մէջ գրի ինչ փոփոխութիւն կը տեսնուի ։

Պ· Հայերէն լեզուին կարեւոր կանոնն է որ անուան վերջին վանկին ձայնաւորներէն ոմանք խոտորնակ հոլովներու մէջ կը փոխուին ուրիշ ձայնաւորի ։

20· Հ· Ի՞նչ է խոտորնակ հոլով ։

Պ. Ուղղականէն և հայցականէն զատ միւս հոլովք կը կոչուին խոտորնակ · ուղղականն և հայցականը կը կոչուին ուղիղ հոլով ։

21· Հ· Ո՞ր ձայնաւորներն են որ անուան վերջին վանկին մէջ կը փոխուին ։

Պ· 1· Եթէ անուան մը վերջին բաղաձայնէն առաջ եա ձայնաւորը կայ, խոտորնակ հոլովներու մէջ եա կը փոխուի ե ի · զոր օրինակ ։

Ատեան, ատենի, ատենէ, ատենիւ · յոգ· Ատեանք, ատենից, ատենիւք ·

Որեար, որերոյ, որերով·

Որդեակ, որդեկի, որդեկի, որդեկաւ, եւն·

Սենեակ, սենեկի, սենեկաւ, եւն·

Եղեամն, եղեման, եղեմամբ, եւն·

Սեամ, սեմոյ, սեմով, եւն ։

2. Եթէ վերջին բաղաձայնէն առաջ է ձայնաւորը կայ, է կը փոխուի ի ի, ինչպէս ։

Մէգ, միգի, ի միգէ, միգաւ, եւն·
Հանդէս, հանդիսի, հանդիսիւ, եւն ։



3· Եթէ ոյ գիրն է, ոյ կը փոխուի ու ի, ինչպէս·

Ողջոյն, ողջունի, ողջունիւ, եւն·
Գոյն, գունոյ, գունով, եւն·

4· Եթէ ի կամ ու գիրն է, ի, ու կը թողուին խոտորնակ հոլովներուն մէջ, զորօրինակ·

Գիր, գրոյ, գրով·
Ջուր, ջրոյ, ջրով·
Դուռն, դրան, դրամբ, եւն·
Ուսումն, ուսման, ուսմամբ, եւն·

### ԱՆԿԱՆՈՆ ՀՈԼՈՎՄՈՒՆՔ

22· Հ· Ի՞նչ են անկանոն հոլովմունք ։

Պ· Կան անուններ որ վերը ցուցուած 12 հոլովմանց ձեւերէն տարբեր կը հոլովին, ուստի և անոնց հոլովմունքը կը կոչուին անկանոն ։

23. Հ· Ո՞ր անուններն են որոց հոլովման ձեւն անկանոն է ։

Պ· Հոլովման անկանոն ձեւ ունեցող անունները են, Այր, Հայր, Մայր, Քոյր, Կին, Գիւղ կամ Գեղ, Օր, Տիւ ։

24· Հ· Ի՞նչպէս կը հոլովին Այր և Հայր ։

Պ· Այր և Հայր կը հոլովին այսպէս ·

| | Եզ. | Յոգ. | Եզ. | Յոգ. |
|---|---|---|---|---|
| Ո· | Այր · | Արք · | Հայր · | Հարք · |
| Ս· | Առն · | Արանց · | Հօր · | Հարց · |
| Տ· | Առն · | Արանց · | Հօր · | Հարց · |
| Հ· | զԱյր · | զԱրս · | զՀայր · | զՀարս · |
| Բ. | յԱռնէ · | յԱրանց · | ի Հօրէ · | ի Հարց · |
| Գ· | Արամբ · | Արամբք · | Հարբ · | Հարբք · |

Այսպէս կը հոլովին

Տէր, տեառն, ի տեառնէ, տերամբ։ Տեարք, տերանց, տերամբք։

Եղբայր, եղբօր, յեղբօրէ, եղբարբ։ Եղբարք, եղբարց, եղբարբք։

Մայր, մօր, ի մօրէ, մարբ։ Մարք, մարց, մարբք։

25. Հ. Ի՞նչպէս կը հոլովին Քոյր և Կին։
Պ. Քոյր և Կին կը հոլովին այսպէս.

| | Եզ. | Յոգ. | Եզ. | Յոգ. |
|---|---|---|---|---|
| Ո. | Քոյր. | Քորք. | Կին. | Կանայք. |
| Ս. | Քեռ. | Քերց. | Կնոջ. | Կանանց. |
| Տ. | Քեռ. | Քերց. | Կնոջ. | Կանանց. |
| Հ. | զՔոյր. | զՔորս. | զԿին. | զԿանայս. |
| Բ. | ի Քեռէ. | ի Քերց. | ի Կնոջէ. | ի Կանանց. |
| Գ. | Քերբ. | Քերբք. | Կանամբ, կնաւ։ | Կանամբք. |

26. Հ. Ի՞նչպէս կը հոլովին Գիւղ և Օր։
Պ. Գիւղ և Օր կը հոլովին այսպէս.

| | Եզ. | Յոգ. | Եզ. | Յոգ. |
|---|---|---|---|---|
| Ո. | Գիւղ. | Գիւղք. | Օր. | Աւուրք։ |
| Ս. | Գեղջ. | Գիւղից. | Աւուր. | Աւուրց. |
| Տ. | Գեղջ. | Գիւղից. | Աւուր. | Աւուրց։ |
| Հ. | զԳիւղ. | զԳիւղս. | զՕր. | զԱւուրս. |
| Բ. | ի Գեղջէ. | ի Գիւղից. | յՕրէ. | յԱւուրց. |
| Գ. | Գիւղիւ. | Գիւղիւք. | Աւուրբ. | Աւուրբք. |

27. Հ. Ի՞նչպէս կը հոլովի Տիւ։
Պ. Տիւ կը հոլովի այսպէս.



| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Տիւ. | Տիւք. |
| Ս. | Տուընջեան. | Տուընջեանց. |
| Տ. | Տուընջեան. | Տուընջեանց. |
| Հ. | զՏիւ. | զՏիւս. |
| Բ. | ի Տուընջենէ, ի տուէ. | ի Տուընջեանց. |
| Գ. | Տուընջեամբ. | Տուընջեամբք. |

28. Հ. Ազգի կամ գաւառի մը բնակիչները ցուցնող եայ վերջաւորած անուններ ի՞նչպէս կը հոլովին։

Պ. Ազգի կամ գաւառի մը բնակիչները ցուցնող եայ վերջաւորեալ անուանք կը հոլովին այսպէս։

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Արեւելեայ. | Արեւելեայք. |
| Ս. | Արեւելւոյ. | Արեւելեայց. |
| Տ. | Արեւելւոյ. | Արեւելեայց. |
| Հ. | զԱրեւելեայ. | զԱրեւելեայս. |
| Բ. | յԱրեւելւոյ. | յԱրեւելեայց. |
| Գ. | Արեւելեաւ. | Արեւելեօք. |

# ԳԼՈՒԽ Բ.

## ԱԾԱԿԱՆ

29. Հ. Ածականն ի՞նչ է։

Պ. Ածական կ'ըսուին այն բառերը որ կը ցուցընեն գոյականին որպիսութիւնը և քանակութիւնը կամ թիւը. այսինքն կը ցուցնեն թէ գոյականն ինչպէս և քանի՛ է. զոր օրինակ, կարմիր հանդերձ, երկու հանդերձ, խօսքերուն մէջ, կարմիր և երկու ածական են. վասն զի կարմիր կը ցուցնէ հանդերձին որպիսութիւնը, այսինքն թէ ինչպէս է հանդերձը. իսկ երկու՝ կը ցուցնէ հանդերձին քանակութիւնը կամ թիւը, այսինքն թէ քանի՛ է հանդերձը։

30. Հ. Գոյականը և ածականը որոշելու կերպն ի՞նչ է։

Պ. Գոյականն և ածականն իրարմէ որոշելու դիւրին կերպն է՝ բառին քով բան (շէյ) բառը դնել. եթէ կը յարմարի, այն բառն ածական է. եթէ չյարմարիր, բառը գոյական է. զոր օրինակ. չըսուիր, մարդ բան, քաղաք բան, տուն բան. ապա՝ մարդ, քաղաք, տուն գոյական են. բայց կ'ըսուի, բարի բան, չար բան, մեծ բան. ապա՝ բարի, չար, մեծ, ածական են։

31. Հ. Ածականք ընդհանրապէս ո՞ւր կը դրուին։

Պ. Ածականք ընդհանրապէս կը դրուին գոյականէն ետքը, և գոյականին հոլովը կ'առնուն. զոր օրինակ՝ Այր իմաստուն, իմաստուն մարդ։



Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Այր իմաստուն. | իմաստուն մարդ. | Աքըլլը ատէմ. |
| Ս. | Առն իմաստնոյ. | իմաստուն մարդու. | Աքըլլը ատէմին. |
| Տ. | Առն իմաստնոյ. | իմաստուն մարդու. | Աքըլլը ատէմէ. |
| Հ. | զԱյր իմաստուն. | իմաստուն մարդը. | Աքըլլը ատէմի. |
| Բ. | յԱռնէ իմաստնոյ. | իմաստուն մարդէ. | Աքըլլը ատէմտէն. |
| Գ. | Արամբ իմաստնով. | իմաստուն մարդով. | Աքըլլը ատէմիլէ. |

Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ո. | Արք իմաստունք. | իմաստուն մարդիկ. |
| Ս. | Արանց իմաստնոց. | իմաստուն մարդոց. |
| Տ. | Արանց իմաստնոց. | իմաստուն մարդոց. |
| Հ. | զԱրս իմաստունս. | իմաստուն մարդիկը. |
| Բ. | յԱրանց իմաստնոց. | իմաստուն մարդերէ. |
| Գ. | Արամբք իմաստնովք. | իմաստուն մարդերով. |

32. Հ. Ածականը կրնա՞յ գոյականէն առաջ դրուիլ։

Պ. Հարկ է շատ անգամ ածականը գոյականէն առաջ դնել, յայնժամ ածականը կը մնայ անփոփոխ, զոր օրինակ.

| Եզակի | Յոգնակի |
|---|---|
| Հաստատուն բարեկամ. | Հաստատուն բարեկամք. |
| Հաստատուն բարեկամի. | Հաստատուն բարեկամաց. |
| ի Հաստատուն բարեկամէ. | ի Հաստատուն բարեկամաց. |
| Հաստատուն բարեկամաւ. | Հաստատուն բարեկամօք. |

33. Հ. Միավանկ ածականաց վրայ ի՞նչ գիտելիք կայ։

Պ. Միավանկ ածականք եթէ գոյականէն առաջ ևս դրուին, կրնան գոյականին հոլովն առնուլ. զոր օրինակ, Մեծ տուն, մեծի տան, մեծաւ տամբ.

Նոր օրէնք, Նորոյ օրինաց · Քաջ այր, քաջի առն, քաջաց արանց · Սուրբ քաղաք, սրբոյ քաղաքի եւայլն :

34· Հ· Գոյականին քանակութիւնը կամ թիւը ցուցնող ածականք ի՞նչ կը կոչուին :

Պ· Գոյականին քանակութիւնը կամ թիւը ցուցնող ածականք կը կոչուին թուական ածական :

35· Հ· Թուական ածականք քանի՞ տեսակ են ։

Պ· Թուական ածականք երեք տեսակ են, բացարձակ, դասական եւ անջատական :

36· Հ· Բացարձակներն ի՞նչ կը ցուցնեն ։

Պ· Բացարձակները կը ցուցնեն գոյականին թիւը, այսինքն թէ՝ գոյականով նշանակուած իրը քանի՞ է ։ Ուստի բացարձակ թուական ածական են մի, երկու, երեք, չորս, մինչեւ հազար եւ բիւր ։

37· Հ· Մէ, երկու, երեք, չորս ի՞նչպէս կը հոլովին ։

Պ. Մէ, երկու, երեք, չորս կը հոլովին այսպէս ·

| | Եզ. | Յոք. | Եզ. | Յոք. |
|---|---|---|---|---|
| Ո· | Մի · | Երկու · | Երեք · | Չորք · |
| Ս. | Միոյ, միոջ · | Երկուց · | Երից · | Չորից · |
| Տ· | Միոյ, միում · | Երկուց · | Երից · | Չորից · |
| Հ· | զՄի · | զԵրկուս · | զԵրիս · | զՉորս · |
| Բ· | ի Միոջէ · | Երկուց · | յ Երից · | ի Չորից |
| Գ· | Միով · | Երկուք · | Երիւք · | Չորիւք · |

Մէ յոքնակի չունի, իսկ երկու, երեք, չորս եզակի չունին ։

38· Հ· Հինգէն մինչեւ ութ ի՞նչպէս կը հոլովին ։

Պ· Հինգէն մինչեւ ութ թէ եզակի եւ թէ յոգնակի ձեւ ունին, եւ կը հոլովին հետեւեալ կերպով։



Հինգ, պեշ — Վեց, ալթը

| | Եզ. | Յոք. | Եզ. | Յոք. |
|---|---|---|---|---|
| Ո· | Հինգ · | Հինգք · | Վեց · | Վեցք · |
| Ս· | Հնգի · | Հնգից · | Վեցի · | Վեցից · |
| Տ· | Հնգի · | Հնգից · | Վեցի · | Վեցից · |
| Հ· | զՀինգ · | զՀինգս · | զՎեց · | զՎեցս · |
| Բ· | ի Հնգէ · | ի Հնգից · | ի Վեցէ · | ի Վեցից · |
| Գ· | Հնգիւ · | Հնգօք · | Վեցիւ · | Վեցիւք · |

Եօթն, եէտի — Ութ, սէքիզ

| | Եզ. | Յոք. | Եզ. | Յոք. |
|---|---|---|---|---|
| Ո· | Եօթն[1] · | Եօթանք · | Ութ · | Ութք · |
| Ս· | Եօթան · | Եօթանց · | Ութի · | Ութից · |
| Տ· | Եօթան · | Եօթանց · | Ութի · | Ութից · |
| Հ· | զԵօթն · | զԵօթանս · | զՈւթ · | զՈւթս · |
| Բ· | յ Եօթանէ · | յ Եօթանց · | յ Ութէ · | յ Ութից · |
| Գ· | Եօթամբ · | Եօթամբք · | Ութիւ · | Ութիւք · |

39. Հ· Ինն եւ տասն ի՞նչպէս կը հոլովին ։

Պ· Ինն եւ տասն կը հոլովին այսպէս ·

| | Եզ. | Յոք. | Եզ. | Յոք. |
|---|---|---|---|---|
| Ո· | Ինն · | Իննունք · | Տասն · | Տասունք · |
| Ս. | Ըննի · | Ըննից · | Տասին · | Տասանց · |
| Տ· | Ըննի · | Ըննից · | Տասին · | Տասանց · |
| Հ· | զԻնն · | զԻննունս · | զՏասն · | զՏասունս · |
| Բ· | յ Ըննէ · | յ Ըննից · | ի Տասնէ · | ի Տասանց · |
| Գ· | Ըննիւ · | Ըննիւք · | Տասամբ · | Տասամբք · |

40· Հ· Մետասան ի՞նչպէս կը հոլովի ։

Պ· Մետասան, տասնումէկ, կը հոլովի այսպէս·

[1] Եօթն բառին ուղղագրութիւնն է Է-թն, Է-թան, եւայլն։

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Մետասան . | Մետասանք . |
| Ս. | Մետասանի . | Մետասանից . |
| Տ. | Մետասանի . | Մետասանից . |
| Հ. | զՄետասան . | զՄետասանս . |
| Բ. | ի Մետասանէ . | ի Մետասանից . |
| Գ. | Մետասանիւ . | Մետասանիւք . |

Մետասան ի պէս կը հոլովին՝ Երկոտասան, տասուերկու. Երեքտասան, տասուիրեք. Չորեքտասան, տասնուչորս. Հնգետասան, տասնուհինգ. Վեշտասան, տասնուվեց:

41. Հ. Եօթնեւտասան ի՞նչպէս կը հոլովի:

Պ. Եօթնեւտասան, տասնուեօթը, կը հոլովի այսպէս.

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Եօթնեւտասան . | Եօթնեւտասանք . |
| Ս. | Եօթնեւտասնին . | Եօթնեւտասանց . |
| Տ. | Եօթնեւտասնին . | Եօթնեւտասանց . |
| Հ. | զԵօթնեւտասան . | զԵօթնեւտասանս . |
| Բ. | յԵօթնեւտասանէ . | յԵօթնեւտասանց . |
| Գ. | Եօթնեւտասամբ . | Եօթնեւտասամբք . |

Այսպէս կը հոլովին Ութեւտասան, տասնեւութ, և Իննեւտասան, տասնեւինը (1):

42. Հ. Քսան ի՞նչպէս կը հոլովի:

Պ. Քսան կը հոլովի այսպէս.

(1) Եօթնեւտասան, ութեւտասան, իննեւտասան, կը գրուին ըստ նախնեաց նաեւ Եօթնեւտասն, Ութեւտասն, Իննեւտասն:



| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Քսան . | Քսանք . |
| Ս. | Քսանի . | Քսանից . |
| Տ. | Քսանի . | Քսանից . |
| Հ. | զՔսան . | զՔսանս . |
| Բ. | ի Քսանէ . | ի Քսանից . |
| Գ. | Քսանիւ . | Քսանիւք . |

Այսպէս կը հոլովին նաեւ Երեսուն, Քառասուն, Յիսուն, Վաթսուն, Եօթանասուն, Ութսուն, Իննսուն, բայց ի հայցականէն միւս հոլովներուն մէջ ու վանկը կորուսանելով, այսպէս, Երեսուն, Երեսնի, եւն:

43. Հ. Հարիւր (1) ի՞նչպէս կը հոլովի:

Պ. Հարիւր կը հոլովի այսպէս.

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Հարիւր . | Հարիւրք . |
| Ս. | Հարիւրոյ . | Հարիւրոց . |
| Տ. | Հարիւրոյ . | Հարիւրոց . |
| Հ. | զՀարիւր . | զՀարիւրս . |
| Բ. | ի Հարիւրոյ . | ի Հարիւրոց . |
| Գ. | Հարիւրով . | Հարիւրովք . |

Այսպէս կը հոլովին Երկերիւր, Երեքհարիւր, Չորեքհարիւր, Հնգհարիւր, Վեցհարիւր, Եօթնհարիւր, Ութհարիւր, Իննհարիւր:

44. Հ. Հազար և Բիւր ի՞նչպէս կը հոլովին:

Պ. Հազար և Բիւր կը հոլովին այսպէս.

(1) Հարիւր բառին բուն ուղղագրութիւնն է՝ հարեւր, հարիւրոյ, եւայլն: Նոյնպէս բիւր՝ կը գրուի բեւր, բիւրու, եւայլն:

| | Եզ. | Յոգ. | Եզ. | Յոգ. |
|---|---|---|---|---|
| Ո. | Հազար . | Հազարք . | Բիւր . | Բիւրք . |
| Ս. | Հազարի . | Հազարաց . | Բիւրու . | Բիւրուց . |
| Տ. | Հազարի . | Հազարաց . | Բիւրու . | Բիւրուց . |
| Հ. | զՀազար . | զՀազարս . | զԲիւր . | զԲիւրս . |
| Բ. | ի Հազարէ . | ի Հազարաց . | ի Բիւրէ . | ի Բիւրուց . |
| Գ. | Հազարաւ . | Հազարօք . | Բիւրու . | Բիւրուք . |

45. Հ. Դասական թուականք ի՞նչ կը ցուցնեն ։

Պ. Դասական թուականք կը ցուցնեն գոյականին կարգը, այսինքն թէ գոյականով նշանակուած իրը շարքերուն մէջ քանիերորդ է ։

46. Հ. Դասականք ի՞նչպէս կը շինուին ։

Պ. Բաց ի Ա էն, միւս Բացարձակ թուականներուն վերջը՝ աւելցնելով մինչեւ Չորք, րորդ մասնիկը, իսկ Մնացեալներուն վերջը՝ երորդ մասնիկը ։

| | |
|---|---|
| Երկու, երկրորդ ։ | Չորք, չորրորդ ։ |
| Երեք, երրորդ ։ | Հինգ, հինգերորդ ։ |

47. Հ. Դասական թուականք ի՞նչպէս կը հոլովին։

Պ. Դասական թուականք կը հոլովին այսպէս.

Երկրորդ, եւ այլն

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Երկրորդ . | Երկրորդք . |
| Ս. | Երկրորդի . | Երկրորդաց . |
| Տ. | Երկրորդի կամ երկրորդում . | Երկրորդաց . |
| Հ. | զԵրկրորդ . | զԵրկրորդս . |
| Բ. | յԵրկրորդէ . | յԵրկրորդաց . |
| Գ. | Երկրորդաւ . | Երկրորդօք . |

Այսպէս կը հոլովին միւս Դասականք ։



48. Հ. Փոխանակ Մէկերորդի ի՞նչ կ'ըսուի.

Պ. Փոխանակ Մէկերորդի կ'ըսուի Առաջներորդ կամ Առաջին որ կը հոլովի այսպէս.

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Առաջին . | Առաջինք . |
| Ս. | Առաջնոյ . | Առաջնոց . |
| Տ. | Առաջնոյ, առաջնում . | Առաջնոց . |
| Հ. | զԱռաջին . | զԱռաջինս . |
| Բ. | յԱռաջնմէ, յառաջնոյ . | յԱռաջնոց . |
| Գ. | Առաջնով . | Առաջնովք . |

Այսպէս կը հոլովի նաեւ Վերջին ։

49. Հ. Անձներականք ի՞նչպէս կը շինուին ։

Պ. Անձներական թուականները կը շինուին Բացարձակներուն վրայ Եքին կամ Եքեան մասնկան յաւելմամբ, և ցուցուած թուոյն ամէնն ալ կը նշանակեն, զոր օրինակ. երեքին՝ երեքն ալ, չորեքին՝ չորսն ալ, տասնեքին՝ տասն ալ ըսել է ։ Երկուքին կ'ըսուի, և ոչ երկեքին ։

50. Հ. Անձներական թուականք ի՞նչ թիւ են, և ի՞նչպէս կը հոլովին ։

Պ. Անձներական թուականք յոգնակի միայն են, և կը հոլովին այսպէս.

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Երկոքին, երկոքեան . | Երեքին, երեքեան . |
| Ս. | Երկոցունց, երկոցուն . | Երեցունց . |
| Տ. | Երկոցունց, երկոցուն . | Երեցունց . |
| Հ. | զԵրկոսին, զերկոսեան . | զԵրեսին, զերեսեան . |
| Բ. | յԵրկոցունց . | յԵրեցունց . |
| Գ. | Երկոքումբք . | Երեքումբք . |

51. Հ. Ամենեքն, ամենեքեան ինչ կը նշանակէ։

Պ. Ամենեքն կամ ամենեքեան կը նշանակէ ամենն ալ, և գոյականաբար միայն կը գործածուի։

52. Հ. Թուական ածականք ուր կը դրուին և ինչպէս կը հոլովին։

Պ. Բացարձակ թուականք ընդհանրապէս գոյականէն առջը դրուելով, գոյականին հոլովը կ'առնուն։

53. Հ. Բացարձակ թուականք եզակի՞ թէ յոգնակի գոյական կ'ուզեն։

Պ. Մի, կ'ուզէ եզակի գոյական, երկու, երեք, չորք կ'ուզեն յոգնակի գոյական, և կը համաձայնին գոյականին հետ՝ թէ յառաջ և թէ վերջը դրուին, զոր օրինակ.

### Գոյականէն առաջ

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Մի այր. | Երկու արք. |
| Ս. | Միոյ առն. | Երկուց արանց. |
| Տ. | Միում առն. | Երկուց արանց. |
| Հ. | զՄի այր. | զԵրկուս արս. |
| Բ. | ի Միոջէ առնէ. | յԵրկուց արանց. |
| Գ. | Միով արամբ. | Երկուք արամբք. |

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Երեք արք. | Չորք արք. |
| Ս. | Երից արանց. | Չորից արանց. |
| Տ. | Երից արանց. | Չորից արանց. |
| Հ. | զԵրիս արս. | զՉորս արս. |
| Բ. | յԵրից արանց. | ի Չորից արանց. |
| Գ. | Երիւք արամբք. | Չորիւք արամբք. |



### Գոյականէն ետքը

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Այր մի. | Արք երկու. |
| Ս. | Առն միոյ կամ միոջ. | Արանց երկուց. |
| Տ. | Առն միում. | Արանց երկուց. |
| Հ. | զԱյր մի. | զԱրս երկուս. |
| Բ. | յԱռնէ միոջէ. | յԱրանց երկուց. |
| Գ. | Արամբ միով. | Արամբք երկուք. |

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Արք երեք. | Արք չորք. |
| Ս. | Արանց երից. | Արանց չորից. |
| Տ. | Արանց երից. | Արանց չորից. |
| Հ. | զԱրս երիս. | զԱրս չորս. |
| Բ. | յԱրանց երից. | յԱրանց չորից. |
| Գ. | Արամբք երիւք. | Արամբք չորիւք. |

54. Հ. Հինգէն անդին բացարձակ թուականք ուր կը դրուին և ինչպէս կը համաձայնին գոյականին հետ։

Պ. Հինգէն անդին բացարձակ թուականք կրնան գոյականէն թէ առաջ և թէ ետքը դրուիլ. եթէ առաջ դրուին, կը մնան անփոփոխ և գոյականը կրնայ թէ եզակի և թէ յոգնակի դրուիլ. իսկ թէ ետքը դրուին, յոգնակի գոյական կ'ուզեն և անոր հետ կը համաձայնին։

| | Գոյականէն առաջ | | Գոյականէն ետքը |
|---|---|---|---|
| Ո. | Հինգ այր | կամ արք. | Արք հինգ (ոչ հինգք). |
| Ս. | Հինգ առն | » արանց. | Արանց հնգից. |
| Տ. | Հինգ առն | » արանց. | Արանց հնգից. |
| Հ. | զՀինգ այր | » արս. | զԱրս հինգ (ոչ հինգս). |
| Բ. | ի Հինգ առնէ | » արանց. | յԱրանց հնգից. |
| Գ. | Հինգ արամբ | » արամբք. | Արամբք հնգօք. |

55․ Հ․ Դասականք ո՞ւր կը դրուին և ի՞նչպէս կը համաձայնին ։

Պ․ Դասականք եւս գոյականէն ետքը, երբեմն եւս առաջ դրուելով, միշտ եզակի գոյական կ'ուզեն, և գոյականին հոլովը կ'առնուն, զոր օրինակ.

| | | | |
|---|---|---|---|
| Ո․ | Երկրորդ օր | կամ | Օր երկրորդ ․ |
| Ս․ | Երկրորդ աւուր | » | Աւուր երկրորդի ․ |
| Տ․ | Երկրորդ աւուր | » | Աւուր երկրորդի ․ |
| Հ․ | զԵրկրորդ օր | » | զՕր երկրորդ ․ |
| Բ․ | յԵրկրորդ օրէ | » | յՕրէ երկրորդէ ․ |
| Գ․ | Երկրորդ աւուրբ | » | Աւուրբ երկրորդաւ ․ |

56․ Հ․ Անձներականք ո՞ւր կը դրուին և ի՞նչպէս կը համաձայնին ։

Պ․ Անձներականք գոյականէն ետքը, երբեմն նաեւ առաջ դրուելով, միշտ յոգնակի գոյական կ'ուզեն, և գոյականին հոլովը կ'առնուն ։

| | Առաջ | Ետքը |
|---|---|---|
| Ո․ | Երկոքեան որդիք ․ | Որդիք երկոքեան ․ |
| Ս․ | Երկոցունց որդւոց ․ | Որդւոց երկոցունց ․ |
| Տ․ | Երկոցունց որդւոց ․ | Որդւոց երկոցունց ․ |
| Հ․ | զԵրկոսեան որդիս ․ | զՈրդիս երկոսեան ․ |
| Բ․ | յԵրկոցունց որդւոց ․ | յՈրդւոց երկոցունց ․ |
| Գ․ | Երկոքումբք որդւովք ․ | Որդւովք երկոքումբք ․ |

### ԱՆՈՐՈՇ ԿԱՄ ՄԻՋԱԿ ԱԾԱԿԱՆՆԵՐ

57․ Հ․ Ուրիշ ի՞նչ տեսակ ածական կայ ։

Պ. Կան ուրիշ տեսակ ածականներ որ անորոշ կամ միջակ կը կոչուին, և են ․

Ամենայն, ամէն ․ այլ, ուրիշ ․ իւրաքանչիւր, ամէն մէկ ․ միւս, միւս ․ ոմն, ոք, (մը՝ անձ) ․ իմն, ինչ, (մը՝ իր) ․ նոյն ․ ո՞վ, ո՞ր, ո՞ ։



58․ Հ․ Ամենայն և այլ ի՞նչպէս կը հոլովին ։

Պ․ Ամենայն գրեթէ միշտ եզակի կը գործածուի, և կը հոլովի առաջին հոլովման պէս, Այլ կը հոլովի չորրորդ հոլովման պէս, զոր օրինակ.

| | Եզակի | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|---|
| Ո․ | Ամենայն ․ | Այլ ․ | Այլք ․ |
| Ս․ | Ամենայնի ․ | Այլոյ ․ | Այլոց ․ |
| Տ․ | Ամենայնի ․ | Այլում ․ | Այլոց ․ |
| Հ․ | զԱմենայն ․ | զԱյլ ․ | զԱյլս ․ |
| Բ․ | յԱմենայնէ ․ | յԱյլմէ ․ | յԱյլոց ․ |
| Գ․ | Ամենայնիւ ․ | Այլով ․ | Այլովք ․ |

Իւրաքանչիւր և միւս (ըստ հին ուղղագրութեան՝ միւս), կը հոլովին այլին պէս ։

59․ Հ. Ի՞նչպէս կը հոլովին ոմն, ոք ։

Պ․ Ոմն, ոք, կը հոլովին այսպէս.

| | Եզ. | Յոգ. | Եզ. | Յոգ. |
|---|---|---|---|---|
| Ո․ | Ոմն ․ | Ոմանք ․ | Ոք ․ | Ոմանք ․ |
| Ս․ | Ուրումն ․ | Ոմանց ․ | Ուրուք ․ | Ոմանց ․ |
| Տ․ | Ումեմն ․ | Ոմանց ․ | Ումեք ․ | Ոմանց ․ |
| Հ․ | զՈմն ․ | զՈմանս ․ | զՈք ․ | զՈմանս ․ |
| Բ․ | յՈւմեմնէ ․ | յՈմանց ․ | յՈւմեքէ ․ | յՈմանց ․ |
| Գ․ | Ոմամբ ․ | Ոմամբք ․ | Ոմամբ ․ | Ոմամբք ․ |

60․ Հ․ Ի՞նչպէս կը հոլովին իմն, ինչ, նոյն ։

Պ․ Իմն, ինչ, նոյն, կը հոլովին այսպէս

| | Եզ. և Յոգ․ | Եզ. | Յոգ. |
|---|---|---|---|
| Ո․ | Իմն, ինչ ․ | Նոյն ․ | Նոքին ․ |
| Ս․ | Իրիք ․ | Նորին ․ | Նոցին, նոցուն ․ |
| Տ․ | Իմիք ․ | Նմին ․ | Նոցին, նոցունց ․ |
| Հ․ | զԻմն, զինչ ․ | զՆոյն ․ | զՆոսին ․ |
| Բ․ | յԻմեքէ ․ | ի Նմին ․ | ի Նոցունց ․ |
| Գ․ | Իւիք ․ | Նովին, Նովիմբ ․ | Նովիմբք, նոքիմբք, նոքումբք ․ |

Այսպէս կը հոլովին նաեւ սոյն, դոյն ։

61. Հ. Ի՞նչպէս կը հոլովին ո՞վ, ո՞, ո՞ր, զի՞նչ։

Պ. Ո՞վ կամ ո՞, ո՞ր, զի՞նչ կը հոլովին այսպէս.

| | Եզ. | Յոգ. | Եզ. | Յոգ. | Եզ. |
|---|---|---|---|---|---|
| Ու. | Ո՞վ, ո՞. | Ո՞յք. | Ո՞ր. | Ո՞րք. | Զի՞նչ. |
| | Ո՞յր. | Ո՞յց. | Որո՞յ. | Որո՞ց. | Է՞ր. |
| Տ. | Ո՞ւմ. | Ո՞յց. | Որո՞ւմ. | Որո՞ց. | Ի՞մ. |
| Հ. | զՈ՞վ, զո՞. | զՈ՞յս. | զՈ՞ր. | զՈ՞րս. | Զի՞նչ. |
| Բ. | յՈւմէ՞. | յՈ՞յց. | յՈրմէ՞. | յՈրո՞ց. | Առ իմէ՞. |
| Գ. | Որո՞վ. | Որո՞վք. | Որո՞վ. | Որո՞վք. | Ի՞ւ. |

62. Հ. Այլ ի՞նչպէս կը գործածուի գոյականին հետ ։

Պ. Այլ գոյականէն թէ առաջ և թէ՝ ետքը գրուելով կը հոլովի ի միասին.

| | | | |
|---|---|---|---|
| Ու. | Այլ այր | կամ | Այր այլ. |
| Ս. | Այլոյ առն | » | Առն այլոյ. |
| Տ. | Այլում առն | » | Առն այլում |
| Հ. | զԱյլ այր | » | զԱյր այլ. |
| Բ. | յԱյլմէ առնէ | » | յԱռնէ այլմէ. |
| Գ. | Այլով արամբ | » | Արամբ այլով. |

Նոյնպէս յոգնակին.

Այլ արք, այլոց արանց, այլովք արամբք, կամ, Արք այլք, արանց այլոց, արամբք այլովք ։

63. Հ. Միւս ի՞նչպէս կը գործածուի գոյականին հետ ։

Պ. Միւս եզակի գոյական կ՚ուզէ, և առաջ գրուելով՝ կը համաձայնի գոյականին հետ. զոր օրինակ,

Միւս ակն, միւսոյ ական, միւսում ական, ի միւսմէ ականէ, միւսով ականբ ։



64. Հ. Իւրաքանչիւր ի՞նչպէս կը գործածուի գոյականին հետ ։

Պ. Իւրաքանչիւր եւս եզակի գոյական կ՚ուզէ, և ընդհանրապէս առաջ գրուելով կը մնայ անփոփոխ. ինչպէս,

Իւրաքանչիւր այր, իւրաքանչիւր առն, իւրաքանչիւր արամբ ։

65. Հ. Ոմն, ոք ի՞նչպէս կը գործածուին գոյականի հետ ։

Պ. Ոմն, ոք ընդհանրապէս գոյականէն առաջ գրուելով կը հոլովին ի միասին.

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ու. | Այր ոմն, ոք. | Արք ոմանք. |
| Ս. | Առն ուրումն, ուրուք. | Արանց ոմանց. |
| Տ. | Առն ումեմն, ումեք. | Արանց ոմանց. |
| Հ. | զԱյր ոմն, ոք. | զԱրս ոմանս. |
| Բ. | յԱռնէ ումեմնէ, ումեքէ. | յԱրանց ոմանց. |
| Գ. | Արամբ ոմամբ. | Արամբք ոմամբք. |

66. Հ. Իմն, ինչ ի՞նչպէս կը գործածուին գոյականի հետ ։

Պ. Իմն, ինչ ընդհանրապէս գոյականէն ետքը գրուելով եզակիին մէջ կը համաձայնին, յոգնակիին մէջ կը մնան անփոփոխ, զոր օրինակ ։

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ու. | Գործ իմն, ինչ. | Գործք ինչ. |
| Ս. | Գործոյ իրիք. | Գործոց » |
| Տ. | Գործոյ իմիք. | Գործոց » |
| Հ. | զԳործ իմն, ինչ. | զԳործս » |
| Բ. | ի Գործոյ իմեքէ. | ի Գործոց » |
| Գ. | Գործով իւիք. | Գործովք » |

67. Հ. Նոյն ի՞նչպէս կը գործածուի գոյականի հետ ։

Պ. Նոյն, եզակի և յոգնակի գոյականէ առաջ գրուելով կը հոլովի ի միասին. ինչպէս ։

Նոյն բան, նորին բանի, նմին բանի, ի նմին բանէ, նովին բանիւ. Նոյն բանք, նոցին բանից, ի նոցին բանից, նովին բանիւք ։

68. Հ. Ո՞ր և զի՞նչ ի՞նչպէս կը գործածուին գոյականի հետ ։

Պ. Ո՞ր, գոյականէն առաջ գրուելով՝ կը հոլովի ի միասին.

Ո՞ր տուն, որո՞յ տան, որո՞ւմ տան, յորմէ՞ տանէ, որո՞վ տամբ. Ո՞ր տունք, որո՞ց տանց, որո՞վք տամբք ։

Զի՞նչ կը գործածուի ինչ բառին հետ, և յառաջ գրուելով կը համաձայնի. զոր օրինակ.

Զի՞նչ ինչ, է՞ր իրիք, ի՞մ իմիք, զի՞նչ ինչ, յիմէ իմեքէ, ի՞ւ իւիք ։

Զինչ ուրիշ անուններուն հետ ուղղական և հայցական միայն կը գործածուի.

Զի՞նչ անուն է քո. Զի՛նչ գործ գործեցեր դու մեզ, որդեակ ։

69. Հ. Ո՞ր միշտ հարցակա՞ն է ։

Պ. Որ կը գործածուի նաև առանց հարցման, և կը նշանակէ, ո՛ր . . . որ. հեր հանկը.

Յոր տուն մտանիցէք, անդ ագջիք. Որ տուն որ կը մտնէք, հոն օթեւան ըրէք ։



70. Հ. Ոք բառին վրայ ի՞նչ դիտելիք կայ ։

Պ. Ոք, մէկը, մարդ մը, նշանակութեամբ կը գործածուի այլ, իւրաքանչիւր, որ, « բառերուն հետ, և կը հոլովի ի միասին. ինչպէս ։

Այլ ոք, ուրիշ մը. այլոյ ուրուք, ուրիշի մը. յայլմէ ումեքէ, ուրիշէ մը. այլով ումամբ, ուրիշով մը. Այլք ոմանք, այլոց ոմանց, եւն ։

Իւրաքանչիւր ոք, ամէն մէկը. իւրաքանչիւր ուրուք, ամէն մէկուն. յիւրաքանչիւր ումեքէ, ամէն մէկէն ։

Որ կամ « ոք, ով որ. ոյր ուրուք, որուն որ. ում ումեք, որուն որ. յումէ ումեքէ, որմէ որ. որով ումամբ, որով որ. Ոյք ոմանք, որոց ոմանց, եւն ։

71. Հ. Միմեանց, իրերաց փոխադարձ դերանուանց վրայ ի՞նչ դիտելիք կայ ։

Պ. Միմեանց, իրերաց փոխադարձ դերանուանք իբրև գոյական կը գործածուին, ուղղական չունին, և կը հոլովին այսպէս.

| | | |
|---|---|---|
| Ո. | Չունի. | Չունի. |
| Ս. | Միմեանց. | Իրերաց. |
| Տ. | Միմեանց. | Իրերաց. |
| Հ. | զՄիմեանս. | զԻրեարս. |
| Բ. | ի Միմեանց. | յԻրերաց. |
| Գ. | Միմեամբք. | Իրերօք. |

72. Հ. Ածականք միշտ գոյականի՞ հետ կը գործածուին ։

Պ. Ածականք առանց գոյականի ևս գործածուելով, գոյականի պաշտօն կը վարեն, և այն ատեն ածականն իբրև գոյական առնուած կ'ըսուի.

զոր օրինակ. Անզգամն անգոսնէ զխրատ հօր. Անզգամը հօրը խրատը կ'արհամարհէ. Արդարք ժառանգեսցեն զերկիր. Արդարները երկիրը պիտի ստանան: Որ ունիցի՝ տացի նմա. Ունեցողին տրուի: Հոս, անզգամ, արդար, որ, անզգամ մարդ, արդար մարդիկ, ով որ, ըսել է:

# ԳԼՈՒԽ Գ.

## ԴԵՐԱՆՈՒՆ

73. Հ. Ո՞ր բառերը կը կոչուին Դերանուն:

Պ. Դերանուն կը կոչուին այն բառերը որ խօսքին մէջ առաջ յիշուած բառի մը տեղ կը դրուին, միևնոյն բառը չկրկնելու համար. զոր օրինակ. Աստուած արդար է, կը պատժէ նա յանցաւորները. Տեսայ մարդը որ քեզի հետ էր: Այս խօսքերուն մէջ նա, որ, դերանուն են. քանզի առաջինը, նա, դրուած է փոխանակ Աստուած բառին, իսկ երկրորդը, որ, փոխանակ մարդ բառին:

74. Հ. Դերանուններն ի՞նչ մասնաւոր բան կը ցուցնեն:

Պ. Դերանունները մասնաւորապէս դէմք կը ցուցնեն, և դէմքը երեք է, առաջին, երկրորդ, երրորդ: Առաջին դէմքն է խօսողը, երկրորդն է այն առ որ կը խօսուի. երրորդն է այն որոյ վրայ կը խօսուի:

75. Հ. Դերանուանք քանի՞ տեսակ են:

Պ. Դերանուանք չորս տեսակ են. էական կամ անձնական, ցուցական, ստացական և յարաբերական:



76. Հ. Էական դերանուանք որո՞նք են:

Պ. Էական դերանուն են. ես, դու, սա, դա, նա, ինքն, ինք:

77. Հ. Այս դերանուանք ի՞նչ դէմք կը ցուցնեն:

Պ. Ես՝ կը ցուցնէ առաջին դէմք. դու՝ երկրորդ դէմք. սա, դա, նա, ինքն, ինք՝ երրորդ դէմք:

78. Հ. Էական դերանուանք ի՞նչպէս կը հոլովին:

Պ. Էական դերանուանք կը հոլովին այսպէս.

Ա. ԴԷՄՔ ՑՈՒՑՆՈՂ ԴԵՐԱՆՈՒՆ ԵՍ

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ու. | Ես. | Ես. | Պէն. |
| Ս. | իմ. | իմ. | Պէնիմ. |
| Տ. | ինձ. | ինծի. | Պանա. |
| Հ. | զիս. | իս. | Պէնի. |
| Բ. | յինէն. | ինէ. | Պէնտէն. |
| Գ. | ինեւ. | իզմով. | Պէնիմ իլէ. |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ու. | Մեք. | Մենք. | Պիզ. |
| Ս. | Մեր. | Մեր. | Պիզիմ. |
| Տ. | Մեզ. | Մեզի. | Պիզէ. |
| Հ. | զՄեզ. | Մեզ. | Պիզի. |
| Բ. | ի Մէնջ. | Մենէ. | Պիզտէն. |
| Գ. | Մեօք (1). | Մեզմով. | Պիզիմ իլէ. |

Բ. ԴԷՄՔ ՑՈՒՑՆՈՂ ԴԵՐԱՆՈՒՆ ԴՈՒ

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ու. | Դու. | Դուն. | Սէն. |
| Ս. | Քո. | Քու. | Սէնին. |
| Տ. | Քեզ. | Քեզի. | Սանա. |
| Հ. | զՔեզ. | Քեզ. | Սէնի. |
| Բ. | ի Քէն. | Քենէ. | Սէնտէն. |
| Գ. | Քեւ. | Քեզմով. | Սէնին իլէ. |

(1) Ըստ հին ուղղագրութեան՝ [illegible]:

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Դուք . | Դուք . | Սիզ . |
| Ս. | Ձեր . | Ձեր . | Սիզին . |
| Տ. | Ձեզ . | Ձեզի . | Սիզէ . |
| Հ. | զՁեզ . | Ձեզ . | Սիզի . |
| Բ. | ի Ձէնջ . | Ձենէ . | Սիզտէն . |
| Գ. | Ձեօք (1) . | Ձեզմով . | Սիզին իլէ . |

Գ. ԴԷՄՔ ՑՈՒՑՆՈՂ ԴԱՐԱՆՈՒՆ ՆԱ

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Նա . | Ան . | Օ . |
| Ս. | Նորա . | Անոր . | Օնուն . |
| Տ. | Նմա . | Անոր . | Օնա . |
| Հ. | զՆա . | զԱնի . | Օնու . |
| Բ. | ի Նմանէ . | Անկէ . | Օնտան . |
| Գ. | Նովաւ . | Անով . | Օնուն իլէ . |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Նոքա . | Անոնք . | Օնլար . |
| Ս. | Նոցա . | Անոնց . | Օնլարըն . |
| Տ. | Նոցա . | Անոնց . | Օնլարա , |
| Հ. | զՆոսա . | զԱնոնք . | Օնլարը . |
| Բ. | ի Նոցանէ . | Անոնցմէ . | Օնլարտան . |
| Գ. | Նոքօք . | Անոնցմով . | Օնլար իլէ . |

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | ինքն . | Ինք . | Քէնտի . |
| Ս. | ինքեան . | Իրեն . | Քէնտինին . |
| Տ. | ինքեան . | Իրեն . | Քէնտինէ . |
| Հ. | զինքն . | զԻնք . | Քէնտինի . |
| Բ. | յինքենէ . | Իրմէ . | Քէնտինտէն . |
| Գ. | ինքեամբ . | Իրմով . | Քէնտիսի իլէ . |

(1) Ըստ հին ուղղագրութեան՝ ձեւք ։



Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | ինքեանք . | Իրենք . | Քէնտիլէրի . |
| Ս. | ինքեանց . | Իրենց . | Քէնտիլէրինին . |
| Տ. | ինքեանց . | Իրենց . | Քէնտիլէրինէ . |
| Հ. | զինքեանս . | զԻրենք . | Քէնտիլէրինի . |
| Բ. | յինքեանց . | Իրենցմէ . | Քէնտիլէրինտէն . |
| Գ. | ինքեամբք . | Իրենցմով . | Քէնտիլէրի իլէ . |

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Չունի . | . . . | . . . |
| Ս. | իւր , իւրեան . | Իրեն . | Քէնտինին . |
| Տ. | իւր , իւրեան . | Իրեն . | Քէնտինէ . |
| Հ. | Չունի . | . . . | . . . |
| Բ. | յիւրմէ . | Իրմէ . | Քէնտինտէն . |
| Գ. | իւր , իւրեաւ . իւրեամբ . | Իրմով . | Քէնտիսի իլէ . |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | իւրեանք . | Իրենք . | Քէնտիլէրի . |
| Ս. | իւրեանց . | Իրենց . | Քէնտիլէրինին . |
| Տ. | իւրեանց . | Իրենց . | Քէնտիլէրինէ . |
| Հ. | զիւրեանս . | Իրենք . | Քէնտիլէրինի . |
| Բ. | յիւրեանց . | Իրենցմէ . | Քէնտիլէրինտէն . |
| Գ. | իւրեամբք . | Իրենցմով . | Քէնտիլէրի իլէ . |

Սա , դա դերանուանք նային պէս կը հոլովին ։

79. Հ. Ցուցական դերանուն ո՞րն է , և ի՞նչպէս կը հոլովի ։

Պ. Ցուցական դերանուն են այս , այդ , այն որ կը հոլովին այսպէս .

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Այս . | Աս . | Պու . |
| Ս. | Այսր , այսորիկ . | Ասոր . | Պունուն . |
| Տ. | Այսմ, այսմիկ . | Ասոր . | Պունա . |
| Հ. | զԱյս . | Ասիկա . | Պունու . |
| Բ. | յԱյսմ, յայսմանէ . | Ասկէ . | Պունտան . |
| Գ. | Այսու , այսուիկ . | Ասով . | Պունուն իլէ . |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Այսք , այսոքիկ . | Ասոնք . | Պունլար . |
| Ս. | Այսց , այսոցիկ . | Ասոնց . | Պունլարըն . |
| Տ. | Այսց , այսոցիկ . | Ասոնց . | Պունլարա . |
| Հ. | զԱյս , զայսոսիկ . | զԱսոնք . | Պունլարը . |
| Բ. | յԱյսց , յայսցանէ . | Ասոնցմէ . | Պունլարտան . |
| Գ. | Այսու , այսոքիւք . | Ասոնցմով . | Պունլար իլէ . |

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Այդ , ատ , շու . | Այդք , այդոքիկ . |
| Ս. | Այդր , այդորիկ . | Այդց , այդոցիկ . |
| Տ. | Այդմ, այդմիկ . | Այդց , այդոցիկ . |
| Հ. | զԱյդ . | զԱյդ , զայդոսիկ . |
| Բ. | յԱյդմ, յայդմանէ . | յԱյդց , յայդցանէ . |
| Գ. | Այդու , այդուիկ . | Այդու , այդոքիւք . |

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Այն , ան , օ . | Այնք , այնոքիկ . |
| Ս. | Այնր , այնորիկ . | Այնց , այնոցիկ . |
| Տ. | Այնմ, այնմիկ . | Այնց , այնոցիկ . |
| Հ. | զԱյն . | զԱյն , զայնոսիկ . |
| Բ. | յԱյնմ , յայնմանէ . | յԱյնց , յայնցանէ . |
| Գ. | Այնու , այնուիկ . | Այնու , այնոքիւք . |



80. Հ. Ցուցական դերանուանք ի՞նչպէս կը գործածուին ։

Պ. Ցուցական դերանուանք, եթէ իբրեւ ածական առնուին, գոյականէն թէ՛ առաջ և թէ ետքը դրուելով գոյականին հոլովը կ'առնուն, միայն եթէ առաջ դրուին, կարճ հոլովները կը գործածուին, եթէ ետքը դրուին՝ երկայնները, և գոյականին վրայ ս, դ, ն գիրերը կ'աւելցուին, և նախդիրները կը կրկնուին թէ՛ գոյականին և թէ ածականին վրայ, զոր օրինակ.

---

## ՑՈՒՑԱԿԱՆ ԱԾԱԿԱՆ

### Գոյականէն առաջ դրուած

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Այս տուն . | Այս տունք . |
| Ս. | Այսր տան . | Այսց տանց . |
| Տ. | Այսմ տան . | Այսց տանց . |
| Հ. | զԱյս տուն . | զԱյս տունս . |
| Բ. | յԱյսմ տանէ . | յԱյսց տանց . |
| Գ. | Այսու տամբ . | Այսու տամբք . |

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Այդ տուն . | Այդ տունք . |
| Ս. | Այդր տան . | Այդց տանց . |
| Տ. | Այդմ տան . | Այդց տանց . |
| Հ. | զԱյդ տուն . | զԱյդ տունս . |
| Բ. | յԱյդմ տանէ . | յԱյդց տանց . |
| Գ. | Այդու տամբ . | Այդու տամբք . |

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Այն տուն . | Այն տունք . |
| Ս. | Այնր տան . | Այնց տանց . |
| Տ. | Այնմ տան . | Այնց տանց . |
| Հ. | զԱյն տուն . | զԱյն տունս . |
| Բ. | յԱյնմ տանէ . | յԱյնց տանց . |
| Գ. | Այնու տամբ . | Այնու տամբք . |

## ՑՈՒՑԱԿԱՆ ԱԾԱԿԱՆ

### Գոյականէն ետքը դրուած

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Տունս այս . | Տունքս այսոքիկ . |
| Ս. | Տանս այսորիկ . | Տանցս այսոցիկ . |
| Տ. | Տանս այսմիկ . | Տանցս այսոցիկ . |
| Հ. | զՏունս զայս . | զՏունսս զայսոսիկ . |
| Բ. | ի Տանէս յայսմանէ . | ի Տանցս յայսցանէ . |
| Գ. | Տամբս այսուիկ . | Տամբքս այսոքիւք . |

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Տունդ այդ . | Տունքդ այդոքիկ . |
| Ս. | Տանդ այդորիկ . | Տանցդ այդոցիկ . |
| Տ. | Տանդ այդմիկ . | Տանցդ այդոցիկ . |
| Հ. | զՏունդ զայդ . | զՏունսդ զայդոսիկ . |
| Բ. | ի Տանէդ յայդմանէ . | ի Տանցդ յայդցանէ . |
| Գ. | Տամբդ այդուիկ . | Տամբքդ այդոքիւք . |

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Տունն այն . | Տունքն այնոքիկ . |
| Ս. | Տանն այնորիկ . | Տանցն այնոցիկ . |
| Տ. | Տանն այնմիկ . | Տանցն այնոցիկ . |
| Հ. | զՏունն զայն . | զՏունսն զայնոսիկ . |
| Բ. | ի Տանէն յայնմանէ . | ի Տանցն յայնցանէ . |
| Գ. | Տամբն այնուիկ . | Տամբքն այնոքիւք . |



81. Հ. ս , դ , ն , գիրերն ի՞նչ են :

Պ. ս , դ , ն , գիրերն՝ այս , այդ , այն դերանուններուն կրճատեալն են :

82. Հ. Ստացական դերանուն որո՞նք են , և ի՞նչպէս կը հոլովին :

Պ. Ստացական դերանուն են իմ , քո , մեր , ձեր , իւր , և կը հոլովին այսպէս .

Եզակի

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ո. | Իմ . | Քո . | Մեր . | Ձեր . | Իւր . |
| Ս. | Իմոյ . | Քո , քոյոյ . | Մերոյ . | Ձերոյ . | Իւրոյ . |
| Տ. | Իմում . | Քում . | Մերում . | Ձերում . | Իւրում . |
| Հ. | զԻմ . | զՔո . | զՄեր . | զՁեր . | զԻւր . |
| Բ. | յԻմմէ . | ի Քումմէ . | ի Մերմէ . | ի Ձերմէ . | յԻւրմէ . |
| Գ. | Իմով . | Քով , քոյով . | Մերով . | Ձերով . | Իւրով . |

Յոգնակի

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ո. | Իմք . | Քոյք . | Մերք . | Ձերք . | Իւրք . |
| Ս. | Իմոց . | Քոց , քոյոց . | Մերոց . | Ձերոց . | Իւրոց . |
| Տ. | Իմոց . | Քոց , քոյոց . | Մերոց . | Ձերոց . | Իւրոց . |
| Հ. | զԻմս . | զՔոյս . | զՄեր . | զՁեր . | զԻւրս . |
| Բ. | յԻմոց . | ի Քոց , ի քոյոց . | ի Մերոց . | ի Ձերոց . | յԻւրոց . |
| Գ. | Իմովք . | Քովք , քոյովք . | Մերովք . | Ձերովք . | Իւրովք . |

83. Հ. Ստացական դերանունք եւս կրնա՞ն իբրեւ ածական գործածուիլ :

Պ. Ստացական դերանունք եւս , իբրեւ ածական գործածուելով , գոյականէն առաջ կամ ետքը կը դրուին , և գոյականին հոլովը կ՚առնուն , այսպէս .

### ՍՏԱՑԱԿԱՆ ԱԾԱԿԱՆ
### Գոյականէն առաջ դրուած

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ու. | իմ տուն . | իմ տունք . |
| Ս. | իմոյ տան . | իմոց տանց . |
| Տ. | իմում տան . | իմոց տանց . |
| Հ. | զիմ տուն . | զիմ տունս . |
| Բ. | յիմմէ տանէ . | յիմոց տանց . |
| Գ. | իմով տամբ . | իմովք տամբք . |

### ՍՏԱՑԱԿԱՆ ԱԾԱԿԱՆ
### Գոյականէն ետքը դրուած

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ու. | Տուն իմ . | Տունք իմ . |
| Ս. | Տան իմոյ . | Տանց իմոց . |
| Տ. | Տան իմում . | Տանց իմոց . |
| Հ. | զՏուն իմ . | զՏունս իմ . |
| Բ. | ի Տանէ իմմէ . | ի Տանց իմոց . |
| Գ. | Տամբ իմով . | Տամբք իմովք . |

Այսպէս կը հոլովին միւս ստացականները ։

### ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

84. Հ. Յարաբերական դերանուն ո՞րն է, և ի՞նչպէս կը հոլովի ։

Պ. Յարաբերական դերանուն է որ կամ ո , և կը հոլովի այսպէս .

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ու. | Որ , ո . | Որ , որք , ոյք . |
| Ս. | Որոյ , ոյր . | Որոց , ոյց . |
| Տ. | Որում , ում . | Որոց , ոյց . |
| Հ. | զՈր , զո . | զՈր , զորս , զոյս . |
| Բ. | յՈրմէ , յումմէ . | յՈրոց , յոյց . |
| Գ. | Որով . | Որովք . |



## ԳԼՈՒԽ Դ.

### ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

85. Հ. Ո՞ր բառերը նախադրութիւն են ։

Պ. Նախադրութիւնք են այն բառերն որ որոշ իմաստ տալու համար իրենցմէ ետքը կը խնդրեն ուրիշ բառ որ նախադրութեան խնդիրը կը կոչուի . զոր օրինակ , վրան , համար , նախադրութիւն է , և առանձին իմաստ չտար . բայց երբ կ'ըսեմ , վրան Աստուծոյ , Աստուծոյ համար . վրան սիրոյ , սիրոյ համար , իմաստ կ'իմանամ ։ Այս օրինակներուն մէջ Աստուծոյ , սիրոյ բառերը խնդիր են վրան նախադրութեան ։

86. Հ. Հայերէն նախադրութիւնք քանի՞ կը բաժնուին ։

Պ. Հայերէն նախադրութիւնք կը բաժնուին երկու , նախդիրք և բուն նախադրութիւնք ։

87. Հ. Որո՞նք են նախդիրք ։

Պ. Նախդիր կը կոչուին ի , յ , զ , ց , առ , ընդ , ըստ ։

88. Հ. Որո՞նք են բուն նախադրութիւնք ։

Պ. Բուն նախադրութիւն են առաջի , զկնի , ի վերայ , արտաքոյ , յետոյ , յետ , հակառակ , վրան , և ուրիշ շատեր ։

89. Հ. Նախդիրք և նախադրութիւնք ինչո՞վ կը տարբերին իրարմէ ։

Պ. Նախդիրք ինքնին որոշ նշանակութիւն չունին , այլ այլեւայլ հոլով խնդիրներ առնլով կը

ստանան այլեւայլ նշանակութիւն · իսկ նախադրութիւնք որոշ նշանակութիւն ունեցող բառեր են , իւրաքանչիւր միմիայն որոշ հոլով , սեռական , տրական , հայցական , եւ , խնդիր կ'առնուն ։

Գլխաւոր նախադրութիւնք են .

## Սեռական խնդրով

Առանց , առանց , . . . . սըզ ·
Առաջի , առջեւը , էօնիւնէ , էօնիւնտէ ·
Առընթեր , քովը , եանընտա ·
Արտաքոյ , դուրսը , տըշարը ·
Զկնի / Զհետ } , ետեւը , ետեւէն , արտտա , արտընտան ·
Ի ձեռն , ձեռքովը , էլի իլէ ·
Ի մէջ / Ի միջի } , մէջտեղը , օրթասընա , օրթասընտա ·
Ի միջոյ , մէջէն , իչինտէն ·
Ի ներքոյ , տակը , ներսը , ալթընտա , իչինտէ ·
Ի վերայ , վրան , իւսթիւնէ , իւսթիւնտէ ·
Հանդէպ , դիմացը , գարշըսընտա ·
Յաղագս , համար , իչիւն ·
Յանդիման , դիմացը , գարշըսընտա ·
Յետ , ետքը , սօնդրա ·
Յետոյ , ետքն , արտընա , արտընտա ·
Սակս / Վասն } , համար , իչիւն ·
Փոխանակ , տեղը , եէրինէ ·

## Սեռական կամ Տրական խնդրով

Ընդդէմ / Հակառակ } , դէմ , գարշը ·



## Գործիական խնդրով

Հանդերձ , մէկտեղ , պէրապէր ·
Շուրջ զ , բոլորտիքը , էթրաֆընա , էթրաֆընտա ·

## Հայցական խնդրով

Իբրեւ , պէս , կիպի ·
Ի վեր քան / Ի վերոյ քան } , վեր , եօգարը ·
Մինչեւ ի / Մինչեւ ց } , մինչեւ , . . . . տէք ·
Յառաջ քան / Նախ քան } , առաջ , էվվէլ ·
Քան , քան , . . . . տան , տէն ·

## Բացառական խնդրով

Բաց , զատ , մաատէ ·
Գաղտ , գաղտուկ , կիզլի ·

## Ի նախդրիւ

Մերձ / Մօտ } , մօտ , եագըն ·

# ԳԼՈՒԽ Ե.

## ԲԱՅ

90. Հ. Ո՞ր բառը կը կոչուի բայ:

Պ. Բայ կը կոչուի որ և իցէ բառ որ կը ցուցնէ թէ բան մը է, եղած է, կամ կ'ընէ բան մը:

91. Հ. Բայերը քանի՞ տեսակ են:

Պ. Բայերը երեք տեսակ են, էական, չէզոք և ներգործական: Երբ կ'ըսեմ, Հայրս բարի է, է՝ էական բայ է. երբ կ'ըսեմ, Հայրս հիւանդացաւ, հիւանդացաւ՝ չէզոք բայ է. երբ կ'ըսեմ, Հայրս կը գրէ նամակը, կը գրէ՝ ներգործական բայ է:

92. Հ. Բայն ի՞նչ մասնաւոր բան ունի:

Պ. Բայն ունի խոնարհում:

93. Հ. Ի՞նչ է խոնարհում:

Պ. Խոնարհում կը կոչուի բային վերջաւորութեան փոխուիլը:

94. Հ. Ինչու համար բային վերջաւորութիւնը կը փոխուի:

Պ. Բային վերջաւորութիւնը կը փոխուի ցուցնելու համար եղանակ, ժամանակ, թիւ և դէմք:

95. Հ. Եղանակը քանի՞ է:

Պ. Եղանակն է չորս, սահմանական, հրամայական, ստորադասական և դերբայ:

96. Հ. Ի՞նչ է սահմանական եղանակ:

Պ. Սահմանական եղանակը կը հաստատէ գործը, զոր օրինակ, կը գրեմ, գրեցի, պիտի գրեմ, սահմանական են:



97. Հ. Ի՞նչ է հրամայական եղանակ:

Պ. Հրամայական եղանակը կը հրամայէ, ինչպէս, գրէ, գրեցէք, հրամայական է:

98. Հ. Ի՞նչ է ստորադասական եղանակ:

Պ. Ստորադասականը կը ցուցնէ բայն ուրիշ բայէ մը կախեալ. զոր օրինակ, կ'ուզեմ որ երթամ. որ երթամ՝ ստորադասական է:

99. Հ. Ի՞նչ է դերբայ:

Պ. Դերբայը բային անորոշ ձեւն է, և է երկու, աներեւոյթ և ընդունելութեան. գրել, երթալ, նստիլ, թողուլ, աներեւոյթ են. գրած, գացած, նստած, թողած, ընդունելութիւն են:

100. Հ. Ժամանակը քանի՞ է:

Պ. Ժամանակը երեք է, ներկայ, անցեալ, ապառնի:

101. Հ. Ի՞նչ է ներկայ:

Պ. Ներկայ է բայը, երբ կը ցուցնէ թէ գործը հիմա կը կատարուի, ինչպէս՝ կը գրեմ, կը սիրեմ, կ'երթամ, ներկայ ժամանակ են:

102. Հ. Ի՞նչ է անցեալ:

Պ. Անցեալ է բայը, երբ կը ցուցնէ թէ գործը կատարուեցաւ, ինչպէս, գրեցի, սիրեցի, գացի, անցեալ են:

103. Հ. Ի՞նչ է ապառնի:

Պ. Ապառնի է բայը, երբ կը ցուցնէ թէ գործը պիտի կատարուի յետոյ. զոր օրինակ, պիտի գրեմ, պիտի սիրեմ, պիտի երթամ, ապառնի են:

104. Հ. Ներկայ, անցեալ, ապառնի քանի՞ են:

Պ. Ներկայն մի միայն է. կը գրեմ: Անցեալը երկու է, անկատար անցեալ, ինչպէս՝ կը գրէի, կը սիրէի, և կատարեալ անցեալ, գրեցի, սիրեցի: Ապառնին երկու

է, պարզ ապառնի, պիտի գրեմ, և անկատար ապառնի, պիտի գրէի:

105. Հ. Ի՞նչ է թիւ:

Պ. Ինչպէս անուան, նոյնպէս բային թիւն է, երկու, եզակի, ինչպէս՝ կը գրեմ, գրեցի, պիտի գրեմ. և յոգնակի, ինչպէս՝ կը գրենք, գրեցինք, պիտի գրենք:

106. Հ. Ի՞նչ է դէմք:

Պ. Ինչպէս դերանուան, նոյնպէս բային դէմքն է, ես, դուն, նա. կամ, առաջին, երկրորդ և երրորդ. այսպէս. կը գրեմ, կը գրենք, է առաջին դէմք. կը գրես, կը գրէք, երկրորդ դէմք. կը գրէ, կը գրեն, երրորդ դէմք:

107. Հ. Բայերուն ո՞ր մասն է որ դէմք չունի:

Պ. Դերբայը, այսինքն, բայերուն աներեւոյթը և ընդունելութիւնը չունին դէմք, ուստի և կը կոչուին անդէմ բայ. Մնացեալ մասերը կը կոչուին դիմաւոր:

108. Հ. Հայերէն խոնարհման քանի՞ ձեւ կայ:

Պ. Հայերէն խոնարհման չորս ձեւ կայ, եմ, ինչպէս՝ սիրեմ. իմ, ինչպէս՝ նստիմ. ամ, ինչպէս՝ երթամ, և ում, ինչպէս՝ թողում:

109. Հ. Այս ձեւերն ի՞նչ կը կոչուին:

Պ. Այս ձեւերը կը կոչուին լծորդութիւն. ուստի կ'ըսենք, հայերէն չորս լծորդութիւն կայ, եմ, իմ, ամ, ում, որք տարբեր խոնարհում, այսինքն վերջաւորութեան փոփոխում ունին:

110. Հ. Ի՞նչ է կրաւորական:

Պ. Երբ բայը կը ցուցնէ բան մը ոչ թէ ընել ուրիշին՝ այլ կրել ուրիշէն, կ'ըսուի կրաւորական. այսպէս կը սիրուիմ, կը գրուիմ, են կրաւորական:



111. Հ. Ո՞ր բայերն ունին կրաւորական ձեւ:

Պ. Ամէն ներգործական բայ ունի կրաւորական ձեւ, որ ներգործականէն տարբեր է:

112. Հ. Ներգործական բայ մը ճանչնալու ի՞նչ դիւրին կերպ կայ:

Պ. Ներգործական բայ մը ճանչնալու դիւրին կերպն է, բային քով դնել զինք կամ բան մը. եթէ կը յարմարի, բայը ներգործական է, ապա թէ ոչ՝ չէզոք է. զոր օրինակ, կրնանք ըսել. զինք սիրել, բան մը գրել. ապա սիրել, գրել, ներգործական են. բայց չենք կրնար ըսել, զինք կամ բան մը երթալ կամ նստիլ, ապա երթալ, նստիլ չէզոք են:

113. Հ. Ամէն լծորդութեան բայ, կամ, ամէն եմ, իմ, ամ, ում վերջաւորած բայ միօրինա՞կ կը խոնարհի:

Պ. Ամէն լծորդութեան տակ կան բայեր որոց խոնարհման կերպն հասարակ կերպէն տարբեր է. ասոնք կը կոչուին զարտուղի կամ անկանոն բայ:

114. Հ. Էական բայը քանի՞ է և ի՞նչպէս կը խոնարհի:

Պ. Էական բայը մի միայն է, եմ, և կը խոնարհի այսպէս.

**Սահմանական եղանակ, Ներկայ**

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ա. Դէմք | Եմ. | Եմ. | Պէն իմ. |
| Բ. » | Ես. | Ես. | Սէն սին. |
| Գ. » | Է. | Է. | Օ դուր. |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ա. Դէմք | Եմք. | Ենք. | Պիզ իզ. |
| Բ. » | Էք. | Էք. | Սիզ սինիզ. |
| Գ. » | Են. | Են. | Օնլար դըր. |

### Անցեալ անկատար

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ա. Դէմք | Էի · | Էի · | Պէն իտիմ · |
| Բ. » | Էիր · | Էիր · | Սէն իտին · |
| Գ. » | Էր · | Էր · | Օ իտի · |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ա. Դէմք | Էաք · | Էինք · | Պիզ իտիք · |
| Բ. » | Էիք · | Էիք · | Սիզ իտինիզ · |
| Գ. » | Էին · | Էին · | Օնլար իտիլէր · |

### Անցեալ կատարեալ

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ա. Դէմք | Եղէ · | Եղայ · | Օլտում · |
| Բ. » | Եղեր · | Եղար · | Օլտուն · |
| Գ. » | Եղեւ · | Եղաւ · | Օլտու · |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ա. Դէմք | Եղաք · | Եղանք · | Օլտուք · |
| Բ. » | Եղէք · | Եղաք · | Օլտունուզ · |
| Գ. » | Եղեն · | Եղան · | Օլտուլար · |

### Ապառնի

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ա. Դէմք | Եղէց · | Պիտի ըլլամ · | Օլաճաղըմ · |
| Բ. » | Եղիցիս · | Պիտի ըլլաս · | Օլաճագսըն · |
| Գ. » | Եղիցի · | Պիտի ըլլայ · | Օլաճագ · |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ա. Դէմք | Եղիցուք · | Պիտի ըլլանք · | Օլաճաղըզ · |
| Բ. » | Եղիջիք · | Պիտի ըլլաք · | Օլաճագսընըզ · |
| Գ. » | Եղիցին · | Պիտի ըլլան · | Օլաճագլար · |



### Հրամայական եղանակ

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Բ. Դէմք | Լեր, լիջիր, լինիջիր · | Եղիր · | Օլ · |
| | Մի լինիր · | Մի ըլլար · | Օլմա · |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Բ. Դէմք | Լերուք, եղերուք, լիջիք, լինիջիք · | Եղէք · | Օլուն · |
| | Մի լինիք · | Մի ըլլաք · | Օլմայըն · |

### Ստորադասական եղանակ

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ա. Դէմք | Իցեմ · | Ըլլամ · | Օլայըմ · |
| Բ. » | Իցես · | Ըլլաս · | Օլասըն · |
| Գ. » | Իցէ · | Ըլլայ · | Օլսուն · |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ա. Դէմք | Իցեմք · | Ըլլանք · | Օլալըմ · |
| Բ. » | Իցէք · | Ըլլաք · | Օլասընըզ · |
| Գ. » | Իցեն · | Ըլլան · | Օլսունլար · |

### Դերբայ, Աներեւոյթ

| | | | |
|---|---|---|---|
| Անդէմ | Լինել · | Ըլլալ · | Օլմագ · |

### Անցեալ ընդունելութիւն

| | | | |
|---|---|---|---|
| Անդէմ | Լեալ, եղեալ · | Եղած · | Օլմուշ · |

### Ապառնի ընդունելութիւն

| | | | |
|---|---|---|---|
| Անդէմ | Լինելոց · | Ըլլալու · | Օլաճագ · |

---

115. Հ. Առաջին լծորդութեան բայերը քանի՞ ձեւ ունին, և ի՞նչպէս կը խոնարհին ։

Պ. Առաջին լծորդութեան բայերն ունին երկու ձեւ, եմ, ինչպէս՝ սիրեմ, և ամ, ինչպէս՝ հատանեմ, և կը խոնարհին այսպէս․

Ա. ՁԵՒ ԵՄ․ ՍԻՐԵՄ

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ

Սահմանական եղանակ, ներկայ

Եզակի

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ա. | Դէմք | Սիր-եմ․ | կը սիրեմ․ | Սէվէրիմ․ |
| Բ. | » | Սիր-ես․ | կը սիրես․ | Սէվէրսին․ |
| Գ. | » | Սիր-է․ | կը սիրէ․ | Սէվէր․ |

Յոգնակի

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ա. | Դէմք | Սիր-եմք․ | կը սիրենք․ | Սէվէրիզ․ |
| Բ. | » | Սիր-էք․ | կը սիրէք․ | Սէվէրսինիզ․ |
| Գ. | » | Սիր-են․ | կը սիրեն․ | Սէվէրլէր․ |

Անցեալ անկատար

Եզակի

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ա. | Դէմք | Սիր-էի․ | կը սիրէի․ | Սէվէր իտիմ․ |
| Բ. | » | Սիր-էիր․ | կը սիրէիր․ | Սէվէր իտին․ |
| Գ. | » | Սիր-էր․ | կը սիրէր․ | Սէվէր իտի․ |

Յոգնակի

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ա. | Դէմք | Սիր-էաք․ | կը սիրէինք․ | Սէվէր իտիք․ |
| Բ. | » | Սի-րէիք․ | կը սիրէիք․ | Սէվէր իտինիզ․ |
| Գ. | » | Սիր-էին․ | կը սիրէին․ | Սէվէր իտիլէր․ |



Անցեալ կատարեալ

Եզակի

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ա. | Դէմք | Սիր-եցի․ | Սիրեցի․ | Սէվտիմ․ |
| Բ. | » | Սիր-եցեր․ | Սիրեցիր․ | Սէվտին․ |
| Գ. | » | Սիր-եաց․ | Սիրեց․ | Սէվտի․ |

Յոգնակի

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ա. | Դէմք | Սիր-եցաք․ | Սիրեցինք․ | Սէվտիք․ |
| Բ. | » | Սիր-եցէք․ | Սիրեցիք․ | Սէվտինիզ․ |
| Գ. | » | Սիր-եցին․ | Սիրեցին․ | Սէվտիլէր․ |

Ապառնի

Եզակի

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ա. | Դէմք | Սիր-եցից․ | Պիտի սիրեմ․ | Սէվէճէյիմ․ |
| Բ. | » | Սիր-եսցես․ | Պիտի սիրես․ | Սէվէճէքսին․ |
| Գ. | » | Սիր-եսցէ․ | Պիտի սիրէ․ | Սէվէճէք․ |

Յոգնակի

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ա. | Դէմք | Սիր-եսցուք․ | Պիտի սիրենք․ | Սէվէճէյիզ․ |
| Բ. | » | Սիր-եսջիք․ | Պիտի սիրէք․ | Սէվէճէքսինիզ․ |
| Գ. | » | Սիր-եսցեն․ | Պիտի սիրեն․ | Սէվէճէքլէր․ |

Հրամայական եղանակ

Եզակի

| | | | | |
|---|---|---|---|---|
| Բ. | Դէմք | Սիր-եա, սիր-եսջիր․ | Սիրէ․ | Սէվ․ |
| | | Մի՛ սիր-եր․ | Մի՛ սիրեր․ | Սէվմէ․ |

Յոգնակի

| | | | | |
|---|---|---|---|---|
| Բ. | Դէմք | Սիր-եցէք, սիր-եսջիք․ | Սիրեցէք․ | Սէվին․ |
| | | Մի՛ սիր-էք․ | Մի՛ սիրէք․ | Սէվմէյին․ |

### Ստորադասական եղանակ

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ա. Դէմք | Սիր-էյիմ. | Սիրեմ, | Սէվէյիմ. |
| Բ. » | Սիր-էյէս. | Սիրես. | Սէվէ-սին. |
| Գ. » | Սիր-էյէ. | Սիրէ. | Սէվ-սին. |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ա. Դէմք | Սիր-էյինք. | Սիրենք. | Սէվէլիմ. |
| Բ. » | Սիր-էյէք. | Սիրէք. | Սէվէ-սինիզ. |
| Գ. » | Սիր-էյեն. | Սիրեն. | Սէվ-սինլէր |

### Դերբայ, Աներեւոյթ

| | | | |
|---|---|---|---|
| Անդէմ | Սիր-ել. | Սիրել. | Սէվ-մէք. |

### Անցեալ ընդունելութիւն (¹)

| | | | |
|---|---|---|---|
| Անդէմ | Սիր-եալ. | Սիրած. | Սէվ-միշ. |

### Ապառնի ընդունելութիւն

| | | | |
|---|---|---|---|
| Անդէմ | Սիր-ելոց. | Սիրելու. | Սէվէ-ջէք. |

---

*Այսպէս կը խոնարհի ամէն եմ վերջաւորած կանոնաւոր բայ, ինչպէս.*

### ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ

| | | |
|---|---|---|
| Ազատ-եմ. | Ազատել. | Գուրթարմագ. |
| Գան-եմ. | Ծեծել. | Տէօյմէք. |
| Փակ-եմ. | Գոցել. | Գափամագ. |

(¹) Կայ նաեւ ներկայ ընդունելութիւն ող վերջաւորութեամբ, սիրող, գործող, փրկող, եւայլն ։ Սակայն գիտելի է որ ող, ինչպէս նաեւ էլ եւ էլի վերջաւորեալ բառեր ունին ներկայ ընդունելութեան զօրութիւն, բայց բուն ներկայ ընդունելութիւն կը շինուի հայերէն որ յարաբերականով եւ բային դիմաւոր ժամանակովն, այսպէս ՝ Որ սիրէ, որ սիրէր, որ սիրեաց, եւայլն ։



### ՉԷԶՈՔ

| | | |
|---|---|---|
| Ամաչ-եմ. | Ամչնալ. | Ուտանմագ |
| Գոչ-եմ. | Գոչել. | Պաղըրմագ |
| Ննջ-եմ. | Քնանալ. | Ույումագ |

---

116. Հ. Եմ վերջաւորած բայերուն կրաւորականն ի՞նչպէս կը խոնարհի ։

Պ. Եմ վերջաւորած բայերուն կրաւորականը կը խոնարհի այսպէս.

### Սահմանական եղանակ, ներկայ

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ա. Դէմք | Սիր-իմ. | Կը սիրուիմ. | Սէվիլիրիմ |
| Բ. » | Սիր-իս. | Կը սիրուիս. | Սէվիլիր-սին |
| Գ. » | Սիր-ի. | Կը սիրուի. | Սէվիլիր |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ա. Դէմք | Սիր-իմք. | Կը սիրուինք. | Սէվիլիրիզ |
| Բ. » | Սիր-իք. | Կը սիրուիք. | Սէվիլիր-սինիզ |
| Գ. » | Սիր-ին. | Կը սիրուին. | Սէվիլիրլէր |

### Անցեալ անկատար

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ա. Դէմք | Սիր-էի. | Կը սիրուէի. | Սէվիլիր իտիմ |
| Բ. » | Սիր-էիր. | Կը սիրուէիր. | Սէվիլիր իտին |
| Գ. » | Սիր-էր. | Կը սիրուէր. | Սէվիլիր իտի |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ա. Դէմք | Սիր-եաք. | Կը սիրուէինք. | Սէվիլիր իտիք |
| Բ. » | Սիր-էիք. | Կը սիրուէիք. | Սէվիլիր իտինիզ |
| Գ. » | Սիր-էին. | Կը սիրուէին. | Սէվիլիր իտիլէր |

### Անցեալ կատարեալ

Եզակի

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ա. | Դէմք | Սիր-եցայ · | Սիրուեցայ · | Սէվիլտիմ |
| Բ. | » | Սիր-եցար · | Սիրուեցար · | Սէվիլտին |
| Գ. | » | Սիր-եցաւ · | Սիրուեցաւ · | Սէվիլտի |

Յոգնակի

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ա. | Դէմք | Սիր-եցաք · | Սիրուեցանք · | Սէվիլտիք |
| Բ. | » | Սիր-եցայք · | Սիրուեցաք · | Սէվիլտինիզ |
| Գ. | » | Սիր-եցան · | Սիրուեցան · | Սէվիլտիլէր |

### Ապառնի

Եզակի

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ա. | Դէմք | Սիր-եցայց · | Պիտի սիրուիմ · | Սէվիլէճէյիմ |
| Բ. | » | Սիր-եսցիս · | Պիտի սիրուիս · | Սէվիլէճէքսին |
| Գ. | » | Սիր-եսցի · | Պիտի սիրուի · | Սէվիլէճէք |

Յոգնակի

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ա. | Դէմք | Սիր-եսցուք · | Պիտի սիրուինք · | Սէվիլէճէյիզ |
| Բ. | » | Սիր-եսջիք · | Պիտի սիրուիք · | Սէվիլէճէքսինիզ |
| Գ. | » | Սիր-եսցին · | Պիտի սիրուին · | Սէվիլէճէքլէր |

### Հրամայական եղանակ

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Բ. Դէմք | Սիր-եաց · | Սիրուէ · | Սէվիլ |
| | Մի՛ սիր-եր · | Մի՛ սիրուիր · | Սէվիլմէ |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Բ. Դէմք | Սիր-եցարուք · | Սիրուեցէ՛ք · | Սէվիլինիզ |
| | Մի՛ սիր-էք · | Մի՛ սիրուիք · | Սէվիլմէյին |



### Ստորադասական եղանակ

Եզակի

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ա. | Դէմք | Սիր-եցէմ · | Սիրուիմ · | Սէվիլէյիմ |
| Բ. | » | Սիր-եցես · | Սիրուիս · | Սէվիլէսին |
| Գ. | » | Սիր-եցէ · | Սիրուի · | Սէվիլսին |

Յոգնակի

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ա. | Դէմք | Սիր-եցեմք · | Սիրուինք · | Սէվիլէլիմ |
| Բ. | » | Սիր-եցէք · | Սիրուիք · | Սէվիլէսինիզ |
| Գ. | » | Սիր-եցեն · | Սիրուին · | Սէվիլսինլէր |

### Դերբայ, Աներեւոյթ

| | | | |
|---|---|---|---|
| Անդէմ | Սիր-ել (իլ) · | Սիրուիլ · | Սէվիլմէք |

### Անցեալ ընդունելութիւն

| | | | |
|---|---|---|---|
| Անդէմ | Սիր-եալ · | Սիրուած · | Սէվիլմիշ |

### Ապառնի ընդունելութիւն

| | | | |
|---|---|---|---|
| Անդէմ | Սիր-ելի · | Սիրուելու · | Սէվիլէճէք |

---

## Բ. ՁԵՒ, ԱՆԵՄ, ՀԱՏԱՆԵՄ

### ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ

### Սահմանական եղանակ, ներկայ

| | | |
|---|---|---|
| Հատ-անեմ · | Կը կտրեմ · | Քէսէրիմ |
| Հատ-անես · | Կը կտրես · | Քէսէրսին |
| Հատ-անէ · | Կը կտրէ · | Քէսէր |
| Հատ-անեմք · | Կը կտրենք · | Քէսէրիզ |
| Հատ-անէք · | Կը կտրէք · | Քէսէրսինիզ |
| Հատ-անեն · | Կը կտրեն · | Քէսէրլէր |

### Անցեալ անկատար

| | | |
|---|---|---|
| Հատ-անէի · | Կը կտրէի · | Քէսէր իտիմ |
| Հատ-անէիր · | Կը կտրէիր · | Քէսէր իտին |
| Հատ-անէր · | Կը կտրէր · | Քէսէր իտի |
| Հատ-անէաք · | Կը կտրէինք · | Քէսէր իտիք |
| Հատ-անէիք · | Կը կտրէիք · | Քէսէր իտինիզ |
| Հատ-անէին · | Կը կտրէին · | Քէսէր իտիլէր |

### Անցեալ կատարեալ

| | | |
|---|---|---|
| Հատ-ի · | կտրեցի · | Քէստիմ |
| Հատ-եր · | կտրեցիր · | Քէստին |
| Հատ , ե-հատ · | կտրեց · | Քէստի |
| Հատ-աք · | կտրեցինք · | Քէստիք |
| Հատ-էք · | կտրեցիք · | Քէստինիզ |
| Հատ-ին · | կտրեցին · | Քէստիլէր |

### Ապառնի

| | | |
|---|---|---|
| Հատ-ից · | Պիտի կտրեմ · | Քէսէճէյիմ |
| Հատ-ցես · | Պիտի կտրես · | Քէսէճէքսին |
| Հատ-ցէ · | Պիտի կտրէ · | Քէսէճէք |
| Հատ-ցուք · | Պիտի կտրենք · | Քէսէճէյիզ |
| Հատ-ջիք · | Պիտի կտրէք · | Քէսէճէքսինիզ |
| Հատ-ցեն · | Պիտի կտրեն · | Քէսէճէքլէր |

### Հրամայական Եղանակ

| | | |
|---|---|---|
| Հատ , հատ-ջիր , հատ-անիջիր , | կտրէ · | Քէս |
| Մի՛ հատ-աներ · | Մի՛ կտրեր · | Քէսմէ |
| Հատ-էք , հատ-ջիք , հատ-անիջիք · | կտրեցէք · | Քէսին |
| Մի՛ հատ-անէք · | Մի՛ կտրէք · | Քէսմէյին |



### Ստորադասական եղանակ

| | | |
|---|---|---|
| Հատ-անիցեմ · | կտրեմ · | Քէսէյիմ |
| Հատ-անիցես · | կտրես · | Քէսէսին |
| Հատ-անիցէ · | կտրէ · | Քէսսին |
| Հատ-անիցեմք · | կտրենք · | Քէսէլիմ |
| Հատ-անիցէք · | կտրէք | Քէսէսինիզ |
| Հատ-անիցեն · | կտրեն · | Քէսսինլէր |

### Դերբայ , Աներեւոյթ

| | | |
|---|---|---|
| Հատ-անել · | կտրել · | Քէսմէք |

### Անցեալ ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| Հատ-եալ · | կտրած · | Քէսմիշ |

### Ապառնի ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| Հատ-անելոց · | կտրելու · | Քէսէճէք |

### ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ

| | | |
|---|---|---|
| Տես-անեմ · | Տեսնել · | Կէօրմէք |
| Բեկ-անեմ · | Կոտրել · | Գըրմաք |
| Արկ-անեմ · | Դնել · | Գօյմաք |

### ՉԷԶՈՔ

| | | |
|---|---|---|
| Անց-անեմ · | Անցնիլ · | Կէչմէք |
| Հաս-անեմ · | Հասնիլ · | Եէթիշմէք |
| Ել-անեմ · | Ելնել · | Չըգմաք |

117· Հ· Անեմ վերջաւորուած բայերուն կրաւորականն ինչպէս կը խոնարհի ։

Գ· Անեմ վերջաւորուած բայերուն կրաւորականը կը խոնարհի այսպէս .

### Սահմանական եղանակ , ներկայ

| | | |
|---|---|---|
| Հատ-անիմ · | կը կտրուիմ · | Քէսիլիրիմ |
| Հատ-անիս · | կը կտրուիս · | Քէսիլիրսին |
| Հատ-անի · | կը կտրուի · | Քէսիլիր |
| Հատ-անիմք · | կը կտրուինք · | Քէսիլիրիզ |
| Հատ-անիք · | կը կտրուիք · | Քէսիլիրսինիզ |
| Հատ-անին · | կը կտրուին · | Քէսիլիրլէր |

### Անցեալ անկատար

| | | |
|---|---|---|
| Հատ—անէի . | Կը կտրուէի . | Բե-էլէր էտէմ |
| Հատ—անէիր . | Կը կտրուէիր . | Բե-էլէր էտէն |
| Հատ—անէր . | Կը կտրուէր . | Բե-էլէր էտէ |
| Հատ—անէաք . | Կը կտրուէինք . | Բե-էլէր էտէք |
| Հատ—անէիք . | Կը կտրուէիք . | Բե-էլէր էտէնէղ |
| Հատ—անէին . | Կը կտրուէին . | Բե-էլէր էտէլէր |

### Անցեալ կատարեալ

| | | |
|---|---|---|
| Հատ—այ . | Կտրուեցայ . | Բե-էլտէմ |
| Հատ—ար . | Կտրուեցար . | Բե-էլտէն |
| Հատ—աւ . | Կտրուեցաւ . | Բե-էլտէ |
| Հատ—աք . | Կտրուեցանք . | Բե-էլտէք |
| Հատ—այք . | Կտրուեցաք . | Բե-էլտէնէղ |
| Հատ—ան . | Կտրուեցան . | Բե-էլտէլէր |

### Ապառնի

| | | |
|---|---|---|
| Հատ—այց . | Պիտի կտրուիմ . | Բե-էլճէյէմ |
| Հատ—ցես . | Պիտի կտրուիս . | Բե-էլճէքսէն |
| Հատ—ցէ . | Պիտի կտրուի . | Բե-էլճէք |
| Հատ—ցուք . | Պիտի կտրուինք . | Բե-էլճէյէղ |
| Հատ—ջիք . | Պիտի կտրուիք . | Բե-էլճէքսէնէղ |
| Հատ—ցեն . | Պիտի կտրուին . | Բե-էլճէքլէր |

### Հրամայական եղանակ

| | | |
|---|---|---|
| Հատ—իր . | Կտրուէ . | Բե-էլ |
| Մի՛ հատ—անիր . | Մի՛ կտրուիր . | Բե-էլմէ |
| Հատ—արուք . | Կտրուեցէք . | Բե-էլին |
| Մի՛ հատ—անիք . | Մի՛ կտրուիք . | Բե-էլմէյին |



### Ստորադասական եղանակ

| | | |
|---|---|---|
| Հատ—անիցեմ . | Կտրուիմ . | Բե-էլէյէմ |
| Հատ—անիցես . | Կտրուիս . | Բե-էլէսէն |
| Հատ—անիցէ . | Կտրուի . | Բե-էլէ |
| Հատ—անիցեմք . | Կտրուինք . | Բե-էլէլիմ |
| Հատ—անիցէք . | Կտրուիք . | Բե-էլէսինիզ |
| Հատ—անիցեն . | Կտրուին . | Բե-էլէլէր |

### Դերբայ , Աներեւոյթ

| | | |
|---|---|---|
| Հատ—անել . | Կտրուիլ . | Բե-էլմէք |

### Անցեալ ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| Հատ—եալ . | Կտրուած . | Բե-էլմիշ |

### Ապառնի ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| Հատ—անելի . | Կտրուելու . | Բե-էլէճէք |

118. Հ. Անեմ վերջաւորեալ բայերուն վրայ ի՞նչ գիտելիք կայ :

Պ. Կան քանի մը անեմ վերջաւորուած բայեր , ինչպէս , բաժանեմ , զարմանեմ , ժամանեմ , կործանեմ , սերմանեմ , որ կը խոնարհին սիրեմին պէս , Բաժանեցի , բաժանեցից , բաժանեա . Զարմանեցի , զարմանեցից , զարմանեա , եւ . վասն զի ասոնց արմատներն են , բաժան , զարման , կործան , սերման : Ընդհակառակն , կան քանի մը եմ վերջաւորած բայեր , ինչպէս , ածեմ , բերեմ , հանեմ , որ կը խոնարհին հատանեմին պէս , Ածի , ածից ,ած . Բերի , բերից , բեր . Հանի , հանից , հան :

119. Հ. Հարկանեմ բային վրայ ի՞նչ գիտելիք կայ :

Պ. Հարկանեմ բայը կատարեալին , ապառնիին ,

հրամայականին և անցեալ ընդունելութեան մէջ կը թողու կ գիրը, ինչպէս, Հարի, հարից, հար, հարեալ, և ոչ՝ հարկի, հարկից, եւն։

120. Հ. Ուրիշ ի՞նչ բայեր կան ուցանեմ վերջաւորած բայերուն կարգէն։

Պ. Բոլոր ուցանեմ վերջաւորեալ բայեր անեմ վերջաւորուած բայերուն կարգէն են։

121. Հ. Ի՞նչպէս կը խոնարհին ուցանեմ վերջաւորած բայք։

Պ. Ուցանեմ վերջաւորած բայք, զոր օրինակ, զօրաց-ուցանեմ, կը խոնարհին այսպէս.

### Սահմանական եղանակ, ներկայ

| | | |
|---|---|---|
| Զօրաց-ուցանեմ. | Կը զօրացուցանեմ. | Գուվվէթլէնտիրիրիմ |
| Զօրաց-ուցանես. | եւն. | եւն. |
| Զօրաց-ուցանէ. | | |
| եւն. | | |

### Անցեալ անկատար

| | | |
|---|---|---|
| Զօրաց-ուցանէի. | Կը զօրացունէի. | Գուվվէթլէնտիրիր |
| Զօրաց-ուցանէիր. | եւն. | իտիմ, եւն. |
| Զօրաց-ուցանէր. | | |
| եւն. | | |

### Անցեալ կատարեալ

| | | |
|---|---|---|
| Զօրաց-ուցի. | Զօրացուցի. | Գուվվէթլէնտիրտիմ |
| Զօրաց-ուցեր. | եւն. | եւն. |
| Զօրաց-ոյց. | | |
| Զօրաց-ուցաք. | | |
| Զօրաց-ուցէք. | | |
| Զօրաց-ուցին. | | |



### Ապառնի

| | | |
|---|---|---|
| Զօրաց-ուցից. | Պիտի զօրացունեմ. | Գուվվէթլէնտիրէ- |
| Զօրաց-ուցես. | եւն. | ճէյիմ, եւն. |
| Զօրաց-ուցէ. | | |
| Զօրաց-ուցուք. | | |
| Զօրաց-ուցջիք. | | |
| Զօրաց-ուցեն. | | |

### Հրամայական եղանակ

| | | |
|---|---|---|
| Զօրաց-ո. | Զօրացուր. | Գուվվէթլէնտիր |
| Մի զօրաց-ուցաներ. | Մի զօրացուներ. | Գուվվէթլէնտիրմէ |
| Զօրաց-ուցէք. | եւն. | եւն. |
| Մի զօրաց-ուցանէք. | | |

### Ստորադասական եղանակ

| | | |
|---|---|---|
| Զօրաց-ուցանիցեմ. | Զօրացունեմ. | Գուվվէթլէնտիրէյիմ |
| Զօրաց-ուցանիցես. | եւն. | եւն. |
| Զօրաց-ուցանիցէ. | | |
| Զօրաց-ուցանիցեմք. | | |
| Զօրաց-ուցանիցէք. | | |
| Զօրաց-ուցանիցեն. | | |

### Դերբայ, աներևոյթ

| | | |
|---|---|---|
| Զօրաց-ուցանել. | Զօրացունել. | Գուվվէթլէնտիրմէք |

### Անցեալ ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| Զօրաց-ուցեալ. | Զօրացուցած. | Գուվվէթլէնտիրմիշ |

### Ապառնի ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| Զօրաց-ուցանելոց. | Զօրացունելու. | Գուվվէթլէնտիրէճէք |

122. Հ. Ի՞նչպէս կը կոչուին այս բայերը ։

Պ. Հայերէն այս բայերը կը կոչուին անցողական ։

123. Հ. Ի՞նչպէս կը շինուին անցողական բայք ։

Պ. Անցողական բայք կը շինուին ուրիշ, մանաւանդ չէզոք, բայերու, կատարեալին Ա. դէմքին վերջին ձայնաւորն ուցանել ի փոխելով. զոր օրինակ,

| | | | |
|---|---|---|---|
| Լուամ, | կատարեալ | լուացի, | լուաց-ուցանել. |
| Հասանեմ, | » | հասի, | հաս-ուցանել. |
| Բնակիմ, | » | բնակեցայ, | բնակեց-ուցանել. |
| Սնանիմ, | » | սնայ, | սն-ուցանել. |
| Գնամ, | » | գնացի, | գնաց-ուցանել. |
| Զօրանամ, | » | զօրացայ, | զօրաց-ուցանել. |
| Լնում, | » | լցի, | լց-ուցանել. |
| Զգենում, | » | զգեցայ, | զգեց-ուցանել. |

124. Հ. Ի՞նչ զարտուղութիւն կայ այս կանոնէն ։

Պ. Կորնչել բային անցողականը լինի կորուսանել ։ փլանել և ընտելնուլ բայերունը՝ փլուցանել, ընդելուցանել ։

---

## Բ. ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ

125. Հ. Բ. լծորդութեան, այսինքն էմ վերջաւորած բայք քանի ձև ունին, և ի՞նչպէս կը խոնարհին ։

Պ. Բ. լծորդութեան, այսինքն էմ վերջաւորած բայերն ևս ունին երկու ձև, էմ, խօսիմ, և անեմ, ուսանիմ, և կը խոնարհին այսպէս.



### Ա. ՁԵՒ, ԻՄ. ԽՕՍԻՄ

**Սահմանական եղանակ, Ներկայ**

| | | |
|---|---|---|
| խօս-իմ. | կը խօսիմ. | Սէօյլէրիմ |
| խօս-իս. | կը խօսիս. | Սէօյլէրսին |
| խօս-ի. | կը խօսի. | Սէօյլէր |
| խօս-իմք. | կը խօսինք. | Սէօյլէրիզ |
| խօս-իք. | կը խօսիք. | Սէօյլէրսինիզ |
| խօս-ին. | կը խօսին. | Սէօյլէրլէր |

**Անցեալ անկատար**

| | | |
|---|---|---|
| խօս-էի. | կը խօսէի. | Սէօյլէր իտիմ |
| խօս-էիր. | կը խօսէիր. | Սէօյլէր իտին |
| խօս-էր. | կը խօսէր. | Սէօյլէր իտի |
| խօս-էաք. | կը խօսէինք. | Սէօյլէր իտիք |
| խօս-էիք. | կը խօսէիք. | Սէօյլէր իտինիզ |
| խօս-էին. | կը խօսէին. | Սէօյլէր իտիլէր |

**Անցեալ կատարեալ**

| | | |
|---|---|---|
| խօս-եցայ. | խօսեցայ. | Սէօյլէտիմ |
| խօս-եցար. | խօսեցար. | Սէօյլէտին |
| խօս-եցաւ. | խօսեցաւ. | Սէօյլէտի |
| խօս-եցաք. | խօսեցանք. | Սէօյլէտիք |
| խօս-եցայք. | խօսեցաք. | Սէօյլէտինիզ |
| խօս-եցան. | խօսեցան. | Սէօյլէտիլէր |

**Ապառնի**

| | | |
|---|---|---|
| խօս-եցայց. | Պիտի խօսիմ. | Սէօյլէյէճէյիմ |
| խօս-եսցիս. | Պիտի խօսիս. | Սէօյլէյէճէքսին |
| խօս-եսցի. | Պիտի խօսի. | Սէօյլէյէճէք |
| խօս-եսցուք. | Պիտի խօսինք. | Սէօյլէյէճէյիզ |
| խօս-եսջիք. | Պիտի խօսիք. | Սէօյլէյէճէքսինիզ |
| խօս-եսցին. | Պիտի խօսին. | Սէօյլէյէճէքլէր |

### Հրամայական եղանակ

| | | |
|---|---|---|
| Խօս-եաց , Խօս-եսջիր · | Խօսէ՛ · | Սէօյլէ |
| Մի՛ խօս-իր · | Մի խօսիր · | Սէօյլէմէ |
| Խօս-եցարուք , Խօս-եսջիք · | Խօսեցէք · | Սէօյլէյին |
| Մի՛ խօս-իք · | Մի՛ խօսիք · | Սէօյլէմէյին |

### Ստորադասական եղանակ

| | | |
|---|---|---|
| Խօս-իցիմ · | Խօսիմ · | Սէօյլէյիմ |
| Խօս-իցիս · | Խօսիս · | Սէօյլէյէսին |
| Խօս-իցի · | Խօսի · | Սէօյլէսին |
| Խօս-իցիմք · | Խօսինք · | Սէօյլէյէլիմ |
| Խօս-իցիք · | Խօսիք · | Սէօյլէյէսինիզ |
| Խօս-իցին · | Խօսին · | Սէօյլէսինլէր |

### Դերբայ , աներեւոյթ

| | | |
|---|---|---|
| Խօս-իլ · | Խօսիլ · | Սէօյլէմէք |

### Անցեալ ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| Խօս-եալ · | Խօսած · | Սէօյլէմիշ |

### Ապառնի ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| Խօս-ելոց · | Խօսելու · | Սէօյլէյէճէք |

---

### ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ

| | | |
|---|---|---|
| Բարբառ-իմ · | Խօսիլ · | Սէօյլէմէք |
| Խոստովան-իմ · | Խոստովանիլ · | Իգրար էթմէք |
| Համար-իմ · | Համրել , Համարիլ · | Սայմաք |



### ՉԵԶՈՔ

| | | |
|---|---|---|
| Աշխատ-իմ · | Աշխատիլ · | Չալըշմաք |
| Երեւ-իմ · | Երեւիլ · | Կէօրիւնմէք |
| Դադար-իմ · | Դադրիլ · | Տուրմաք |

---

126. Հ. Ո՞ր իմ վերջաւորած բայերն են որ այս լծորդութեան խոնարհման ձեւէն տարբեր կը խոնարհին :

Պ. Խօսիմ բային խոնարհման ձեւէն տարբեր կը խոնարհին քանի մը չիմ վերջաւորած բայեր , ինչպէս , Երկնչիմ , վախնալ · Թագչիմ , պահուըտիլ · Թռչիմ , Թռչիլ · Կորնչիմ , կորսուիլ · Հանգչիմ , հանգչիլ · Մատչիմ , մօտենալ · Մարտնչիմ , կռուիլ · զոր օրինակ

### Սահմանական եղանակ , ներկայ

| | | |
|---|---|---|
| Երկն-չիմ · | Կը վախնամ · | Գօրքարըմ |
| Երկն-չիս · | Կը վախնաս · | Գօրքարսըն |
| Երկն-չի · | Եւն. · | Եւն. · |
| Երկն-չիմք · | | |
| Երկն-չիք · | | |
| Երկն-չին · | | |

### Անցեալ անկատար

| | | |
|---|---|---|
| Երկն-չէի · | Կը վախնայի · | Գօրքար իտիմ |
| Երկն-չէիր · | Կը վախնայիր · | Գօրքար իտին |
| Երկն-չէր · | Եւն. · | Եւն. · |
| Երկն-չէաք · | | |
| Երկն-չէիք · | | |
| Երկն-չէին · | | |

### Անցեալ կատարեալ

| | | |
|---|---|---|
| Երկ-եայ · | Վախցայ · | Գօրքդում |
| Երկ-եար · | Վախցար · | Գօրքդուն |
| Երկ-եաւ · | նն · | նն · |
| Երկ-եաք · | | |
| Երկ-եայք · | | |
| Երկ-եան · | | |

### Ապառնի

| | | |
|---|---|---|
| Երկ-եայց · | Պիտի վախնամ · | Գօրքաճաղըմ |
| Երկ-իցես · | Պիտի վախնաս · | Գօրքաճաքսըն |
| Երկ-իցէ · | նն · | նն · |
| Երկ-իցուք · | | |
| Երկ-իջիք · | | |
| Երկ-իցեն · | | |

### Հրամայական եղանակ

| | | |
|---|---|---|
| Երկ-իր · | Վախցիր · | Գօրք |
| Մի երկն-չիր · | Մի վախնար · | Գօրքմա |
| Երկ-երուք · | Վախցէք · | Գօրքուն |
| Մի երկն-չիք · | Մի վախնաք | Գօրքմայըն |

### Ստորադասական եղանակ

| | | |
|---|---|---|
| Երկն-չիցիմ · | Վախնամ . | Գօրքայըմ |
| Երկն-չիցիս · | Վախնաս · | Գօրքասըն |
| Երկն-չիցի · | նն · | նն · |
| Երկն-չիցիմք · | | |
| Երկն-չիցիք · | | |
| Երկն-չիցին · | | |

### Դերբայ, աներեւոյթ

| | | |
|---|---|---|
| Երկն-չիլ · | Վախնալ · | Գօրքմաք |



### Անցեալ ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| Երկ-ուցեալ · | Վախցած · | Գօրքմուշ |

### Ապառնի ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| Երկն-չելոց · | Վախնալու · | Գօրքաճագ |

Այսպէս կ'ըլլան ·

Թաքչիմ, թաքեայ, թաքեայց, թաքիր, թաքուցեալ ·

Թռչիմ, թռեայ, թռեայց, թռիր, թռուցեալ ·

Կորնչիմ, կորեայ, կորեայց, կորիր, կորուսեալ ·

Հանգչիմ, հանգեայ, հանգեայց, հանգիր, հանգուցեալ ·

Մատչիմ, մատեայ, մատեայց, մատիր, մատուցեալ ·

Մարտնչիմ, մարտեայ, մարտեայց, մարտիր, մարտուցեալ ։

---

## Բ. ՁԵՒ, ԱՆԻՄ, ՈՒՍԱՆԻՄ

### Սահմանական եղանակ, ներկայ

| | | |
|---|---|---|
| Ուս-անիմ · | կը սորվիմ · | Էօյրէնիրիմ |
| Ուս-անիս · | կը սորվիս · | Էօյրէնիրսին |
| Ուս-անի · | կը սորվի · | Էօյրէնիր |
| Ուս-անիմք · | կը սորվինք · | Էօյրէնիրիզ |
| Ուս-անիք · | կը սորվիք · | Էօյրէնիրսինիզ |
| Ուս-անին · | կը սորվին · | Էօյրէնիրլէր |

### Անցեալ անկատար

| | | |
|---|---|---|
| Ուս-անէի · | կը սորվէի · | Էօյրէնիր իտիմ |
| Ուս-անէիր · | կը սորվէիր · | Էօյրէնիր իտին |
| Ուս-անէր · | կը սորվէր · | Էօյրէնիր իտի |
| Ուս-անէաք · | կը սորվէինք · | Էօյրէնիր իտիք |
| Ուս-անէիք · | կը սորվէիք · | Էօյրէնիր իտինիզ |
| Ուս-անէին · | կը սորվէին · | Էօյրէնիր իտիլէր |

### Անցեալ կատարեալ

| | | |
|---|---|---|
| Ուս-այ . | Սորվեցայ . | Էօյրէնտիմ |
| Ուս-ար . | Սորվեցար . | Էօյրէնտին |
| Ուս-աւ . | Սորվեցաւ . | Էօյրէնտի |
| Ուս-աք . | Սորվեցանք . | Էօյրէնտիք |
| Ուս-այք . | Սորվեցաք . | Էօյրէնտինիզ |
| Ուս-ան . | Սորվեցան . | Էօյրէնտիլէր |

### Ապառնի

| | | |
|---|---|---|
| Ուս-այց . | Պիտի սորվիմ . | Էօյրէնէճէյիմ |
| Ուս-ցես . | Պիտի սորվիս . | Էօյրէնէճէքսին |
| Ուս-ցէ . | Պիտի սորվի . | Էօյրէնէճէք |
| Ուս-ցուք . | Պիտի սորվինք . | Էօյրէնէճէյիզ |
| Ուս-ջիք . | Պիտի սորվիք . | Էօյրէնէճէքսինիզ |
| Ուս-ցեն . | Պիտի սորվին . | Էօյրէնէճէքլէր |

### Հրամայական եղանակ

| | | |
|---|---|---|
| Ուս-իր , ուս-ջիր , ուս-անիջիր . | Սորվէ . | Էօյրէն |
| Մի՛ ուս-անիր . | Մի՛ սորվիր . | Էօյրէնմէ |
| Ուս-արուք , ուս-ջիք , ուս-անիջիք . | Սորվեցէք . | Էօյրէնին |
| Մի՛ ուս-անիք . | Մի՛ սորվիք . | Էօյրէնմէյին |

### Ստորադասական եղանակ

| | | |
|---|---|---|
| Ուս-անիցեմ . | Սորվիմ . | Էօյրէնէյիմ |
| Ուս-անիցես . | Սորվիս . | Էօյրէնէսին |
| Ուս-անիցէ . | Սորվի . | Էօյրէնսին |
| Ուս-անիցեմք . | Սորվինք . | Էօյրէնէլիմ |
| Ուս-անիցէք . | Սորվիք . | Էօյրէնէսինիզ |
| Ուս-անիցեն . | Սորվին . | Էօյրէնսինլէր |



### Դերբայ , Աներեւոյթ

| | | |
|---|---|---|
| Ուս-անել . | Սորվիլ . | Էօյրէնմէք |

### Անցեալ ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| Ուս-եալ . | Սորված . | Էօյրէնմիշ |

### Ապառնի ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| Ուս-անելոց . | Սորվելու . | Էօյրէնէճէք |

---

### ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ

| | | |
|---|---|---|
| Ագ-անիմ . | Հագնիլ . | Կիյմէք |
| Ծն-անիմ . | Ծնանիլ . | Տօղուրմաք |
| Սկս-անիմ . | Սկսիլ . | Պաշլամաք |

### ՉԵԶՈՔ

| | | |
|---|---|---|
| Անկ-անիմ . | Իյնալ . | Տիւշմէք |
| Մեռ-անիմ . | Մեռնիլ . | Էօլմէք |
| Սն-անիմ . | Սնանիլ . | Պէսլէնմէք |

127. Հ. Բ. լծորդութեան իմ և անիմ վերջաւորած ներգործական բայերուն կրաւորականն ինչպէս է։

Պ. Իմ և անիմ վերջաւորած ներգործական բայերուն կրաւորականը ներգործականին հետ նոյն է. ուստի այս բայերը հասարակ բայ կոչուած են։ Զոր օրինակ, խօսիմ, ուսանիմ, թէ կը խօսիմ, կը սորվիմ, և թէ կը խօսուիմ, կը սորվուիմ, կը նշանակեն։

128. Հ. Անիմ վերջաւորած բայերուն վրայ ինչ գիտելիք կայ։

Պ. Կան քանի մը անիմ վերջաւորած բայեր, ինչպէս, դաւանիմ, խոստովանիմ, հաւանիմ, որ կը խոնարհին խօսիմին պէս, Խոստովանեցայ, խոստովանեցայց, խոստովանեաց. Դաւանեցայ, դաւանեցայց, եւն. ասոնց արմատն է, դաւան, խոստո-

վան, հաւան: Ընդ. հակառակն, նոյն բայը կը խոնարհի ուսանիմին պէս, նստայ, նստայց. հրամայականը՝ նիստ, նստարուք:

129. Հ. Ածանեմ և անկանեմ բայերուն հրամայականն ինչպէս է:

Պ. Ածանեմ և անկանեմ բայերուն հրամայականն է, ածերուք, անկերուք, և ոչ՝ ածարուք, անկարուք:

---

## Գ. ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ

130. Հ. Գ. լծորդութեան, այսինքն ամ վերջաւորած բայք խոնարհման քանի՞ ձեւ ունին, և ինչպէս կը խոնարհին:

Պ. Գ. լծորդութեան, այսինքն ամ վերջաւորած բայք երկու ձեւ ունին, ամ, աղամ, և անամ, խոստանամ, և կը խոնարհին այսպէս.

### Ա. ՁԵՒ, ԱՄ, ԱՂԱՄ

**Սահմանական եղանակ, ներկայ**

| | | |
|---|---|---|
| Աղամ. | կ'աղամ. | էօյիւթիւրիւմ |
| Աղաս. | կ'աղաս. | էօյիւթիւրսիւն |
| Աղայ. | կ'աղայ. | էօյիւթիւր |
| Աղամք. | կ'աղանք. | էօյիւթիւրիւզ |
| Աղայք. | կ'աղաք. | էօյիւթիւրսիւնիւզ |
| Աղան. | կ'աղան. | էօյիւթիւրլէր |



**Անցեալ անկատար**

| | | |
|---|---|---|
| Աղայի. | կ'աղայի. | էօյիւթիւր իտիմ |
| Աղայիր. | կ'աղայիր. | էօյիւթիւր իտին |
| Աղայր. | կ'աղար. | էօյիւթիւր իտի |
| Աղայաք. | կ'աղայինք. | էօյիւթիւր իտիք |
| Աղայիք. | կ'աղայիք. | էօյիւթիւր իտինիզ |
| Աղային. | կ'աղային. | էօյիւթիւր իտիլէր |

**Անցեալ կատարեալ**

| | | |
|---|---|---|
| Աղացի. | Աղացի. | էօյիւթթիւմ |
| Աղացեր. | Աղացիր. | էօյիւթթիւն |
| Աղաց. | Աղաց. | էօյիւթթիւ |
| Աղացաք. | Աղացինք. | էօյիւթթիւք |
| Աղացէք. | Աղացիք. | էօյիւթթիւնիւզ |
| Աղացին. | Աղացին. | էօյիւթթիւլէր |

**Ապառնի**

| | | |
|---|---|---|
| Աղացից. | Պիտի աղամ. | էօյիւթէճէյիմ |
| Աղասցես. | Պիտի աղաս. | էօյիւթէճէքսին |
| Աղասցէ. | Պիտի աղայ. | էօյիւթէճէք |
| Աղասցուք. | Պիտի աղանք. | էօյիւթէճէյիզ |
| Աղասջիք. | Պիտի աղաք. | էօյիւթէճէքսինիզ |
| Աղասցեն. | Պիտի աղան. | էօյիւթէճէքլէր |

**Հրամայական եղանակ**

| | | |
|---|---|---|
| Աղա, կամ աղասջիր. | Աղա. | էօյիւթ |
| Մի աղար. | Մի աղար. | էօյիւթմէ |
| Աղացէք, կամ աղասջիք. | Աղացէք. | էօյիւթիւն |
| Մի աղայք. | Մի աղաք | էօյիւթմէյին |

Ստորադասական եղանակ

| | | |
|---|---|---|
| Աղ-այցեմ · | Աղամ · | Իւյէտէյիմ |
| Աղ-այցես · | Աղաս · | Իւյէտէսին |
| Աղ-այցէ · | Աղայ · | Իւյէտսին |
| Աղ-այցեմք · | Աղանք · | Իւյէտէլիմ |
| Աղ-այցէք · | Աղաք · | Իւյէտէսինիզ |
| Աղ-այցեն · | Աղան · | Իւյէտսինլէր |

Աներևոյթ

| | | |
|---|---|---|
| Աղ-ալ · | Աղալ · | Իւյէթմէք |

Անցեալ ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| Աղ-ացեալ · | Աղացած · | Իւյէթմիշ |

Ապառնի ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| Աղ-ալոց · | Աղալու · | Իւյէտէճէք |

---

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ

| | | |
|---|---|---|
| Կարդ-ամ · | Կանչել · | Ձաղըրմաք |
| Ողբ-ամ · | Ողբալ · | Ագլամաք |
| Վիր-ամ · | Ածիլել · | Թըրաշ էթմէք |

ՉԷԶՈՔ

| | | |
|---|---|---|
| Գն-ամ · | Երթալ · | Կէթմէք |
| Խաղ-ամ · | Խաղալ · | Օյնամաք |
| Խնդ-ամ · | Ուրախանալ · | Սէվինմէք |

---

131· Հ· Գ· լծորդութեան -ամ բային կրաւորականն ինչպէս կը խոնարհի ։

Պ· Գ· լծորդութեան -ամ բային կրաւորականը կը խոնարհի այսպէս ·



Սահմանական եղանակ, ներկայ

Աղ-ամ, աղ-աս, ևն. կ'աղացուիմ, ևն. Իւյէտիւլիւյօրիւմ, ևն

Ներգործականին հետ նոյն ։

Անցեալ անկատար

Աղ-այ, -այեր, ևն. կ'աղացուէի, ևն. Իւյէտիւլիւյօրտում, ևն

Ներգործականին հետ նոյն ։

Անցեալ կատարեալ

| | | |
|---|---|---|
| Աղ-ացայ . | Աղացուեցայ · | Իւյէտիւլտիւմ |
| Աղ-ացար · | Աղացուեցար · | Իւյէտիւլտիւն |
| Աղ-ացաւ · | Աղացուեցաւ · | Իւյէտիւլտիւ |
| Աղ-ացաք · | Աղացուեցանք · | Իւյէտիւլտիւք |
| Աղ-ացայք · | Աղացուեցաք · | Իւյէտիւլտիւնիւզ |
| Աղ-ացան . | Աղացուեցան · | Իւյէտիւլտիւլէր |

Ապառնի

| | | |
|---|---|---|
| Աղ-ացայց · | Պիտի աղացուիմ · | Իւյէտիւլէճէյիմ |
| Աղ-ասցես · | Պիտի աղացուիս · | Իւյէտիւլէճէքսին |
| Աղ-ասցէ · | Պիտի աղացուի · | Իւյէտիւլէճէք |
| Աղ-ասցուք · | Պիտի աղացուինք · | Իւյէտիւլէճէյիզ |
| Աղ-ասջիք · | Պիտի աղացուիք · | Իւյէտիւլէճէքսինիզ |
| Աղ-ասցին · | Պիտի աղացուին · | Իւյէտիւլէճէքլէր |

Հրամայական եղանակ

| | | |
|---|---|---|
| Աղ-ացիր · | Աղացուէ · | Իւյէտիւլ |
| Մի՛ աղ-ար · | Մի՛ աղացուիր · | Իւյէտիւլմէ |
| Աղ-ացարուք · | Աղացուեցէք · | Իւյէտիւլիւն |
| Մի՛ աղ-այք · | Մի՛ աղացուիք · | Իւյէտիւլմէյին |

### Ստորադասական եղանակ

| | | |
|---|---|---|
| Աղ-այցեմ · | Աղացուիմ · | [illegible] |
| Աղ-այցես · | Աղացուիս · | [illegible] |
| Աղ-այցէ · | Աղացուի · | [illegible] |
| Աղ-այցեմք · | Աղացուինք · | [illegible] |
| Աղ-այցէք · | Աղացուիք · | [illegible] |
| Աղ-այցեն · | Աղացուին · | [illegible] |

### Դերբայ, աներեւոյթ

| | | |
|---|---|---|
| Աղ-ալ · | Աղացուիլ · | [illegible] |

### Անցեալ ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| Աղ-ացեալ · | Աղացուած · | [illegible] |

### Ապառնի ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| Աղ-ալի · | Աղացուելու · | [illegible] |

---

## Բ. ՁԵՒ, ԱՆԱՄ, ԳՈՂԱՆԱՄ

### Սահմանական եղանակ, ներկայ

| | | |
|---|---|---|
| Գող-անամ · | Կը գողնամ · | [illegible] |
| Գող-անաս · | Կը գողնաս · | [illegible] |
| Գող-անայ · | Կը գողնայ · | [illegible] |
| Գող-անամք · | Կը գողնանք · | [illegible] |
| Գող-անաք · | Կը գողնաք · | [illegible] |
| Գող-անան · | Կը գողնան · | [illegible] |

### Անցեալ անկատար

| | | |
|---|---|---|
| Գող-անայի · | Կը գողնայի · | [illegible] |
| Գող-անայիր · | Կը գողնայիր · | [illegible] |
| Գող-անայր · | Կը գողնար · | [illegible] |
| Գող-անայաք · | Կը գողնայինք · | [illegible] |
| Գող-անայիք · | Կը գողնայիք · | [illegible] |
| Գող-անային · | Կը գողնային · | [illegible] |



### Անցեալ կատարեալ

| | | |
|---|---|---|
| Գող-ացայ · | Գողցայ · | [illegible] |
| Գող-ացար · | Գողցար · | [illegible] |
| Գող-ացաւ · | Գողցաւ · | [illegible] |
| Գող-ացաք · | Գողցանք · | [illegible] |
| Գող-ացայք · | Գողցաք · | [illegible] |
| Գող-ացան · | Գողցան · | [illegible] |

### Ապառնի

| | | |
|---|---|---|
| Գող-ացայց · | Պիտի գողնամ · | [illegible] |
| Գող-ասցես · | Պիտի գողնաս · | [illegible] |
| Գող-ասցէ · | Պիտի գողնայ · | [illegible] |
| Գող-ասցուք · | Պիտի գողնանք · | [illegible] |
| Գող-ասջիք · | Պիտի գողնաք · | [illegible] |
| Գող-ասցեն · | Պիտի գողնան · | [illegible] |

### Հրամայական եղանակ

| | | |
|---|---|---|
| Գող-ացիր, գող-ասջիր · | Գողցիր · | [illegible] |
| Մի՛ գող-անար · | Մի՛ գողնար · | [illegible] |
| Գող-ացարուք, գող-ասջիք · | Գողցէք · | [illegible] |
| Մի՛ գող-անայք · | Մի՛ գողնաք · | [illegible] |

### Ստորադասական եղանակ

| | | |
|---|---|---|
| Գող-անայցեմ · | Գողնամ · | [illegible] |
| Գող-անայցես · | Գողնաս · | [illegible] |
| Գող-անայցէ · | Գողնայ · | [illegible] |
| Գող-անայցեմք · | Գողնանք · | [illegible] |
| Գող-անայցէք · | Գողնաք · | [illegible] |
| Գող-անայցեն · | Գողնան · | [illegible] |

**Դերբայ, աներեւոյթ**

| | | |
|---|---|---|
| Գող-անալ ․ | Գողնալ ․ | Չալմաք |

**Անցեալ ընդունելութիւն**

| | | |
|---|---|---|
| Գող-ացեալ ․ | Գողցած ․ | Չալմըշ |

**Ապառնի ընդունելութիւն**

| | | |
|---|---|---|
| Գող-անալոց ․ | Գողնալու ․ | Չալաճաք |

---

**ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ**

| | | |
|---|---|---|
| Իմ-անամ (նր. իմա)․ | Իմանալ ․ | Անլամաք |
| Խոստ-անամ ․ | Խօսք տալ ․ | Սէօզ վէրմէք |
| Մերկ-անամ ․ | Լաթը հանել ․ | Սօյունմաք |

**ՉԷԶՈՔ**

| | | |
|---|---|---|
| Բազմ-անամ ․ | Շատնալ ․ | Չօղալմաք |
| Զօր-անամ ․ | Զօրանալ ․ | Գուվվէթլէնմէք |
| Շատ-անամ ․ | Գոհ ըլլալ ․ | Գանաաթ էթմէք |

---

132․ Հ․ Անամ վերջաւորած բայերուն կրաւորականն ինչպէս կը խոնարհի ։

Պ․ Անամ վերջաւորած բայերուն կրաւորականը նոյն է ներգործականին հետ, ուստի գողանամ, գողանայի, գողացայ, եւն․ կը նշանակէ՝ թէ կը գողնամ, կը գողնայի, գողցայ, եւն․ և թէ կը գողցուիմ, կը գողցուէի, գողցուեցայ, եւն․ միայն կրաւորականին ստորադասականը լինի, գողանայցիմ, և ոչ՝ գողանայցեմ ։

133․ Հ․ Գ․ լծորդութեան, այսինքն ամ և անամ վերջաւորած բայերէն ոմանց վրայ ինչ փոխելիք կայ ։



Պ․ Գ․ լծորդութեան, այսինքն ամ և անամ վերջաւորած բայերէն ոմանց վրայ դիտելի է,

1․ Բանամ, թանամ, բայերն իրենց կատարեալն, ապառնին, հրամայականը և անցեալը կ'առնուն արմատէն որ է բաց, թաց, ուստի կ'ըսուի, Բացի, բացից, բաց, բացեալ ․ Թացի, թացից, թաց, թացեալ, և ոչ՝ բանացի, թանացի, եւն ։

2․ Բառնամ ներգործական բայը, և դառնամ չէզոք բայը, նոյնպէս յիշեալ ժամանակները կ'առնուն իրենց արմատէն որ է բարձ, դարձ, ուստի կ'ըսուի, Բարձի, բարձից, բարձ, բարձեալ ․ Դարձայ, դարձայց, դարձ, դարձեալ ։

3․ Գթամ, հոգամ, յուսամ, ողբամ, ցնծամ, բայերուն կատարեալը, ապառնին, հրամայականը լինին՝ Գթացայ, գթացայց, գթա ․ Յուսացայ, յուսացայց, յուսա, եւն, և ոչ՝ գթացի, յուսացի, եւն ։

4․ Ենամ վերջաւորած բայեր ե գիրը կը պահեն բոլոր խոնարհման մէջ ․ ուստի կ'ըսուի, արբենամ, արբեցայ, արբեցայց, արբեցիր, արբեցեալ ․ Մերձենամ, մերձեցայ, մերձեցայց, մերձեցիր, մերձեցեալ կամ մերձեալ, եւն ։

## Դ․ ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ

134․ Հ․ Դ․ լծորդութեան, այսինքն ում վերջաւորած բայք խոնարհման քանի ձեւ ունին, և ինչպէս կը խոնարհին ։

Պ․ Դ․ լծորդութեան, այսինքն ում վերջաւորած բայեր ունին երկու ձեւ, և կը խոնարհին այսպէս ․

## Ա. ՁԵՒ, ՈՒՄ. ԹՈՂՈՒՄ

### Սահմանական եղանակ, ներկայ

| | | |
|---|---|---|
| Թողում . | կը թողում . | Պըրաքըրըմ |
| Թողուս . | կը թողուս . | Պըրաքըրսըն |
| Թողու . | կը թողու . | Պըրաքըր . |
| Թողումք . | կը թողունք . | Պըրաքըրըզ |
| Թողուք . | կը թողուք . | Պըրաքըրսընըզ |
| Թողուն . | կը թողուն . | Պըրաքըրլար |

### Անցեալ անկատար

| | | |
|---|---|---|
| Թողուի . | կը թողուի . | Պըրաքըր իտիմ |
| Թողուիր . | կը թողուիր . | Պըրաքըր իտին |
| Թողոյր . | կը թողուր . | Պըրաքըր իտի |
| Թողուաք . | կը թողուինք . | Պըրաքըր իտիք |
| Թողուիք . | կը թողուիք . | Պըրաքըր իտինիզ |
| Թողուին . | կը թողուին . | Պըրաքըր իտիլէր |

### Անցեալ կատարեալ

| | | |
|---|---|---|
| Թողի . | Թողուցի . | Պըրաքթըմ |
| Թողեր . | Թողուցիր . | Պըրաքթըն |
| Թող, ե-թող . | Թողուց . | Պըրաքթը |
| Թողաք . | Թողուցինք . | Պըրաքթըք |
| Թողէք . | Թողուցիք . | Պըրաքթընըզ |
| Թողին . | Թողուցին . | Պըրաքթըլար |

### Ապառնի

| | | |
|---|---|---|
| Թողից . | Պիտի թողում . | Պըրաքաճաղըմ |
| Թողցես . | Պիտի թողուս . | Պըրաքաճագսըն |
| Թողցէ . | Պիտի թողու . | Պըրաքաճագ |
| Թողցուք . | Պիտի թողունք . | Պըրաքաճաղըզ |
| Թողջիք . | Պիտի թողուք . | Պըրաքաճագսընըզ |
| Թողցեն . | Պիտի թողուն . | Պըրաքաճագլար |



### Հրամայական եղանակ

| | | |
|---|---|---|
| Թող, թող-ջիր . | Թող . | Պըրաք |
| Մի՛ թողուր . | Մի՛ թողուր . | Պըրաքմա |
| Թողէք, թող-ջիք . | Թողէք . | Պըրաքըն |
| Մի՛ թողուք . | Մի՛ թողուք . | Պըրաքմայըն |

### Ստորադասական եղանակ

| | | |
|---|---|---|
| Թողուցում . | Թողում . | Պըրաքայըմ |
| Թողուցուս . | Թողուս . | Պըրաքասըն |
| Թողուցու . | Թողու . | Պըրաքա |
| Թողուցումք . | Թողունք . | Պըրաքալըմ |
| Թողուցուք . | Թողուք . | Պըրաքասընըզ |
| Թողուցուն . | Թողուն . | Պըրաքալար |

### Դերբայ, աներեւոյթ

| | | |
|---|---|---|
| Թողուլ . | Թողուլ . | Պըրաքմաք |

### Անցեալ ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| Թողեալ . | Թողած . | Պըրաքմըշ |

### Ապառնի ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| Թողլոց . | Թողելու . | Պըրաքաճագ |

---

### ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ

| | | |
|---|---|---|
| Արգելում . | Արգելել . | Մէն էթմէք |
| Ջենում . | Մորթել . | Պօղազլամաք |
| Հեղում . | Թափել . | Տէօքմէք |

---

135. Հ. Գ. լծորդութեան, այսինքն ում վերջաւորած բայերուն կրաւորականն ի՞նչպէս կը խոնարհի։

Պ. Գ. լծորդութեան, այսինքն ում վերջաւորած բայերուն կրաւորականը կը խոնարհի այսպէս.

### Սահմանական եղանակ , ներկայ

Թող–ում , –ուս , եւն. Կը թողուիմ , եւն. Պըրագըլըրըմ , եւն.

Ներգործականին հետ նոյն ։

### Անցեալ անկատար

Թող–ուի , –ուիր , եւն. Կը թողուէի , եւն. Պըրագըլըր իտիմ , եւն.

Ներգործականին հետ նոյն ։

### Անցեալ կատարեալ

| | | |
|---|---|---|
| Թող–այ · | Թողուեցայ · | Պըրագըլտըմ |
| Թող–ար · | Թողուեցար · | Պըրագըլտըն |
| Թող–աւ · | Թողուեցաւ · | Պըրագըլտը |
| Թող–աք · | Թողուեցանք · | Պըրագըլտըգ |
| Թող–այք · | Թողուեցաք · | Պըրագըլտընըզ |
| Թող–ան · | Թողուեցան · | Պըրագըլտըլար |

### Ապառնի

| | | |
|---|---|---|
| Թող–այց · | Պիտի թողուիմ · | Պըրագըլաճաղըմ |
| Թող–ջիս · | Պիտի թողուիս · | Պըրագըլաճագսըն |
| Թող–ջի · | Պիտի թողուի · | Պըրագըլաճագ |
| Թող–ջուք · | Պիտի թողուինք · | Պըրագըլաճաղըզ |
| Թող–ջիք · | Պիտի թողուիք · | Պըրագըլաճագսընըզ |
| Թող–ջին · | Պիտի թողուին · | Պըրագըլաճագլար |

### Հրամայական եղանակ

| | | |
|---|---|---|
| Թող–իր , Թող–ջիր · | Թողուէ · | Պըրագըլ |
| Մի՛ թող–ուր · | Մի՛ թողուիր · | Պըրագըլմա |
| Թող–արուք , Թող–ջիք · | Թողուեցէք · | Պըրագըլըն |
| Մի՛ թող–ուք · | Մի՛ թողուիք · | Պըրագըլմայըն |

### Ստորադասական եղանակ

Թող–ուցում, ուցուս , եւն. Թողուիմ, եւն. Պըրագըլայըմ , եւն.

Ներգործականին հետ նոյն ։



### Դերբայ , աներեւոյթ

| | | |
|---|---|---|
| Թող–ուլ · | Թողուիլ · | Պըրագըլմագ |

### Անցեալ ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| Թող–եալ · | Թողուած · | Պըրագըլմըշ |

### Ապառնի ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| Թող–լի · | Թողուելու · | Պըրագըլաճագ |

---

## Բ. ՁԵՒ , ՆՈՒՄ , ԶԲՕՍՆՈՒՄ

### Սահմանական եղանակ , ներկայ

| | | |
|---|---|---|
| Զբօս–նում · | Կը զբօսնում · | Էյլէնիրիմ |
| Զբօս–նուս · | Կը զբօսնուս · | Էյլէնիրսին |
| Զբօս–նու · | Կը զբօսնու · | Էյլէնիր |
| Զբօս–նումք · | Կը զբօսնունք · | Էյլէնիրիզ |
| Զբօս–նուք · | Կը զբօսնուք · | Էյլէնիրսինիզ |
| Զբօս–նուն · | Կը զբօսնուն · | Էյլէնիրլէր |

### Անցեալ անկատար

| | | |
|---|---|---|
| Զբօս–նուի · | Կը զբօսնուի · | Էյլէնիր իտիմ |
| Զբօս–նուիր · | Կը զբօսնուիր · | Էյլէնիր իտին |
| Զբօս–նոյր · | Կը զբօսնուր · | Էյլէնիր իտի |
| Զբօս–նուաք · | Կը զբօսնուինք · | Էյլէնիր իտիք |
| Զբօս–նուիք · | Կը զբօսնուիք · | Էյլէնիր իտինիզ |
| Զբօս–նուին · | Կը զբօսնուին · | Էյլէնիր իտիլէր |

### Անցեալ կատարեալ

| | | |
|---|---|---|
| Զբօս–այ · | Զբօսեցայ · | Էյլէնտիմ |
| Զբօս–ար · | Զբօսեցար · | Էյլէնտին |
| Զբօս–աւ · | Զբօսեցաւ · | Էյլէնտի |
| Զբօս–աք · | Զբօսեցանք · | Էյլէնտիք |
| Զբօս–այք · | Զբօսեցաք · | Էյլէնտինիզ |
| Զբօս–ան · | Զբօսեցան · | Էյլէնտիլէր |

**Ապառնի**

| | | |
|---|---|---|
| Զբօս-ցայց · | Պիտի զբօսնում · | Էյլէնէճէյիմ |
| Զբօս-ցիս · | Պիտի զբօսնուս · | Էյլէնէճէքսին |
| Զբօս-ցի · | Պիտի զբօսնու · | Էյլէնէճէք |
| Զբօս-ցուք · | Պիտի զբօսնունք · | Էյլէնէճէյիզ |
| Զբօս-ջիք · | Պիտի զբօսնուք · | Էյլէնէճէքսինիզ |
| Զբօս-ցին · | Պիտի զբօսնուն · | Էյլէնէճէքլէր |

**Հրամայական եղանակ**

| | | |
|---|---|---|
| Զբօս-իր · | Զբօսէ · | Էյլէն |
| Մի՛ զբօս-նուր · | Մի՛ զբօսնուր · | Էյլէնմէ |
| Զբօս-արուք · | Զբօսեցէք · | Էյլէնին |
| Մի՛ զբօս-նուք · | Մի՛ զբօսնուք · | Էյլէնմէյին |

**Ստորադասական եղանակ**

| | | |
|---|---|---|
| Զբօս-նուցում · | Զբօսնում · | Էյլէնէյիմ |
| Զբօս-նուցուս · | Զբօսնուս · | Էյլէնէսին |
| Զբօս-նուցու · | Զբօսնու · | Էյլէնսին |
| Զբօս-նուցումք · | Զբօսնունք · | Էյլէնէլիմ |
| Զբօս-նուցուք · | Զբօսնուք · | Էյլէնէսինիզ |
| Զբօս-նուցուն · | Զբօսնուն · | Էյլէնսինլէր |

**Դերբայ, աներեւոյթ**

| | | |
|---|---|---|
| Զբօս-նուլ · | Զբօսնուլ · | Էյլէնմէք |

**Անցեալ ընդունելութիւն**

| | | |
|---|---|---|
| Զբօս-եալ · | Զբօսած · | Էյլէնմիշ |

**Ապառնի ընդունելութիւն**

| | | |
|---|---|---|
| Զբօս-նոց · | Զբօսնելու · | Էյլէնէճէք |

---



136. Հ. Ո՞ր բայեր Դ. լծորդութեան Բ. ձեւին կը վերաբերին։

Պ. Դ. լծորդութեան Բ. ձեւին կը վերաբերին ընդհանրապէս նում վերջաւորած բայեր, ինչպէս․

| | | |
|---|---|---|
| Հեծ-նում · | Հեծնալ · | Պինմէք |
| Հեղձ-նում · | Խեղդուիլ · | Պօղուլմաք |
| Ջեռ-նում · | Տաքնալ · | Ըսընմաք |

137. Հ. Այս ձեւին ներգործականներուն կրաւորականն ինչպէս կը խոնարհի։

Պ. Այս ձեւին բայերն ընդհանրապէս չէզոք են․ իսկ ներգործականներուն կրաւորականը նոյն է ներգործականին հետ․ այսպէս ընթեռնում, ընթերցայ, ընթերցայց, ընթերցիր, կը նշանակէ՝ թէ կը կարդամ, կարդացի, պիտի կարդամ, կարդա՛, և թէ կը կարդացուիմ, կարդացուեցայ, պիտի կարդացուիմ, կարդացուէ, եւ։

138. Հ. Դ. լծորդութեան բայերէն ոմանց վրայ ի՞նչ կայ գիտելի։

Պ. Այս լծորդութեան նում վերջաւորած բայերէն ոմանց ն գիրը կատարեալին, ապառնոյն, հրամայականին և անցեալ ընդունելութեան մէջ կը փոխուին ց ի․ ինչպէս,

Լնում, լցի, լցից, լից, լցեալ.
Խնում, խցի, խցից, խից, խցեալ.
Յենում, յեցայ, յեցայց, յեց, յեցեալ.
Զգենում, զգեցայ, զգեցայց, զգեցիր, զգեցեալ.
Ընթեռնում, ընթերցայ, ընթերցայց, ընթերցիր, ընթերցեալ։

վասն զի այս բայերուն արմատներն են լից, խից, յեց, զգեաց, ընթերց։

2. Առնում բային գիրը կատարելոյն, ապառնւոյն, հրամայականին և անցեալ ընդունելութեան մէջ կը թողու, ուստի կ'ըսուի, առի, առից, առ, առեալ:

3. Երդնում բային կատարեալը, ապառնին, հրամայականը և ընդունելութիւն անցեալը կ'ըլլան, երդուայ, երդուայց, երդուիր, երդուեալ:

139. Հ. Ո՞ր նում վերջաւորած բայերն են որոց կատարեալը, ապառնին և անցեալ ընդունելութիւնը քիչ մը կը տարբերին:

Պ. Այտնում, ուռիլ. զարթնում, արթննալ. ոստնում, ցատկել. ցածնում, իջնալ. ցասնում, բարկանալ. քաղցնում, անօթենալ. մածնում, կպչիլ. բայերուն կատարեալը, ապառնին, և անցեալ ընդունելութիւնը կը տարբերին այսպէս.

## ԱՅՏՆՈՒՄ

### Սահմանական եղանակ, ներկայ

Այտնում, այտնուս, եւն. կ'ուռիմ, եւն.

### Անցեալ անկատար

Այտնուի, այտնուիր, եւն. կ'ուռէի, եւն.

### Անցեալ կատարեալ

| | |
|---|---|
| Այտեայ. | Ուռեցայ. |
| Այտեար. | Ուռեցար. |
| Այտեաւ. | Ուռեցաւ. |
| Այտեաք. | Ուռեցանք. |
| Այտեայք. | Ուռեցաք. |
| Այտեան. | Ուռեցան. |



### Ապառնի

| | |
|---|---|
| Այտեայց. | Պիտի ուռիմ. |
| Այտիցես. | Պիտի ուռիս. |
| Այտիցէ. | Պիտի ուռի. |
| Այտիցուք. | Պիտի ուռինք. |
| Այտիջիք. | Պիտի ուռիք. |
| Այտիցեն. | Պիտի ուռին. |

### Հրամայական եղանակ

| | |
|---|---|
| Այտիր. | Ուռէ. |
| Մի՛ այտնուր. | Մի՛ ուռիր. |
| Այտերուք. | Ուռեցէք. |
| Մի՛ այտնուք. | Մի՛ ուռիք. |

### Ստորադասական եղանակ

| | |
|---|---|
| Այտնուցում. | Ուռիմ. |
| Այտնուցուս, եւն. | Ուռիս, եւն. |

### Դերբայ, աներեւոյթ

| | |
|---|---|
| Այտնուլ. | Ուռիլ. |

### Անցեալ ընդունելութիւն

| | |
|---|---|
| Այտուցեալ. | Ուռած. |

### Ապառնի ընդունելութիւն

| | |
|---|---|
| Այտնլոց. | Ուռելու. |

Այսպէս կը խոնարհին նաեւ,

Զարթնում, զարթեայ, զարթեայց, զարթուցեալ.
Ցասնում, ցասեայ, ցասեայց, ցասուցեալ.
Հարթնում, հարթեայ, հարթեայց, հարթուցեալ.
Մածնում, մածեայ, մածեայց, մածուցեալ.
Սարտնում, սարտեայ, սարտեայց, սարտուցեալ.

## ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐ

140· Հ· Առաջին լծորդութեան, այսինքն ե՛ վերջաւորած անկանոն բայերը քանի՞ են։

Պ· Առաջին լծորդութեան, այսինքն ե՛ վերջաւորուած անկանոն բայերն են տասներկու·

Առնեմ· ընել, էթմէք
Ասեմ· ըսել, տէմէք
Գիտեմ· գիտնալ, պիլմէք
Դնեմ· դնել, գօյմագ
Ըմպեմ· խմել· իչմէք
Լսեմ, լսել, իշիթմէք
Կարեմ· կրնալ, գատիր օլմագ
Ճանաչեմ· ճանչնալ, թանըմագ [րար վէրմէք
Մեղանչեմ· մեղանչել, վնասել, կիւնահ իշլէմէք, զա-
Յառնեմ· ելլել, գալգմագ
Յանցանեմ· յանցանք ընել, գապահաթ էթմէք
Ուտեմ· ուտել, եէմէք։

141· Հ· Այս բայերն ինչպէս կը խոնարհին։

Պ· Այս բայերը կը խոնարհին այսպէս·

### Սահմանական եղանակ, ներկայ

| | | | |
|---|---|---|---|
| Առնեմ· | Ասեմ· | Գիտեմ· | Դնեմ· |

### Անցեալ անկատար

| | | | |
|---|---|---|---|
| Առնէի· | Ասէի· | Գիտէի· | Դնէի· |

### Անցեալ կատարեալ

| | | | |
|---|---|---|---|
| Արարի· | Ասացի· | Գիտացի· | Եդի· |
| Արարեր· | Ասացեր· | Գիտացեր· | Եդիր· |
| Արար· | Ասաց· | Գիտաց· | Եդ· |
| Արարաք· | Ասացաք· | Գիտացաք· | Եդաք· |
| Արարէք· | Ասացէք· | Գիտացէք· | Եդիք· |
| Արարին· | Ասացին· | Գիտացին· | Եդին· |



### Ապառնի

| | | | |
|---|---|---|---|
| Արարից· | Ասացից· | Գիտացից· | Եդից· |
| Արասցես· | Ասասցես· | Գիտասցես· | Դիցես· |
| Արասցէ· | Ասասցէ· | Գիտասցէ· | Դիցէ· |
| Արասցուք, | Ասասցուք· | Գիտասցուք· | Դիցուք· |
| Արասջիք· | Ասասջիք· | Գիտասջիք· | Դիջիք· |
| Արասցեն· | Ասասցեն | Գիտասցեն· | Դիցեն· |

### Հրամայական եղանակ

| | | | |
|---|---|---|---|
| Արա, | Ասա, | Գիտա, | Դիր, |
| Մի՛ առներ· | Մի՛ ասեր· | Մի՛ գիտեր· | Մի՛ դներ· |
| Արարէք· | Ասացէք, | Գիտացէք, | Դիք, |
| Մի՛ առնէք· | Մի՛ ասէք· | Մի՛ գիտէք· | Մի՛ դնէք· |

### Ստորադասական եղանակ

| | | | |
|---|---|---|---|
| Առնիցեմ· | Ասիցեմ· | Գիտիցեմ· | Դնիցեմ· |

### Աներեւոյթ

| | | | |
|---|---|---|---|
| Առնել· | Ասել· | Գիտել· | Դնել· |

### Անցեալ ընդունելութիւն

| | | | |
|---|---|---|---|
| Արարեալ· | Ասացեալ· | Գիտացեալ· | Եդեալ· |

### Ապառնի ընդունելութիւն

| | | | |
|---|---|---|---|
| Առնելոց· | Ասելոց· | Գիտելոց· | Դնելոց· |

---

### Սահմանական եղանակ, ներկայ

| | | | |
|---|---|---|---|
| Ըմպեմ . | Լսեմ . | Կարեմ . | Ճանաչեմ . |

### Անցեալ անկատար

| | | | |
|---|---|---|---|
| Ըմպէի . | Լսէի . | Կարէի . | Ճանաչէի . |

### Անցեալ կատարեալ

| | | | |
|---|---|---|---|
| Արբի . | Լուայ . | Կարացի . | Ծանեայ . |
| Արբեր . | Լուար . | Կարացեր . | Ծանեար . |
| Արբ , Էարբ . | Լուաւ . | Կարաց . | Ծանեաւ . |
| Արբաք . | Լուաք . | Կարացաք . | Ծանեաք . |
| Արբէք . | Լուայք . | Կարացէք . | Ծանեայք . |
| Արբին . | Լուան . | Կարացին . | Ծանեան . |

### Ապառնի

| | | | |
|---|---|---|---|
| Արբից . | Լուայց . | Կարացից . | Ծանեայց . |
| Արբցես . | Լուիցես . | Կարասցես . | Ծանիցես . |
| Արբցէ . | Լուիցէ . | Կարասցէ . | Ծանիցէ . |
| Արբցուք . | Լուիցուք . | Կարասցուք . | Ծանիցուք . |
| Արբջիք . | Լուիջիք . | Կարասջիք . | Ծանիջիք . |
| Արբցեն . | Լուիցեն . | Կարասցեն . | Ծանիցեն . |

### Հրամայական եղանակ

| | | | |
|---|---|---|---|
| Արբ , | Լուր . | Չունի | Ծանիր , |
| Մի՛ ըմպեր . | Մի՛ լսեր . | | Մի՛ ճանաչեր . |
| Արբէք , | Լուարուք . | | Ծաներուք , |
| Մի՛ ըմպէք | Մի՛ լսէք . | | Մի՛ ճանաչէք . |

### Ստորադասական եղանակ

| | | | |
|---|---|---|---|
| Ըմպիցեմ . | Լսիցեմ . | Կարիցեմ . | Ճանաչիցեմ ։ |



### Դերբայ, աներեւոյթ

| | | | |
|---|---|---|---|
| Ըմպել § | Լսել . | Կարել . | Ճանաչել . |

### Անցեալ ընդունելութիւն

| | | | |
|---|---|---|---|
| Արբեալ . | Լուեալ . | Կարացեալ . | Ծանուցեալ . |

### Ապառնի ընդունելութիւն

| | | | |
|---|---|---|---|
| Ըմպելոց . | Լսելոց . | Չունի | Ճանաչելոց . |

---

### Սահմանական եղանակ, ներկայ

| | | | |
|---|---|---|---|
| Մեղանչեմ . | Յառնեմ (1). | Յանցանեմ . | Ուտեմ . |

### Անցեալ անկատար

| | | | |
|---|---|---|---|
| Մեղանչէի . | Յառնէի . | Յանցանէի . | Ուտէի . |

### Անցեալ կատարեալ

| | | | |
|---|---|---|---|
| Մեղայ . | Յարեայ . | Յանցեայ . | Կերայ , կերի . |
| Մեղար . | Յարեար . | Յանցեար . | Կերար , կերեր . |
| Մեղաւ . | Յարեաւ . | Յանցեաւ . | Կերաւ , եկեր . |
| Մեղաք . | Յարեաք . | Յանցեաք . | Կերաք . |
| Մեղայք . | Յարեայք . | Յանցեայք . | Կերայք . |
| Մեղան . | Յարեան . | Յանցեան . | Կերան , կերին . |

### Ապառնի

| | | | |
|---|---|---|---|
| Մեղայց . | Յարեայց . | Յանցեայց . | Կերայց . |
| Մեղիցես . | Յարիցես . | Յանցիցես . | Կերիցես . |
| Մեղիցէ . | Յարիցէ . | Յանցիցէ . | Կերիցէ . |
| Մեղիցուք . | Յարիցուք . | Յանցիցուք . | Կերիցուք . |
| Մեղիջիք . | Յարիջիք . | Յանցիջիք . | Կերիջիք . |
| Մեղիցեն . | Յարիցեն . | Յանցիցեն . | Կերիցեն . |

---

(1) Յառնել նստած կամ պառկած տեղէն ելլել կը նշանակէ ; Ելանել կը նշանակէ վեր , դուրս ելնել .

### Հրամայական եղանակ

| | | | |
|---|---|---|---|
| Մեղիր, | Արի, | Յանցիր, | Կեր, |
| Մի՛ մեղանչեր· | Մի՛ յառներ· | Մի՛ յանցաներ· | Մի՛ ուտեր· |
| Մեղարուք, | Արիք, | Յանցերուք, | Կերայք, |
| Մի՛ մեղանչէք· | Մի՛ յառնէք· | Մի՛ յանցանէք· | Մի՛ ուտէք· |

### Ստորադասական եղանակ

| | | | |
|---|---|---|---|
| Մեղանչիցեմ· | Յառնիցեմ· | Յանցանիցեմ· | Ուտիցեմ· |

### Դերբայ, աներեւոյթ

| | | | |
|---|---|---|---|
| Մեղանչել· | Յառնել· | Յանցանել· | Ուտել· |

### Անցեալ ընդունելութիւն

| | | | |
|---|---|---|---|
| Մեղուցեալ· | Յարուցեալ· | Յանցուցեալ· | Կերեալ· |

### Ապառնի ընդունելութիւն

| | | | |
|---|---|---|---|
| Մեղանչելոց· | Յառնելոց· | Յանցանելոց· | Ուտելոց· |

---

142. Հ. Երկրորդ լծորդութեան, այսինքն Իմ վերջաւորուած անկանոն բայերը քանի՞ են։

Պ. Երկրորդ լծորդութեան, այսինքն Իմ վերջաւորուած անկանոն բայերն են եօթն·

Եղանիմ } ըլլալ, օլմագ
Լինիմ }
Ունիմ· ունենալ, մալիք օլմագ
Ընդունիմ· ընդունիլ, գապուլ էթմէք
Տանիմ· տանել, կէօթիւրմէք
Մարթիմ· կրնալ, գատիր օլմագ

143. Հ. Այս բայերն ինչպէս կը խոնարհին։

Պ. Այս բայերը կը խոնարհին այսպէս·



### Սահմանական եղանակ, ներկայ

| | | | |
|---|---|---|---|
| Եղանիմ· | Լինիմ· | Ունիմ· | Ընդունիմ· |

### Անցեալ անկատար

| | | | |
|---|---|---|---|
| Եղանէի· | Լինէի· | Ունէի· | Ընդունէի· |

### Անցեալ կատարեալ

| | | | |
|---|---|---|---|
| Եղէ· | Նոյն է· | կալայ· | Ընկալայ· |
| Եղեր· | | կալար· | Ընկալար· |
| Եղեւ· | | կալաւ· | Ընկալաւ· |
| Եղաք· | | կալաք· | Ընկալաք· |
| Եղէք· | | կալայք· | Ընկալայք· |
| Եղեն· | | կալան· | Ընկալան· |

### Ապառնի

| | | | |
|---|---|---|---|
| Եղէց· | Լիցիմ· | կալայց· | Ընկալայց· |
| Եղիցիս· | Լիցիս· | կալցիս· | Ընկալցիս· |
| Եղիցի· | Լիցի· | կալցի· | Ընկալցի· |
| Եղիցուք· | Լիցուք· | կալցուք· | Ընկալցուք· |
| Եղիջիք· | Լիջիք· | կալջիք· | Ընկալջիք· |
| Եղիցին· | Լիցին· | կալցին· | Ընկալցին· |

### Հրամայական եղանակ

| | | | |
|---|---|---|---|
| Եղիջիր, | Լեր, լիջիր, լինիջիր· | կալ, կա, կալջիր | Ընկալ, ընկալջիր, |
| Մի՛ եղանիր· | Մի՛ լինիր· | Մի՛ ունիր· | Մի՛ ընդունիր· |
| Եղերուք, Եղիջիք, | Լերուք, լի-ջիք, լինիջիք | կալարուք, կալջիք, | Ընկալարուք, ընկալջիք, |
| Մի՛ եղանիք· | Մի՛ լինիք· | Մի՛ ունիք· | Մի՛ ընդունիք· |

Ստորադասական եղանակ

Եղանիցիմ . Լինիցիմ . Ունիցիմ . Ընդունիցիմ .

Դերբայ , աներևոյթ

Եղանել . Լինել . Ունել . Ընդունել .

Անցեալ ընդունելութիւն

Եղեալ . Լեալ . Կալեալ . Ընկալեալ .

Ապառնի ընդունելութիւն

Եղանելոց . Լինելոց . Ունելոց . Ընդունելոց .

---

Սահմանական եղանակ , ներկայ

Տանիմ . Մարթիմ .

Անցեալ անկատար

Տանէի . Մարթէի .

Անցեալ կատարեալ

Տարայ . Մարթացայ .
Տարար . Մարթացար .
Տարաւ . Մարթացաւ .
Տարաք . Մարթացաք .
Տարայք . Մարթացայք .
Տարան . Մարթացան .

Ապառնի

Տարայց . Մարթացայց .
Տարցիս . Մարթասցիս .
Տարցի . Մարթասցի .
Տարցուք . Մարթասցուք .
Տարջիք . Մարթասջիք .
Տարցին . Մարթասցին .



Հրամայական եղանակ

Տար , տարջիր . Չունէ
Մի՛ տանիր .
Տարայք, տարջիք .
Մի՛ տանիք .

Ստորադասական եղանակ

Տանիցիմ . Մարթիցիմ .

Դերբայ , աներևոյթ

Տանել . Մարթել .

Անցեալ ընդունելութիւն

Տարեալ . Մարթացեալ .

Ապառնի ընդունելութիւն

Տանելոց . Մարթելոց .

---

144. Հ. Երրորդ լծորդութեան անկանոն բայերը քանի՞ են ։

Պ. Երրորդ լծորդութեան անկանոն բայերը եօթն են .

Գամ . գալ, կէլմէք
Երթամ . երթալ, կիթմէք
Լամ . լալ, աղլամաք .
Կամ . կենալ, տուրմաք
Կեամ . ապրիլ, եաշամաք
Տամ . տալ, վէրմէք
Բամ . ըսել, տէմէք

145. Հ. Այս բայերն ինչպէս կը խոնարհին ։

Պ. Այս բայերը կը խոնարհին այսպէս .

Սահմանական եղանակ , ներկայ

Գամ . Երթամ . Լամ . Կամ .

Անցեալ անկատար

Գայի . Երթայի . Լայի . Կայի .

### Անցեալ կատարեալ

| | | | |
|---|---|---|---|
| Եկի · | Չոգայ · | Լացի · | կացի · |
| Եկիր · | Չոգար · | Լացեր · | կացեր · |
| Եկն · | Չոգաւ · | Լաց , ելաց · | կաց , եկաց · |
| Եկաք · | Չոգաք · | Լացաք · | կացաք · |
| Եկիք · | Չոգայք · | Լացէք · | կացէք · |
| Եկին · | Չոգան · | Լացին · | կացին · |

### Ապառնի

| | | | |
|---|---|---|---|
| Եկից · | Երթայց · | Լացից · | կացից · |
| Եկեսցես · | Երթիցես · | Լացցես · | կացցես · |
| Եկեսցէ · | Երթիցէ · | Լացցէ · | կացցէ · |
| Եկեսցուք · | Երթիցուք · | Լացցուք · | կացցուք · |
| Եկեսջիք · | Երթիջիք · | Լացջիք · | կացջիք · |
| Եկեսցեն · | Երթիցեն · | Լացցեն · | կացցեն · |

### Հրամայական եղանակ

| | | | |
|---|---|---|---|
| Եկ, եկեսջիր , | Երթ , երթիջիր , | Լաց, լացջիր , | կաց , կացջիր, |
| Մի՛ գար · | Մի՛ երթար · | Մի՛ լար · | Մի՛ կար · |
| Եկայք , եկեսջիք , | Երթայք , երթիջիք , | Լացէք , լացջիք , | կացէք , կացջիք , |
| Մի՛ գայք · | Մի՛ երթայք · | Մի՛ լայք · | Մի՛ կայք · |

### Ստորադասական եղանակ

| | | | |
|---|---|---|---|
| Գայցեմ · | Երթայցեմ · | Լայցեմ · | կայցեմ · |

### Դերբայ , աներեւոյթ

| | | | |
|---|---|---|---|
| Գալ · | Երթալ · | Լալ · | կալ · |

### Անցեալ ընդունելութիւն

| | | | |
|---|---|---|---|
| Եկեալ · | Երթեալ · | Լացեալ · | կացեալ · |

### Ապառնի ընդունելութիւն

| | | | |
|---|---|---|---|
| Գալոց · | Երթալոց · | Լալոց · | կալոց · |



### Սահմանական եղանակ , Ներկայ

| | | |
|---|---|---|
| կեամ · | Տամ · | Բամ (1) · |
| կեաս · | Տաս · | Բաս · |
| կեայ · | Տայ · | Բայ · |
| կեամք · | Տամք · | |
| կեայք · | Տայք · | |
| կեան · | Տան · | |

### Անցեալ անկատար

| | |
|---|---|
| կէի · | Տայի · |
| կէիր · | Տայիր · |
| կեայր · | Տայր · |
| կէաք · | Տայաք · |
| կէիք | Տայիք · |
| կէին · | Տային · |

### Անցեալ կատարեալ

| | |
|---|---|
| կեցի · | Ետու · |
| կեցեր · | Ետուր · |
| կեաց , եկեաց · | Ետ · |
| կեցաք · | Տուաք · |
| կեցէք · | Ետուք · |
| կեցին · | Ետուն · |

### Ապառնի

| | |
|---|---|
| կեցից · | Տաց · |
| կեցցես · | Տացես · |
| կեցցէ · | Տացէ · |
| կեցցուք · | Տացուք · |
| կեցջիք · | Տաջիք · |
| կեցցեն · | Տացեն · |

---

(1) Բամ բային ներկայ եզակի երեք դէմքը միայն, եւ գրեթէ միշտ ասեմ բային հետ մէկտեղ կը գործածուին, Ասեմ բամ, ասէ բայ, եւայլն·

### Հրամայական եղանակ

*Կեաց , կեցջիր , Մի՛ կեար . Տուր ; տաջիր , Մի՛ տար .*
*Կեցէք , կեցջիք , Մի՛ կեայք . Տուք , տաջիք , Մի՛ տայք .*

### Ստորադասական եղանակ

*Կեայցեմ .* *Տայցեմ .*

### Դերբայ , աներեւոյթ

*Կեալ .* *Տալ .*

### Անցեալ ընդունելութիւն

*Կեցեալ .* *Տուեալ .*

### Ապառնի ընդունելութիւն

*Կելոց .* *Տալոց .*

146. Հ. *Չորրորդ լծորդութեան վերաբերեալ ինչ՝՝անկանոն բայ կայ :*

Պ. *Չորրորդ լծորդութեան կրնայ վերաբերիլ Գոլ պակասաւոր բայը , որ լինել, օլմաք, կը նշանակէ , և որոյ խոնարհման ձեւն է այս .*

### Սահմանական եղանակ , ներկայ

*Գոմ .* *Գոմք ;*
*Գոս .* *Գոյք .*
*Գոյ .* *Գոն .*

### Անցեալ անկատար

*Գոյի .* *Գոյաք .*
*Գոյիր .* *Գոյիք .*
*Գոյր .* *Գոյին .*



### Ապառնի Գ. Դէմք

*Գուցէ .* *Գուցեն .*

### Դերբայ , աներեւոյթ

*Գոլ* (1) .

## ԱՆԿԱՆՈՆ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԲԱՅԵՐՈՒՆ ԿՐԱՒՈՐԱԿԱՆՆԵՐԸ

147. Հ. *Անկանոն բայերուն ներգործականները ցուցուր իրենց կրաւորականներովը :*

Պ. *Անկանոն բայերուն ներգործականները հետեւեալներն են իրենց կրաւորականներովը .*

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1 | Ներգ. | Առնեմ | Ընել | Էթմէք |
| | Կրաւ. | Առնիմ | Ըլլուիլ | Էտիլմէք |
| 2 | Ներգ. | Ասեմ | Ըսել | Տէմէք |
| | Կրաւ. | Ասիմ | Ըսուիլ | Տէնմէք |
| 3 | Ներգ. | Գիտեմ | Գիտնալ | Պիլմէք |
| | Կրաւ. | Գիտիմ | Գիտցուիլ | Պիլինմէք |
| 4 | Ներգ. | Դնեմ | Դնել | Գօյմագ |
| | Կրաւ. | Դնիմ | Դրուիլ | Գօնմագ |
| 5 | Ներգ. | Ըմպեմ | Խմել | Իչմէք |
| | Կրաւ. | Ըմպիմ | Խմուիլ | Իչիլմէք |

(1) Գոլ բայն էական բայ չէ , այլ չէզոք է եւ աշխարհաբար Կալ բային նշանակութիւնն ունի . ուստի Էմ բային պէս գործածել աղէկ չէ, եւ պէտք չէ ըսել հիւանդ գոլ, կամ կարող գոլ, փոխանակ ըսելու հիւանդ լինել կամ կարող լինել :

| | | | | |
|---|---|---|---|---|
| 6 | Ներգ. | Ճանաչեմ | Ճանչնալ | Թանըմագ |
| | Կրաւ. | Ճանաչիմ | Ճանչցուիլ | Թանըլմագ |
| 7 | Ներգ. | Ուտեմ | Ուտել | Եէմէք |
| | Կրաւ. | Ուտիմ | Ուտուիլ | Եէնմէք |
| 8 | Ներգ. | Լսեմ | Լսել | Իշիթմէք |
| | Կրաւ. | Լսիմ | Լսուիլ | Իշիթիլմէք |
| 9 | Ներգ. | Տամ | Տալ | Վէրմէք |
| | Կրաւ. | Տուեալ լինիմ | Տրուիլ | Վէրիլմէք |
| 10 | Ներգ. և Կրաւ. | Պարտիմ | Պարտական ըլլալ | Պօրճլու, մէճպուր օլմագ |

---

## ԿՐԱՒՈՐԱԿԱՆ

### Սահմանական եղանակ, ներկայ

Առնիմ · Ասիմ · Գիտիմ · Դնիմ ·

### Անցեալ անկատար

Առնէի · Ասէի · Գիտէի · Դնէի ·

### Անցեալ կատարեալ

| | | | |
|---|---|---|---|
| Արարայ · | Ասացայ · | Գիտացայ · | Եդայ · |
| Արարար · | Ասացար · | Գիտացար · | Եդար · |
| Արարաւ · | Ասացաւ · | Գիտացաւ · | Եդաւ · |
| Արարաք · | Ասացաք · | Գիտացաք · | Եդաք · |
| Արարայք · | Ասացայք · | Գիտացայք · | Եդայք · |
| Արարան · | Ասացան · | Գիտացան · | Եդան · |

### Ապառնի

| | | | |
|---|---|---|---|
| Արարայց · | Ասացայց · | Գիտացայց · | Եդայց · |
| Արասցիս · | Ասասցիս · | Գիտասցիս · | Դիցիս · |
| Արասցի · | Ասասցի · | Գիտասցի · | Դիցի · |
| Արասցուք · | Ասասցուք · | Գիտասցուք · | Դիցուք · |
| Արասջիք · | Ասասջիք · | Գիտասջիք · | Դիջիք · |
| Արասցին · | Ասասցին · | Գիտասցին · | Դիցին · |



### Հրամայական եղանակ

| | | | |
|---|---|---|---|
| Արասջիր, առնիջիր, | Ասացիր, ասիջիր, ասասջիր · | Գիտացիր · Գիտասջիր · | Դնիջիր · դիջիր · |
| Մի՛ առնիր · | Մի՛ ասիր · | Մի՛ գիտիր · | Մի՛ դնիր · |
| Արասջիք · առնիջիք · | Ասացարուք · Ասիջիք, ասասջիք, | Գիտացարուք · գիտասջիք, | Եդարուք · Դիջիք, դնիջիք, |
| Մի՛ առնիք · | Մի՛ ասիք · | Մի՛ գիտիք · | Մի՛ դնիք · |

### Ստորադասական եղանակ

Առնիցիմ · Ասիցիմ · Գիտիցիմ · Դնիցիմ ·

### Դերբայ, աներեւոյթ

Առնել (իլ) · Ասել (իլ) · Գիտել (իլ) · Դնել (իլ) ·

### Անցեալ ընդունելութիւն

Արարեալ · Ասացեալ · Գիտացեալ · Եդեալ ·

### Ապառնի ընդունելութիւն

Առնելի · Ասելի · Գիտելի · Դնելի ·

---

### Սահմանական եղանակ, ներկայ

Ըմպիմ · Ճանաչիմ · Ուտիմ ·

### Անցեալ անկատար

Ըմպէի · Ճանաչէի · Ուտէի ·

### Անցեալ կատարեալ

| | | |
|---|---|---|
| Արբայ · | Ծանուցայ (¹) · | Կեր եղէ (²) · |
| Արբար · | Ծանուցար · | Կեր եղեր · |
| Արբաւ · | Ծանուցաւ · | Կեր եղեւ · |
| Արբաք , | Ծանուցաք · | Կեր եղաք · |
| Արբայք · | Ծանուցայք · | Կեր եղէք · |
| Արբան · | Ծանուցան · | Կեր եղեն · |

### Ապառնի

| | | |
|---|---|---|
| Արբայց · | Ծանուցայց · | Կեր եղէց · |
| Արբցիս · | Ծանուսցիս · | Կեր եղիցիս · |
| Արբցի · | Ծանուսցի · | Կեր եղիցի · |
| Արբցուք · | Ծանուսցուք · | Կեր եղիցուք · |
| Արբջիք · | Ծանուսջիք · | Կեր եղիջիք · |
| Արբցին · | Ծանուսցին · | Կեր եղիցին · |

### Հրամայական եղանակ

| | | |
|---|---|---|
| Արբիր · | Ծանուցիր · | Կեր լեր · |
| Մի՛ ըմպիր · | Մի՛ ճանաչիր · | Մի՛ լինիր կեր · |
| Արբերուք · | Ծանուցարուք · | Կեր լերուք · |
| Մի՛ ըմպիք · | Մի՛ ճանաչիք · | Մի՛ լինիք կեր · |

### Ստորադասական եղանակ

| | | |
|---|---|---|
| Ըմպիցիմ · | Ճանաչիցիմ · | Ուտիցիմ · |

---

(¹) Ճանաչեմ բային արմատական անունը, ծանօթ բառը, եմ, լինիմ բայերով գործածուելով կրաւորականի միտք կու տայ այսպէս, ծանօթ եմ կամ լինիմ, ծանօթ եւ, ծանօթ եղէ, ծանօթ եղիցի, ծանօթ լեր, որ կը նշանակեն՝ կը ճանչցուիմ, կը ճանչցուէի, ճանչցուեցայ, եւայլն։

(²) փոխանակ կեր բառին կրնայ ըստ տեղւոյն գործածուիլ նաեւ կերակուր բառն, այսպէս կերակուր լինիմ, եղէ, եղիցի, լեր, որ կը նշանակէ նոյնպէս կ'ուտուիմ, կ'ուտուէի, կերուեցայ, եւայլն։



### Դերբայ, աներեւոյթ

| | | |
|---|---|---|
| Ըմպել (իլ) · | Ճանաչել (իլ) · | Ուտել (իլ) · |

### Անցեալ ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| Արբեալ · | Ծանուցեալ · | Կերեալ · |

### Ապառնի ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| Ըմպելի · | Ճանաչելի · | Ուտելի · |

---

### Սահմանական եղանակ, ներկայ

| | | |
|---|---|---|
| Լսիմ · | Տուեալ լինիմ · | Պարտիմ (¹) · |

### Անցեալ անկատար

| | | |
|---|---|---|
| Լսէի · | Տուեալ լինէի · | Պարտէի · |

### Անցեալ կատարեալ

| | | |
|---|---|---|
| Լու եղէ (²) · | Տուայ · | Զունի · |
| Լու եղեր · | Տուար · | |
| Լու եղեւ · | Տուաւ · | |
| Լու եղաք · | Տուաք · | |
| Լու եղէք · | Տուայք · | |
| Լու եղեն · | Տուան · | |

---

(¹) Պարտիմ բային չէզոքին տեղ կը գործածուի ընդհանրապէս պարտ է միադէմ բայը տրական խնդրով, այսպէս, պարտ է, կամ էր, կամ եղեւ, կամ եղիցի ինձ, քեզ, նմա, մեզ, ձեզ, նոցա, եւայլն։

(²) փոխանակ լու բառին՝ կրնայ գործածուիլ նաեւ լսելի բառն, այսպէս, լսելի լինիմ, եղէ, եղէց. բայց այս ոճը կը նշանակէ ընդհանրապէս՝ ընդունելի բառ։

Ապառնի

| | | |
|---|---|---|
| Լու եղէց · | Տուայց · | Չունի · |
| Լու եղիցիս · | Տացիս · | |
| Լու եղիցի · | Տացի · | |
| Լու եղիցուք · | Տացուք · | |
| Լու եղիջիք · | Տաջիք · | |
| Լու եղիցին · | Տացին · | |

Ստորադասական եղանակ

| | | |
|---|---|---|
| Լսիցեմ · | Տայցեմ · | Պարտիցեմ · |

Դերբայ , աներևոյթ

| | | |
|---|---|---|
| Լու լինել · | Տուեալ լինել · | Պարտել · |

Անցեալ ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| Լուեալ · | Տուեալ · | Չունի · |

Ապառնի ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| Լսելի · | Տալի · | Չունի · |

## ԴԵՐԲԱՅՆԵՐՈՒ ՎՐԱՅ ԳԻՏԵԼԻՔ

148· Հ· Բայերուն աներևոյթին վրայ ինչ գիտելիք կայ ։

Պ· Բայերուն աներևոյթներն իբրև անուն կը հոլովին եզակի միայն , այսպէս ·

| | | | |
|---|---|---|---|
| Ա· ԼԾ· | Սիրել , | սիրելոյ , | սիրելով · |
| | Հատանել , | հատանելոյ , | հատանելով · |
| Բ· ԼԾ· | Խօսել , | խօսելոյ , | խօսելով · |
| | Ուսանել , | ուսանելոյ , | ուսանելով · |



| | | | |
|---|---|---|---|
| Գ· ԼԾ· | Աղալ , | աղալոյ , | աղալով · |
| | Գողանալ , | գողանալոյ , | գողանալով · |
| Դ· ԼԾ· | Թողուլ , | թողլոյ , | թողլով · |

149· Հ· Անցեալ ընդունելութեան վրայ ինչ գիտելիք կայ ։

Պ· Անցեալ ընդունելութիւնները շատ անգամ իբր ածական կը գործածուին , և թէ եզակի թէ յոգնակի կը հոլովին այսպէս ·

| | | | |
|---|---|---|---|
| Ա· ԼԾ· | Սիրեալ , | սիրելոյ , | սիրելով · |
| | Սիրեալք , | սիրելոց , | սիրելովք · |
| | Հատեալ , | հատելոյ , | հատելով · |
| | Հատեալք , | հատելոց , | հատելովք · |
| Բ· ԼԾ· | Խօսեալ , | խօսելոյ , | խօսելով · |
| | Խօսեալք , | խօսելոց , | խօսելովք · |
| | Ուսեալ , | ուսելոյ , | ուսելով · |
| | Ուսեալք , | ուսելոց , | ուսելովք · |
| Գ· ԼԾ· | Աղացեալ , | աղացելոյ , | աղացելով · |
| | Աղացեալք , | աղացելոց , | աղացելովք · |
| | Գողացեալ , | գողացելոյ , | գողացելով · |
| | Գողացեալք , | գողացելոց , | գողացելովք · |
| Դ· ԼԾ· | Թողեալ , | թողելոյ , | թողելով · |
| | Թողեալք , | թողելոց , | թողելովք ։ |

150· Հ· Անցեալ և ապառնի ընդունելութիւններն էական բայով ինչ կը կազմեն ։

Պ· Անցեալ և ապառնի ընդունելութիւններն էական բային եմ , էի , եղէ ժամանակներով խոնարհելով , քանի մը բաղադրեալ ժամանակներ կը կազմեն , զոր օրինակ ·

| Յարակատար | Ներկայ ապառնի |
|---|---|
| Սիրեալ եմ · սէվմիշ իմ · | Սիրելոց եմ · սէվէճէք իմ · |
| » ես · | » ես · |
| » է · | » է · |
| » եմք · | » եմք · |
| » էք · | » էք · |
| » են · | » են · |

| Գերակատար | Անկատար ապառնի |
|---|---|
| Սիրեալ էի · սէվմիշ իտի · | Սիրելոց էի · սէվէճէք իտի · |
| » էիր · | » էիր · |
| » էր · | » էր · |
| » էաք · | » էաք · |
| » էիք · | » էիք · |
| » էին · | » էին · |

| Ստորադասական անցեալ | Ստորադասական ապառնի |
|---|---|
| Սիրեալ իցեմ · սէվմիշ իսէմ, եւ— | Սիրելոց իցեմ · սէվէճէք իսէմ · |
| » իցես · [illegible] · | » իցես · |
| » իցէ · | » իցէ · |
| » իցեմք · | » իցեմք · |
| » իցէք · | » իցէք · |
| » իցեն · | » իցեն · |



# ԳԼՈՒԽ Զ.

## ՄԱԿԲԱՅ

151 · Հ · Ո՞ր բառերը Մակբայ կ'ըսուին ։

Պ · Մակբայ կ'ըսուին այն բառերը՝ որ բային որպիսութիւններէն կամ պարագաներէն մին կը ցուցնեն, ինչպէս որ ածականը կը ցուցնէ գոյականին որպիսութիւնը · զոր օրինակ՝ սա խօսքերուն մէջ · Յոյժ ըմպել, շատ խմել. Բարւոք խօսել, աղէկ խօսիլ · յոյժ, շատ, և բարւոք, աղէկ · մակբայ են առաջինը՝ ըմպել բային, երկրորդը՝ խօսել բային որպիսութիւնը կը ցուցնեն ։

152 · Հ. Սովորական մակբայներն որո՞նք են ։

Պ · Սովորական մակբայներն են ·

| | |
|---|---|
| Յոյժ · } շատ · | Ստէպ · } շատ անգամ · |
| Կարի · | Յաճախ · |
| Տարապարտուց · անիրաւ տեղ · | Արդարև · իրաւ · |
| Ջուր · } պարապ տեղը · | Ապաքէն · անշուշտ · |
| Վայրապար · | Այժմ, արդ · հիմա · |
| Բարւոք · աղէկ · | Իբրև, յորժամ · երբ · |
| Զարաչար · գէշ · | Յետոյ · } ետքը · |
| Իսկոյն · } անմիջապէս · մէկէն · | Ապա · |
| Իսկ և իսկ · | Այսօր · այսօր · |
| Անդէն և անդ · | Վաղիւ · վաղը · |
| Գաղտ · գաղտուկ · | Երէկ · երէկ · |
| Եւեթ · մինակ · | Յեռանդ · երէկ չէ առջի օր · |
| Զրի · ձրի · (առանց ստակի) | Ընդ առաւօտն · առտուան դէմ · |
| Եւս , և · նաև , ալ · | Ընդ երեկս · իրիկուան դէմ · |
| Դուն ուրեք · քիչ անգամ · | Այգուն · առտուանց · |

Երեկոյին · իրիկունը ·
Գիշերի · գիշերը ·
Հերուն · անցած տարի ·
Կանուխ · կանուխ ·
Անագան · ուշ ·
Վաղ · առտուն, կանուխ ·
Վաղվաղակի · }
Փութապէս · } շուտով ·
Փութանակի · }
Ի ներքս · } ներսը, տակը ·
Ի ներքոյ · }
Ի վեր · վերը ·
Յանկարծ · } յանկարծ ·
Յեղակարծումն · }
Նախ · նախ ·
Զառաջինն · } առաջ ·
Ի սկզբան · }
Յառաջագոյն · առաջուց ·
Վաղու · } շատոնց ·
Վաղուց · }
Կանխաւ · առաջուց ·
Մերթ, մերթ · երբեմն, երբեմն ·
Երբէք երբէք · ատեն ատեն ·
Յայտ · } յայտնի ·
Յայտնապէս · }
Միւսանգամ · } ծածուկ ·
Վերստին · }
Ի ծածուկ · ծածուկ ·
Երբեմն · երբեմն, ատենօք ·

Մանաւանդ · մանաւանդ ·
Թերեւս · գուցէ, կարելի է ·
Գուցէ · ըլլայ թէ ·
Արդեօք · միթէ, մի՞ ·
Աստ · } հոս ·
Այսր · }
Անդ · } հոն ·
Անդր · }
Աստի · ասկէ ·
Անտի · անկէ ·
Արտաքս · } դուրսը ·
Արտաքոյ · }
Ի վերոյ · վերը ·
Որպէս · } ինչպէս ·
Զիարդ · }
Ի վերայ · վրան ·
Շուրջանակի · } բոլորտիքը ·
Շուրջ · }
Ուրեք · տեղ մը ·
Ուստեք · տեղէ մը ·
Միանգամ · անգամ մը ·
Միանգամայն · մէկէն ·
Ընդէ՞ր · } ինչո՞ւ համար ·
Զի՞ · }
Ո՞ւր · } ո՞ւր ·
Յո՞ · }
Ե՞րբ · երբ ·
Ոչ · } ոչ, չ ·
Մի · }
Ուստի՞ · ո՞ւրկէ ·



# ԳԼՈՒԽ Է.

## ՇԱՂԿԱՊ

153. Հ. Ո՞ր բառերը Շաղկապ կ'ըսուին ։

Պ. Շաղկապ կ'ըսուին այն բառերը՝ որ երկու բառ կամ երկու խօսք իրարու հետ կը կապեն, զոր օրինակ. Հայր իմ և մայր իմ. Հայրս ու մայրս. Յիւրսն եկն և իւրքն զնա ոչ ընկալան. իրեններուն եկաւ ու իրենները զայն չընդունեցան ։ Այս խօսքերէն առաջնոյն մէջ և իրարու հետ կը կապէ հայր, մայր բառերը. երկրորդին մէջ և շաղկապով կապուածը երկու խօսք է ։

154. Հ. Գլխաւոր շաղկապներ որո՞նք են ։

Պ. Գլխաւոր շաղկապներ են.

Այլ · այլ, հապա ·
Ապա · } ուրեմն, անանկ է նէ ·
Ուրեմն · }
Արդ · } արդ ·
Նու արդ · }
Բայց · բայց ·
Իսկ · և, բայց ·
Մինչ · } երբ, ատենը ·
Մինչդեռ · }
Կամ · կամ ·

Եթէ · } եթէ, որ ·
Թէ · }
Եւ · ու, ալ ·
Զի · վասն զի, որովհետեւ զի, որ ·
Թէպէտեւ · թէպէտ ·
Ուստի · ուստի ·
Սակայն · սակայն ·
Որովհետեւ · որովհետեւ ·
Վասն զի · } քանզի, ինչու որ ·
Քանզի · }

# ԳԼՈՒԽ Ը.

## ՁԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆ

155. Հ. Ո՞ր բառերը Ձայնարկութիւն կ'ըսուին։

Պ. Ձայնարկութիւն կամ Միջարկութիւն կ'ըսուին այն բառերը որ կիրք մը կը յայտնեն՝ այսինքն, վախ, զարմանք, բարկութիւն, գթութիւն, արհամարհութիւն, ցաւ, եւն։

156. Հ. Գլխաւոր ձայնարկութիւններ որո՞նք են։

Պ. Գլխաւոր ձայնարկութիւններ են.

Ո՛վ. } ո՛վ. զարմանք ցուցնող.
Ո՛. }
Ո՜հ. ո՜հ. տրտմութիւն, վիշտ ցուցնող.
Վա՜հ. վա՜հ. արհամարհանք ցուցնող.
Բա՛բէ. բա՛բէ. զարմանք, ցաւ կամ ապաշաւ ցուցնող.
Եղո՜ւկ. } աւա՜ղ. գութ, ցաւակցութիւն ցուցնող.
Աւա՜ղ. }
Հա՛պա. } օ՛ն. խրախոյս ցուցնող.
Օ՛ն. }
Օ՛ն անդր. }
Փա՛րդաստ. } Աստուած չընէ. մերժում, սոսկում ցուցնող.
Քա՛ւ լիցի. }
Ա՛յ. ա՛յ. բարկութիւն, թշնամանք ցուցնող.
Է՛. ո՛վ. կանչելու համար զոր.
Իցի՜ւ. } երնէ՜. բաղձանք ցուցնելու համար.
Իցի՜ւ թէ. }
Վա՜յ. վա՜յ. վայ կարդալու համար.
Ապրի՛ս. ապրի՛ս. գովելու համար։

# ՄԱՍՆ Բ.

## ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ

157. Հ. Ի՞նչ է Համաձայնութիւն։

Պ. Համաձայնութիւն կը կոչուի քերականութեան այն մասը որ կ'ուսուցանէ թէ ինչ է խօսք, և ինչ գլխաւոր մասեր ունի։

158. Հ. Ի՞նչ է Խօսք։

Պ. Խօսք է մտքին խորհուրդը բառերով յայտնուած, և կը բովանդակէ մի կամ աւելի նախադասութիւն։

159. Հ. Ի՞նչ է Նախադասութիւն։

Պ. Նախադասութիւն կ'ըսուի վճիռ կամ դատաստան զոր կու տանք բանի մը վրայ այո կամ ոչ. զոր օրինակ, Աստուած արդար է. Աստուած անիրաւ չէ, նախադասութիւններ են։

160. Հ. Նախադասութիւնը քանի՞ գլխաւոր մաս ունի։

Պ. Նախադասութիւնն ունի երեք գլխաւոր մաս, այսինքն՝ դիմաւոր բայ, ենթակայ և ստորոգելի. սա նախադասութեան մէջ, Աստուած արդար է, է՝ դիմաւոր բայ է, Աստուած՝ ենթակայ, արդար՝ ստորոգելի։ Ենթական քերականութեան մէջ կը կոչուի տէր բայի։

161. Հ. Խօսքի մէջ քանի՞ նախադասութիւն կրնայ գտնուիլ։

Պ. Խօսքի մէջ կրնայ գտնուիլ մի կամ աւելի նախադասութիւն։

162· Հ· Ի՞նչպէս կը հասկցուի թէ խօսքի մը մէջ քանի նախադասութիւն կայ :

Պ· Խօսքի մը մէջ այնչափ նախադասութիւն կայ, որչափ դիմաւոր բայ կայ· զոր օրինակ, սա խօսքը, Աստուած արդար է, մի միայն նախադասութիւն է, քանզի ունի մի միայն դիմաւոր բայ, է :

Երբ Աստուած արդար է, մեղաւորները կը պատժէ. այս խօսքը երկու նախադասութիւն է, քանզի ունի երկու դիմաւոր բայ, է, և, կը պատժէ :

163· Հ. Կրնա՞ս ըսել քանի նախադասութիւն կայ սա խօսքին մէջ· Աստուած ըսաւ, Լոյս ըլլայ, և լոյս եղաւ :

Պ· Այս խօսքին մէջ երեք նախադասութիւն կայ, վասն զի երեք դիմաւոր բայ կայ, ըսաւ, ըլլայ, եղաւ :

164· Հ· Նախադասութեան մէջ բայէն, Տէր բայէն և ստորոգելիէն զատ ուրիշ բառ կրնա՞յ գտնուիլ :

Պ. Նախադասութեան մէջ բայէն, տէր բայէն և ստորոգելիէն զատ կրնայ գտնուիլ Որոշիչներ, Խնդիրներ, Բացայայտիչ, և Կոչական :

## Ա. ՏԷՐ ԲԱՅԻ

165· Հ· Ի՞նչ է Տէր բայի :

Պ· Տէր բայն կ'ըսուի այն ուղղական հոլովը որ բային գործողութեան տէրը կը ցուցնէ, և բային հետ թուով և դէմքով կը համաձայնի· զոր օրինակ· Աստուած արար զերկինս և զերկիր: Այս խօսքին մէջ Աստուած ուղղական հոլովը արար բային տէր բայն է, քանզի ընողը կամ ստեղծողն Աստուած է, և բային հետ թուով և դէմքով համաձայնած է :



166· Հ. Խօսքի մէջ տէր բայն ի՞նչպէս կը ճանչցուի :

Պ· Խօսքի մէջ տէր բայն դիւրաւ կը ճանչցուի, եթէ ո՞վ հարցումն ընենք· զոր օրինակ, վերի խօսքին մէջ· — Ո՞վ ստեղծեց : — Աստուած· Ապա Աստուած տէր բայի է :

167· Հ· Բայն ի՞նչ թիւ կը դրուի, երբ քանի մը տէր բայի ունի :

Պ· Երբ բայը քանի մը տէր բայի ունի, յոգնակի կը դրուի· զոր օրինակ·

Նոյ և որդիք նորա մտին ի տապանն. — Նոյ և անոր որդիքը տապանը մտան. Ո՞վ մտաւ· — Նոյ և որդիքը՝ ապա՝ Նոյ և որդիք տէր բայի են :

168· Հ· Եթէ տէր բայիները տարբեր դէմքի բաներ են, բայն ի՞նչ թիւ և ի՞նչ դէմք կը դրուի :

Պ· Եթէ տէր բայիները տարբեր դէմքի բաներ են, բայը յոգնակի կը դրուի, և նախապատիւ դէմքին հետ կը համաձայնի : Առաջին դէմքը քան զերկրորդը նախապատիւ է, և երկրորդը քան զերրորդը : Այսպէս կ'ըսուի·

Ես և Հայր իմ մի եմք·
Ցորժամ դու և նա միայն էիք·

169 · Հ· Տէր բայն միշտ ուղղակա՞ն հոլով է :

Պ· Տէր բայն կրնայ ըլլալ նաև ածական կամ դերանուն :

170· Հ· Տէր բայն ե՞րբ սեռական կը դրուի :

Պ· Երբ և շաղկապով կապուած երկու բայ

միեւնոյն տէր բային ունին, կրնայ և շաղկապը զանց առնուիլ, և առաջին բայն անցեալ ընդունելութեան փոխուիլ. այն ատեն տէր բային կրնայ սեռական դրուիլ. զոր օրինակ.

Տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա՝ ասէ. Յիսուս անոնց հաւատքը տեսնելով՝ կ՚ըսէ. փոխանակ ըսելու. Եւ ետես Յիսուս զհաւատս նոցա և ասէ:

Երկրորդ, անցեալ ընդունելութեամբ և էական բայով շինուած ժամանակներու, այսինքն՝ յարակատարի, գերակատարի, ստորադասական անցեալի (տես թիւ 139) եղանակ երկրորդ դէմքերը սեռական տէր բայիւ ամէն դէմքի տեղ կը գործածուին: Այսպէս կ՚ըսուի:

Տեսեալ է իմ, տեսեալ է քո, տեսեալ է նորա. տեսեալ է եղբօր իմոյ, տեսեալ է մեր, տեսեալ է ձեր, տեսեալ է նոցա. տեսեալ է եղբարց իմոց, փոխանակ ըսելու՝ Տեսեալ եմ ես, տեսեալ ես դու, տեսեալ է նա, տեսեալ է եղբայր իմ, տեսեալ եմք մեք, տեսեալ էք դուք, տեսեալ են նոքա, տեսեալ են եղբարք իմ:

Տեսեալ էր իմ, քո, նորա, մեր, ձեր, նոցա:
Տեսեալ իցէ իմ, քո, նորա, մեր, ձեր, նոցա:

Եթէ իմ չէր եկեալ. Եթէ ես եկած չըլլայի: Փոխանակ՝ Եթէ ես ոչ էի եկեալ:

Հրէից երդուեալ էր սպանանել զՊաւղոս. Հրեաները երդում ըրած էին զՊօղոս սպաննել: Փոխանակ ըսելու՝ Հրեայք երդուեալ էին սպանանել, եւն:

171. Հ. Տէր բային երբ տրական կը դրուի.
Պ. Երբ երկու նախադասութիւն դէ, բէ շաղ-



կապով կապուած են, այն շաղկապները կրնան զանց առնուիլ, և երկրորդ նախադասութեան բայը կրնայ աներեւոյթի փոխուիլ, և այն ատեն տէր բային տրական կը դրուի զոր օրինակ.

Ոչ կամիմք թագաւորել դմա ի վերայ մեր. Չենք ուզեր որ ասիկայ մեր վրայ թագաւորէ. Փոխանակ ըսելու՝ Ոչ կամիմք զի թագաւորեսցէ դա ի վերայ մեր:

Ոչ տամք թոյլ անցանել ձեզ ընդ երկիր մեր. Չենք թողուր որ մեր երկրէն անցնիք. փոխանակ՝ Ոչ տամք թոյլ զի անցանիցէք դուք, եւն:

172. Հ. Ո՞ր տէր բայները կրնան զեղչուիլ:
Պ. Դերանուն տէր բայները ես, դու, նա, մեք, դուք, նոքա կը զեղչուին, եթէ բայը կը վերաբերի անմիջապէս առջի նախադասութեան տէր բային, զոր օրինակ.

Յարուցեալ եկն (որդին) առ հայրն իւր. և մինչդեռ հեռագոյն էր (նա), ետես զնա հայրն և գթացաւ (նա, հայրն), յարեաւ և ընթացաւ ընդ առաջ նորա, եւն:

## Բ. ՍՏՈՐՈԳԵԼԻ

173. Հ. Ի՞նչ է Ստորոգելի:
Պ. Ստորոգելի կ՚ըսուի էական բային հետ դրուած ուղղական հոլով բառը որ տէր բային ինչ ըլլալը կը ցուցնէ. զոր օրինակ,

Ես եմ որդի քո. Ես քու որդիդ եմ:

Այս խօսքին մէջ երկու ուղղական կայ. ես և որդի. ես տէր բայ է, որդի՝ ստորոգելի, որ տէր բա-

յին ինչ կամ ով ըլլալը կը ցուցնէ . այսպէս է հետեւեալ օրինակներուն մէջ ։

Նոքա եղիցին ձեր դատաւորք . Անոնք ձեր դատաւորները ըլլան ։

Հոս դատաւորք ստորոգելի է .

Եւ էր այրն մեծատուն . Այն մարդը հարուստ էր ։

Հոս մեծատուն բառն ստորոգելի է ։

174 . Հ . Ստորոգելին միշտ էակա՞ն բայի հետ և զա՞տ է ։

Պ . Երբ բայը իմ էական բայ է , ստորոգելին միշտ զատ է . իսկ եթէ ուրիշ բայ է , ստորոգելին իր բային հետ միացեալ է . զոր օրինակ , գործեմ , տիրեցին , նիստ , Բայերուն մէջ ստորոգելին իր բային հետ միացեալ է . գործեմ կը նշանակէ գործող եմ , տիրեցին՝ կը նշանակէ տիրող եղան , նիստ՝ կը նշանակէ նստող եղէր ։

175 . Հ . Ստորոգելին միշտ ուղղակա՞ն է ։

Պ . Երբ բայն էական բայն է , ստորոգելին միշտ տէր բայիին կը վերաբերի , և ուղղական է . բայց երբ բայն , ուրիշ բայ է , ստորոգելին կրնայ թէ ուղղական և թէ անորոշ (1) հայցական ըլլալ . ուղղական՝ երբ տէր բայիին կը վերաբերի , հայցական՝ երբ սեռի խնդրոյն (2) կը վերաբերի ։

Յովսէփ կարգեցաւ ի Փարաւոնէ իշխան Եգիպտոսի ։

Հոս իշխան ստորոգելի է և ուղղական , վասն զի

(1) Առանց զի հայցականը կը կոչուի անորոշ հայցական ։

(2) Սեռի խնդիր կ'ըսուի այն հայցական հոլով բառը որ ամէն ներգործական բայի հետ կը գտնուի ։



կը վերաբերի տէր բայիին որ է Յովսէփ . Ո՞վ կարգեցաւ իշխան . — Յովսէփ ։

Փարաւոն կացոյց զՅովսէփ իշխան Եգիպտոսի ։

Հոս իշխան ստորոգելի է , բայց հայցական , վասն զի կը վերաբերի սեռի խնդրոյն որ է զՅովսէփ , Զո՞վ կացոյց իշխան . — զՅովսէփ ։

Կոչեցի զձեզ բարեկամս . Ձեզ բարեկամ կոչեցի ։

Հոս բարեկամս ստորոգելի է և հայցական , վասն զի կը վերաբերի սեռի խնդրոյն որ է զձեզ ։

Ո՞ կացոյց զիս դատաւոր . Զիս ո՞վ դատաւոր դրաւ ։

Հոս դատաւոր ստորոգելի է և է հայցական , վասն զի կը վերաբերի սեռի խնդրոյն որ է զիս ։

Դու զո՞ առնես զքեզ . Դուն զքեզ ո՞վ կը կարծես ։

Հոս զո՞ ստորոգելի է և հայցական , վասն զի կը վերաբերի սեռի խնդրոյն որ է զքեզ ։

Գ . ՎԵՐԱԴԻՐ

176 . Հ . Ի՞նչ է վերադիրը ։

Պ . Վերադիր կը կոչուի այն բառը որ նախադասութեան մէջ կը դրուի ուրիշ բառի մը որպիսութիւնը ցուցնելու համար ։

177 . Հ . Ո՞ր բառերը վերադիր են ։

Պ . Վերադիր են ածականը և մակբայը ։ Ածականը կը ցուցնէ բանի մը յատկութիւնը . զոր օրինակ ,

Ամենակալն Աստուած վարէ զաշխարհս իւրով մեծազօրն զօրութեամբ ։

Այս խօսքին մէջ ամենակալ և մեծազօր բառերն ածական են , առաջինը կը ցուցնէ Աստուծոյ յատ-

կութիւնը, երկրորդը կը ցուցնէ զօրութեան յատկութիւնը ։

178. Հ. Ածականը քանի՞ կերպով կրնայ ցուցնել բառի մը յատկութիւնը ։

Պ. Ածականը երեք կերպով կրնայ ցուցնել բանի մը յատկութիւնը · 1. Պարզապէս, 2. Համեմատութեամբ և 3. Յետին աստիճան,

Հզօր է նա · Ան զօրաւոր է ։

Հոս հզօր ածականը դրական է ։

Հզօր կամ հզօրագոյն է նա քան զքեզ · Նա քան զքեզ զօրաւոր է ։

Հոս հզօր ածականը բաղդատական է · բաղդատութիւնը կը պահանջէ միշտ քան զ բառը ։

Ամենէն, կամ, յոյժ, հզօր է նա · Նա վերջին աստիճան զօրաւոր է ։

Հոս հզօր գերադրական է · յետին աստիճան ցուցնելու համար կը պահանջուի, ամենէն, յոյժ, կարի կամ ասոնց նման մակբայ մը ։

179. Հ. Բաղդատութիւնը քանի՞ է ։

Պ. Բաղդատութիւնը երեք է · 1. Հաւասարութեան բաղդատութիւն որ իբրեւ զ բառով կը ցուցուի ·

Նա հզօր է իբրեւ զքեզ · Նա քեզի չափ զօրաւոր է ։

2. Առաւելութեան բաղդատութիւն, որ կը ցուցուի քան զ բառով ·

Նա հզօր է քան զքեզ · Նա քան զքեզ աւելի զօրաւոր է ։

3. Նուազութեան բաղդատութիւն, որ կը ցուցուի բայը բացասական դնելով ։

Նա չէ հզօր իբրեւ կամ քան զքեզ · Նա քան զքեզ պակաս զօրաւոր է ։



180. Հ. Մակբային պաշտօնն ի՞նչ է ։

Պ. Մակբային պաշտօնն է ցուցնել ածականի մը որպիսութիւնը, և կամ բայի մը գործողութեան պարագան ։

Սամսոն էր ամենէն ուժեղ ·

Հոս ամենէն մակբայ է և կը ցուցնէ ուժեղ ածականին աստիճանը ։

Բարւոք ասացեր · վաղիւ եկեսցուք ։

Հոս բարւոք մակբայ է և կը ցուցնէ ասացեր բային եղանակը · վաղիւ որ նոյնպէս մակբայ է, կը ցուցնէ եկեսցուք բային մէկ պարագան, այսինքն ժամանակը ։

## Դ. ԽՆԴԻՐ

181. Հ. Ի՞նչ է խնդիր ։

Պ. Խնդիր, որ կ'ըսուի նաեւ լրացուցիչ, կը կոչուի այն բառը որ ուրիշ բառի մը իմաստը կը լրացունէ, այսինքն կ'ամբողջացունէ · զոր օրինակ, երբ կ'ըսեմ, Հայր սիրէ, խօսքը ամբողջ չէ · բայց երբ կ'ըսեմ, Հայր սիրէ զորդի, զորդի բառը կ'ամբողջացունէ խօսքը ։

Երբ կ'ըսեմ ։ Նոյ եբաց, կատարեալ իմաստ չեմ տար, բայց երբ կ'ըսեմ, Նոյ եբաց զպատուհան տապանին, զպատուհան տապանին բառերը կատարեալ կ'ընեն իմաստը ։

182. Հ. Խնդիրը քանի՞ է ։

Պ. Խնդիրը երեք է, սեռի խնդիր, բնութեան խնդիր, յարակացուցիչ ։

## Ա. ՍԵՌԻ ԽՆԴԻՐ

183. Հ. Ի՞նչ է Սեռի խնդիր։

Պ. Սեռի խնդիր կ'ըսուի այն հայցականը որ ներգործական բայի մը տէր բայէին գործողութեան առարկան (ինչ բան ըլլալը) կը ցուցնէ, զոր օրինակ.

Աստուած արար զերկինս և զերկիր. Աստուած երկինքն ու երկիրը ստեղծեց։

Այս խօսքին մէջ զերկինս, զերկիր բառերը սեռի խնդիր են, քանզի տէր բայէին, այսինքն Աստուծոյ ստեղծագործութեան առարկան կը ցուցնեն։

Առաքեաց զորդի իւր. Իւր որդին ղրկեց։

184. Հ. Սեռի խնդիրն ի՞նչպէս կը ճանչցուի։

Պ. Սեռի խնդիրը կը ճանչցուի զո՞վ կամ ի՞նչ բանը հարցմամբ, զոր օրինակ. Աստուած ստեղծեց. — ի՞նչ բանը. — Երկինքն ու երկիրը —։ Ղրկեց. — զո՞վ. — Իւր որդին. ապա երկինքն ու երկիր, իւր որդին, սեռի խնդիր են։

## Բ. ԲՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

185. Հ. Ի՞նչ է բնութեան խնդիր։

Պ. Նախադասութեան մէջ գտնուած տրական, բացառական և գործիական հոլով բառեր կը կոչուին բնութեան խնդիր, զոր օրինակ.

Թող մեզ զպարտիս մեր. Մեր յանցանքը մեզի թող։

Հոս մեզ տրական բնութեան խնդիր է թողին։

Եղբարքն Յովսեփու վաճառեցին զնա Իսմայելացւոց. Յովսեփու եղբայրներն զնա ծախեցին Իսմայելացւոց։

Հոս Իսմայելացւոց նոյնպէս տրական հոլով բնութեան խնդիր է վաճառեցին բային։



186. Հ. Տրական հոլովն ի՞նչ հարցման պատասխան է։

Պ. Տրական հոլովը՝ որո՞ւ, քիմէ, հարցման պատասխան է. զոր օրինակ, վաճառեցին. — որո՞ւ. — Իսմայելացւոց. ապա Իսմայելացւոց տրական խնդիր է վաճառեցին բային։

Փրկեա զմեզ ի չարէ. Չարէ փրկէ զմեզ։

Այս խօսքին մէջ ի չարէ բացառական հոլով բնութեան խնդիր է փրկեա բային։

187. Հ. Բացառական հոլովն ի՞նչ հարցման պատասխան է։

Պ. Բացառական հոլովը՝ ուստի՞, քիմտէն, հարցման պատասխան է. փրկէ. — ո՞րմէ. — չարէ. ապա ի չարէ բացառականը բնութեան խնդիր է փրկեային։

Բերէին զհիւանդս մահճօք. Հիւանդները անկողիններով կը բերէին։

Այս խօսքին մէջ մահճօք գործիական հոլով բնութեան խնդիր է բերէին բային։

188. Հ. Գործիական հոլովն ի՞նչ հարցման պատասխան է։

Պ. Գործիական հոլովը՝ որո՞վ, ի՞նչ բանով, քիմինլէ, նէ իլէ, հարցման պատասխան է. զոր օրինակ, Հիւանդները կը բերէին. — ի՞նչ բանով. — մահիճներով.

189. Հ. Նախադասութեան մէջ ուրիշ ի՞նչ խնդիրներ կրնան գտնուիլ։

Պ. Նախադասութեան մէջ տրական, բացառական և գործիական հոլով խնդիրներէն զատ,

նախադրութեամբ խնդիրներ եւս կրնան գտնուիլ. զոր օրինակ,

Ածին զՅիսուս առ Պետրոս։

Հոս, առ Պետրոս, առ նախադրութեամբ խնդիր է ածին բային։

Ընկեցին զԴանիէլ ի գուբն առիւծուց. Դանիէլն առիւծներուն գուբը նետեցին։

Հոս, ի գուբն, ի նախադրութեամբ խնդիր է ընկեցին բային։

Կացոյց զնա ի վերայ աշտարակի տաճարին. Տաճարին աշտարակին վրայ կեցուց զնա։

Հոս, ի վերայ աշտարակի, ի վերայ նախադրութեամբ խնդիր է կացոյց բային։

Գ. ՅԱՏԿԱՑՈՒՑԻՉ

190. Հ. Ի՞նչ է Յատկացուցիչ։

Պ. Գոյականները շատ անգամ սեռական հոլով խնդիր կ'ունենան, որ յատկացուցիչ կ'ըսուի, և կը ցուցնէ թէ այն ինչ բանը որու է, զոր օրինակ. Ի վերայ աշտարակի տաճարին. Տաճարին աշտարակին վրայ. — տաճարին սեռական հոլովը, աշտարակ բառին յատկացուցիչն է, քանզի կը ցուցնէ թէ որ տեղւոյ աշտարակ է, այսինքն՝ տաճարին։

Ես զկամս նորա առնեմ. Ես անոր կամքը կ'ընեմ։

Հոս նորա սեռական հոլով դերանունը՝ կամս բառին յատկացուցիչն է, քանզի կը ցուցնէ թէ որու կամքն է, այսինքն՝ անոր (Աստուծոյ)։



191. Հ. Ի՞նչ կը կոչուի այն բառը որ յատկացուցիչ ունի։

Պ. Այն բառը որ յատկացուցիչ ունի՝ յատկացեալ կ'ըսուի. ուստի վերի օրինակներուն մէջ աշտարակ և կամս բառերը յատկացեալ են։

192. Հ. Յատկացուցիչն ի՞նչ հարցման պատասխան է։

Պ. Յատկացուցիչն, այսինքն սեռական հոլովը, որո՞յ, ի՞նչ բանի, քիմի՞ն, նէնի՞ն, հարցման պատասխան է։

193. Հ. Բայէն և գոյականէն զատ ո՞ր բառերը խնդիր կ'ուզեն։

Պ. Բայէն և գոյականէն զատ, խօսքի մէջ ածականներէն ոմանք և նախադրութիւններն այլ և այլ հոլով խնդիր կ'առնուն. այսպէս կ'ըսենք.

Արժանի փրկութեան. Հնազանդ հրամանաց. Հմուտ օրինաց. Թափուր ի բնակչաց. Ազատ ի հարկաց. Լի դրամովք. Կարօտ ինձ, կամ, ինեւ։

Այս օրինակներուն մէջ, փրկութեան, հրամանաց, օրինաց, սեռական հոլովներն՝ արժանի, հնազանդ, հմուտ ածականներուն խնդիր են. ի բնակչաց, ի հարկաց, բացառական հոլովներն՝ թափուր, ազատ, ածականներուն խնդիր են. դրամովք, ինեւ, գործիական հոլովներն՝ լի, կարօտ, ածականներուն։

194. Հ. Նախադրութիւններն ի՞նչ խնդիր կ'ուզեն։

Պ. Ամէն նախադրութիւն գոյական կամ դերանուն խնդիր մը կ'ուզէ։

195. Հ. Ի, յ, ց, զ, առ, ընդ, ըստ, նախդիրներն ի՞նչ հոլով խնդիր կ՚առնուն։

Պ. Ի, յ, ց, զ, առ, ընդ, ըստ, նախդիրներն այլ և այլ հոլով խնդիր կ՚առնուն, և այլ և այլ նշանակութիւն կ՚ունենան։

196. Հ. Ի կամ յ նախդիրն ի՞նչ կը ցուցնէ։

Պ. Ի կամ յ նախդիրը շատ անգամ տեղւոյ պարագան կը ցուցնէ. և ո՞ւր հարցման կը պատասխանէ, զոր օրինակ. — Գնաց ի տուն. — Ո՞ւր գնաց. — Ի տուն, տուն։ Նստի ի տան. — Ո՞ւր կը նստի. — Ի տան, տունը։

197. Հ. Ի կամ յ նախդիրն երբ տրական կ՚ուզէ։

Պ. Երբ բայը դադարում կը ցուցնէ, ի կամ յ նախդիրը տեղ ցուցնելու համար եզակի անունը տրական կ՚ուզէ, և ներգոյական կ՚ըսուի։

Բնակի ի քաղաքի. Նստի ի տան. Կայր ի տաճարին։

198. Հ. Ի կամ յ նախդիրն երբ հայցական կ՚ուզէ։

Պ. Երբ բային գործողութիւնը շարժում կը ցուցնէ, ի կամ յ նախդիրը տեղ ցուցնելու համար եզակի անունն անորոշ հայցական կ՚ուզէ և նախդրիւ տրական կ՚ըսուի, զոր օրինակ.

Չոգաւ ի տուն. Առաքեաց ի քաղաքն. Ընթացաւ ի հրապարակն։

199. Հ. Ի կամ յ նախդրէն ետքը երբ միշտ հայցական կը դրուի։

Պ. Երբ խնդիրը յոգնակի և կամ չորրորդ հոլովման (գետ, գետոյ) բառ է, ի կամ յ էն ետքը միշտ անորոշ հայցական կը դրուի, զոր օրինակ.



Գնացին ի տունս իւրեանց. Բնակին յանտառս. Անկաւ ի գետն. Հեղձաւ ի գետն։

200. Հ. Զ նախդիրը բացառական խնդրով ի՞նչ կը նշանակէ։

Պ. Զ նախդիրը բացառական խնդրով բանի մը վրայով կը նշանակէ, և պարագական կ՚ըսուի. զոր օրինակ.

Պատմեն զնմանէ. Անոր վրայով կը պատմեն։ Ասացաւ զմանկանէն. Տղուն վրայով ըսուեցաւ։

201. Հ. Զ նախդիրը գործիականով ի՞նչ կը նշանակէ։

Պ. Զ նախդիրը գործիական խնդրով բանի մը բոլորտիքը կը նշանակէ, և պարառական կ՚ըսուի, զոր օրինակ.

Խռնեցան զնովաւ. Անոր բոլորտիքը ժողվուեցան։ Պատեսցեն զքեւ պատնէշ. Քու բոլորտիքդ պատ պիտի քաշեն։

202. Հ. Ընդ, եզակի տրական և յոգնակի հայցական խնդրով ի՞նչ կը նշանակէ։

Պ. Ընդ, եզակի տրական և յոգնակի հայցական խնդրով, մէկուն հետ կը նշանակէ. զոր օրինակ.

Խօսեցաւ ընդ նմա. Անոր հետ խօսեցաւ։ Խօսեցաւ ընդ նոսա. Անոնց հետ խօսեցաւ։

203. Հ. Ընդ, սեռական խնդրով ի՞նչ կը նշանակէ։

Պ. Ընդ, սեռական խնդրով, տեղը, փոխանակ, կը նշանակէ, զոր օրինակ.

Թագաւորեաց Րոբովամ որդի նորա (Սողոմոնի) ընդ նորա· Անոր (Սողոմոնի) որդին Րոբովամ անոր տեղը թագաւորեց։

204· Հ· Ընդ, գործիական խնդրով ի՞նչ կը նշանակէ։

Պ· Ընդ, գործիական խնդրով տակ կը նշանակէ, զոր օրինակ·

Ընդ Թեւովք· Թեւերուն տակը· Ընդ իշխանութեամբ· Իշխանութեան տակ։

205· Հ· Ուրիշ նախադրութիւններ ի՞նչ խնդիր կ'ուզեն։

Պ· Ուրիշ նախադրութիւններէն ոմանք սեռական կ'ուզեն, զոր օրինակ· առաջի, զկնի, յետ, ի վերայ· ոմանք տրական, ոմանք բացառական և ոմանք գործիական։

## Դ· ԲԱՑԱՅԱՅՏԻՉ

206· Հ· Բացայայտիչ ի՞նչ է։

Պ· Բացայայտիչ կ'ըսուի մի կամ աւելի բառ որ ուրիշ բառի քով կը դրուի և նոյն բանը կը նշանակէ, իբրեւ մեկնութիւն նորա, զոր օրինակ·

Յովսէփ, այր Մարիամու· Յովսէփ, Մարիամու այրը։

Հոս այր Մարիամու. Յովսէփին բացայայտիչ է, Յովսէփ և այր Մարիամու միեւնոյն անձը կը նշանակեն, բայց երկրորդը մեկնութիւն է առաջնոյն, քանզի կը ցուցնէ թէ ո՞ր Յովսէփն է։

Փախուստն Անակայ, հօր Սրբոյն Գրիգորի· Սուրբ Գրիգորի հօր, Անակայ, փախուստը։



Հոս հօր Սրբոյն Գրիգորի բառերն՝ Անակին բացայայտիչ են· Անակ և հայր Սրբոյն Գրիգորի միեւնոյն անձն է· միայն երկրորդը մեկնութիւն է առաջնոյն։

Զմայրն ամենայն առաքինութեանց, զխոնարհութիւն, չունէր յանձին· Ամէն առաքինութեանց մայրը, խոնարհութիւնը, չունէր։

Հոս խոնարհութիւն բառը մայր ամենայն առաքինութեանցն բացայայտիչ է։ Երկուքն միեւնոյն բան կը նշանակեն, միայն վերջին բառն առաջիններուն մեկնութիւնն է։

Կռոց և դրօշելոց հանգամանք առ Թարայիւ, հօրն Աբրահամու, եղեն· Քարէ և փայտէ արձաններ (կուռքեր) շինել՝ Աբրահամու հօրը, Թարայի, ատեն սկսաւ։

Հոս, հօրն Աբրահամու, բացայայտիչ է Թարայի։

## ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

207· Հ· Ի՞նչ է յարաբերական դերանուն։

Պ· Յարաբերական դերանուն է որ բառը, և կը ցուցնէ խօսքին մէջ իրմէ առաջ գտնուած բառ մը· զոր օրինակ·

Հայրն քո որ տեսանէ 'ի ծածուկ՝ հատուսցէ քեզ յայտնապէս· Քու հայրդ որ ծածուկ կը տեսնէ, յայտնի պիտի հատուցանէ։

Այս խօսքին մէջ, որ, է յարաբերական, և հայր բառին տեղ դրուած է, կամ կը յարաբերէ զայն։

Աստղն զոր տեսին յարեւելս՝ առաջնորդէր նոցա· Աստղը զոր արեւելք տեսան՝ անոնց առաջնորդեց։

Այս խօսքին մէջ որ յարաբերական դերանունը՝ մարդ բառը կը յարաբերէ ։

208. Հ. Յարաբերականով ցուցուած բառն ինչ կը կոչուի ։

Պ. Յարաբերականով ցուցուած բառն յարաբերեալ կը կոչուի. ուստի վերի խօսքերուն մէջ հայր և մարդ բառերը յարաբերեալ են ։

209. Հ. Յարաբերականն ուր գտնելու է ։

Պ. Յարաբերականը յարաբերելոյն անմիջապէս քովը գտնելու է ։

210. Հ. Դերանուն յարաբերեալը կրնայ լռելեայն իմացուիլ ։

Պ. Դերանուն յարաբերեալը շատ անգամ լռելեայն կ'իմացուի. զոր օրինակ.

Որ ետեսն զիս՝ ետես զՀայր իմ ։

Այս խօսքին մէջ լռելեայն կ'իմացուի յարաբերեալը, որ է Նա դերանունը. ուստի պիտի ըլլայ. — Նա որ ետես զիս՝ ետես զՀայր իմ. Նա որ զիս տեսաւ՝ Հայրս տեսաւ ։

Որք ոչն տեսանեն՝ տեսցեն, և որք տեսանենն՝ կուրասցին ։

Հոս յարաբերեալը, Նոքա, լռելեայն կ'իմացուի. պիտի ըլլայ այսպէս. Նոքա որ ոչ տեսանեն՝ տեսցեն, և Նոքա որ տեսանեն՝ կուրասցին. Անոնք որ չեն տեսներ՝ պիտի տեսնեն, իսկ անոնք որ կը տեսնեն՝ պիտի չտեսնեն ։

211. Հ. Երբ յարաբերեալը լռելեայն է, ինչ կ'ըլլայ ։



Պ. Երբ յարաբերեալն այսպէս լռելեայն է, յարաբերականէն անմիջապէս առջը եկող բառին վրայ ս, դ, ն, գիրերէն մին կը դրուի, այսինքն՝ ս կը դրուի՝ երբ լռելեայն իմացուած դերանունն է այս, սա կամ սոա դերանուններէն մին. դ կը դրուի՝ երբ լռելեայն իմացուած դերանունն է այդ, դա կամ դոա դերանուանց մին. ն կը դրուի, երբ լռելեայն իմացուած դերանունն՝ է այն կամ նա դերանուններէն մին, զոր օրինակ.

Մի ոք մեղադիր լիցի և աղարտիցէ զոր ասեմս ։

փոխանակ ըսելու. Մի ոք մեղադիր լիցի և աղարտիցէ զայս զոր ասեմ ։

Գիտիցեմ արդեօք զոր ընթեռնուցուդ ։

փոխանակ ըսելու. Գիտիցեմ արդեօք զայդ զոր ընթեռնուս ։

Ոչ կարեմք զոր տեսաքն և լուաք չխօսել ։

փոխանակ ըսելու. Ոչ կարեմք չխօսել զայն զոր տեսաք և լուաք ։

212. Հ. Յարաբերականը դիմաւոր բայով ինչ բանի զօրութիւն ունի ։

Պ. Առանց յարաբերեալի յարաբերական դերանունը դիմաւոր բայով մէկտեղ, աշխարհաբառին ող կամ ած վերջաւորուած բառերուն զօրութիւնն ունի. ուստի՝

Որ ետեսն զիս. կը նշանակէ՝ Զիս տեսնողը ։ Որք ոչն տեսանեն. կը նշանակէ՝ Չտեսնողները ։ Մի ոք աղարտիցէ զոր ասեմս. կը նշանակէ՝ Ըսածս մէկը չպարսաւէ ։

Գիտիցես զոր ընթեռնուցուս · կը նշանակէ՝ Կարդացածդ գիտես ։ Ոչ կարեմք զոր տեսաք և լուաք չխօսել · կը նշանակէ՝ Չենք կրնար տեսածնիս և լսածնիս չխօսել ։

213· Հ· Այս կերպ գրուածներու մէջ յարաբերականն ի՞նչ հոլով կրնայ դրուիլ ։

Պ. Այս կերպ գրուածներու մէջ յարաբերականը լռելեայն իմացուած յարաբերելոյն հոլովը կը դրուի, եթէ այն յարաբերեալը հոլովուած բառ է. զոր օրինակ ·

Որում խնդրէ 'ի քէն՝ տուր · Քեզնէ խնդրողին տուր։

փոխանակ ըսելու · Տուր այնմ՝ որ խնդրէ ի քէն ։

## ՄԱՍՆ Գ.

## ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

214· Հ· Ի՞նչ է Շարադրութիւն ։

Պ· Շարադրութիւն կամ շարադրել է խօսքին մասերն այնպիսի օրինօք շարել որ իմաստ հասկցուի ։

215. Հ· Խօսքի մը մասերը քանի՛ կերպով կրնան շարուիլ ։

Պ. Խօսքի մը մասերը կը շարուին երկու կերպով . պարզութեամբ և յեղով ։

216· Հ. Պարզ շարադրութիւնը ո՞րն է ։

Պ· Պարզ շարադրութիւն է՝ ուր բառերը քերականական կարգով շարուած են ։

217· Հ· Բառերը քերականական կարգով ի՞նչպէս կը շարուին ։



Պ. Բառերը քերականական կարգով կը շարուին,

Նախ դնելով տէր ենթակայն իր մասերով, այսինքն՝ ածականներով և յատկացուցչով ·

Երկրորդ՝ բայը ·

Երրորդ՝ մակբայը, եթէ մակբայ կայ ·

Չորրորդ՝ հայցական սեռի խնդիրն իր մասերով, եթէ բայը ներգործական է և հայցական հոլով սեռի խնդիր ունի ·

Հինգերորդ՝ միւս խնդիրներն, այսինքն՝ տրական, բացառական, գործիական և նախադրութեամբ խնդիրներն, իրենց մասերով. զոր օրինակ·

Այրն այն էր մեծատուն · Այրն Յովբ, էր արդար · Տեսի զքեզ ի ներքոյ թզենւոյն ։

Այս նախադասութեանց կարգը քերականական է։ Ձեւաւոր լինի, եթէ բառերը շարենք այսպէս ·

Մեծատուն էր այրն այն · Արդար էր այրն Յովբ · Ի ներքոյ թզենւոյն տեսի զքեզ ։

218· Հ· Ձեւաւոր կարգը քանի՛ է ։

Պ. Ձեւաւոր կարգը երեք է · Նախ, շրջուած, այսինքն, երբ բառերը քերականական կարգէն տարբեր կերպով շարուած են · զոր օրինակ, երբ տէր ենթակայն փոխանակ բայէն առաջ դրուելու՝ բայէն ետքը դրուած է, կամ խնդիր մը փոխանակ խնդրառուէն ետքը դրուելու՝ անկէ առաջ դրուած է, յատկացուցիչը յատկացեալէն առաջ ։ Զոր օրինակ, Նմանեցեալ արտայայտութեան ներքին խօսքը՝ արտուղի

է, քանզի տէր բային բայէն առաջ գրուած է։ Զօրս իմ պատրաստեցի ալ ուղիղ է, քանզի հայցական խնդիրը խնդրառուէն, այսինքն՝ պատրաստեցի բայէն առաջ գրուած է։ Կապեցէք զդորա զոտս և զձեռս, նոյնպէս ալ ուղիղ է, քանզի դորա յատկացուցիչը յատկացեալէն առաջ գրուած է։ Այս ձեւը ուղղադասութիւն կը կոչուի։

Երկրորդ՝ ձեւաւոր է կարգը, երբ խօսքին մէջ բառ մը զեղչուած է, այսինքն՝ լռելեայն կ'իմացուի. զոր օրինակ. Գնաց ոմն յագարակ իւր, և ոմն՝ ի վաճառ իւր խօսքին երկրորդ մասը զեղչեալ է, քանզի գնաց բայը զօրութեամբ կ'իմացուի, ուստի պիտի ըլլար՝ Ոմն գնաց յագարակ իւր, և ոմն գնաց ի վաճառ իւր։ Այս ձեւը զեղչում կ'ըսուի։

Երրորդ՝ ձեւաւոր է շարադրութեան կարգը, երբ խօսքին մէջ բառ մը, զոր օրինակ, տէր բային կամ խնդիր մը, աւելի է, զոր օրինակ.

Կինն զոր ետուր ընդ իս՝ նա ետ ինձ ի ծառոյ անտի և կերայ. Կինը զոր ինծի տուիր նա տուաւ ինձ ծառէն և կերայ։

Հոս նա աւելորդ է։

Զյիսուս զոր դուք սպանէք՝ զնա յարոյց Աստուած։

Հոս զնա աւելի գրուած է։ Այս ձեւն աւելադրութիւն կը կոչուի։



# ԿԷՏԱԴՐՈՒԹԻՒՆ

1. Հ. Ի՞նչ է կէտադրութիւն,

Պ. Կէտադրութիւն է խօսքին մէջ բառերը և իմաստները կէտ կոչուած նշաններով իրարմէ զատել։

2. Հ. Կէտադրութեան գլխաւոր նշաններն ո՞րոնք են։

Պ. Կէտադրութեան գլխաւոր նշաններն են բութ (՝), ստորակէտ (,), միջակէտ (·), և վերջակէտ (։)։

3. Հ. Այս նշանք ինչու համար կը գործածուին։

Պ. Այս նշանները կը գործածուին նախադասութեան մը կամ պարբերութեան մասերն իրարմէ զատելու համար։

4. Հ. Ի՞նչ է նախադասութիւն։

Պ. Նախադասութիւն է այլ և այլ բառերէ բաղկացեալ իմաստ մը որուն մէջ գլխաւոր բայ մը կայ, և նախադասութեան մասերն են՝ տէր բային, խնդիրները, մակբայը, ածականները ևն։

5. Հ. Ի՞նչ է պարբերութիւն։

Պ. Պարբերութիւն կ'ըսուի երկայն խօսք մը որ կը բաղկանայ երկու գլխաւոր նախադասութենէ որոնք պարբերութեան անդամները կը կոչուին։

6. Հ. Պարբերութեան անդամներն ինչ են։

Պ. Պարբերութեան անդամներն են այնպիսի նախադասութիւններ՝ որ իրարմէ կախում ունին, կամ իրարու հակադրեալ են, և կամ որոց մին միւսին պատճառն է, զոր օրինակ.

Եթէ մեզի մեր տկարութեան վրայ գաղափար տուող բան մը կայ, մեր վիճակն է մեր ծննդենէն անմիջապէս ետքը։

Երջանկութեան հասնելու համար բոլոր մարդիկ հա-րըստութիւն կը խնդրեն . բայց և այնպէս երջանիկ հարուստներ շատ քիչ կը գտնուին ։

Մեր թագաւորը բարեսիրտ և մարդասէր է · ապա անոր գթութեանը կրնանք դիմել ։

Այս պարբերութեանց առաջնոյն անդամները կախում կը ցուցնեն · երկրորդին անդամներն ի-րարու հակադրեալ են . իսկ երրորդին անդամնե-րէն մին միւսին պատճառ է ։

7· Հ· Ո՞ր խօսքերը պարբերութիւն չեն ։

Պ. Պարբերութիւն չեն երկայն խօսքեր՝ որոց մէջ իրարմէ կախում ունեցող կամ իրարու հա-կադրեալ , կամ մին միւսին պատճառ անդամներ չկան , զոր օրինակ ·

Առողջութիւնը լոկ անուն է · կեանքը սոսկ երազ է · փառքը միայն երեւոյթ է · զուարճութիւններն և հեշտութիւններ ուրիշ բան չեն եթէ ոչ վտանգաւոր զբօսանք ։

8· Հ· Ո՞ր պարբերութիւնը պարզ է ։

Պ· Պարբերութիւն մը պարզ կը կոչուի , երբ անդամներուն երկուքը եւս մի մի նախադասու-թիւն են · այսպէս են վերի 6 թւոյն երկու պար-բերութիւնները ·

9· Հ· Ո՞ր պարբերութիւնը բաղադրեալ է ·

Պ· Պարբերութիւն մը բաղադրեալ կը կոչուի , երբ անդամներէն մին կամ երկուքը եւս երկու կամ աւելի նախադասութիւններէ կը բաղկանան , զոր օրինակ ·

Եթէ մարդիկ արդարութեան վրայ աւելի յարգ ունենային՝ և ճշմարտութեան մեծ զօրութեան վրայ համոզուած ըլլային , ոչ միայն ընկերութիւնն իւր նպա-տակին աւելի մօտեցած կը լինէր՝ այլ և առանձնական շահերն աւելի ապահով երաշխաւորութիւն կ'ունենային ։



10· Հ· Կէտադրութեան կանոններն որո՞նք են ։

Պ· Կէտադրութեան կանոններն հետեւեալ-ներն են ·

1· Երբ նախադասութիւն մը քանի մը տէր բայի կամ խնդիր , կամ երբ գոյական մը քանի մը ա-ծական ունի , ասոնք իրարմէ ստորակէտով կը բաժնուին , զոր օրինակ ·

Աշխարհիս վրայ լոյս , խաւար , ջերմ , ցուրտ , լոյծ , [illegible] բաներ խառն կը գտնուին ։

[illegible] , [illegible] , [illegible] , [illegible] , [illegible] այն երկրին մէջ իրենց ձայնը լսել չեն տար ։

Այս փիլիսոփայն ուրախութեամբ կը խոստովանէր թէ հոգին կ'ըմբռնէ , կը խորհի , կը տրամաբանէ , կը հաւատայ , կ'իմաստասիրէ , կը ճանչնայ , կը կամի , կը փառաբանէ ։

Ոմանք այս դիպաց մէջ ստորակէտի տեղ բութ կը գործածեն ։

2· Խօսքի մը որ պարբերութիւն չէ՝ նախադա-սութիւնները սովորաբար միջակէտով կը զատուին · ինչպէս վերը ( թիւ 7 ) տեսնուեցաւ ։

3· Պարզ պարբերութեան մը իրարմէ կախում ցուցնող անդամներն ստորակէտով կը զատուին ։ ( Տես վերը թիւ 6 առաջին օրինակը ) ։

4· Պարզ պարբերութեան մը անդամներն որ իրարու հակադրեալ են, կամ մին միւսին պատճառն է, միջակէտով կը զատուին։ (Տես վերը թիւ 6, երկրորդ և երրորդ օրինակները)։

5. Բաղադրեալ պարբերութեան անդամները որ կախում կը ցուցնեն՝ նոյնպէս ստորակէտով կը զատուին· իսկ իւրաքանչիւր անդամը կազմող մասերը բութով կը զատուին։ (Տես վերը 9 թիւ օրինակը)։

6· Բաղադրեալ պարբերութեան անդամները որ իրարու հակադրեալ են, կամ մին միւսին պատճառն է, վերջակէտով կը զատուին· իսկ իւրաքանչիւր անդամը կազմող մասերը միջակէտով կը զատուին, զոր օրինակ·

Մարդ իրեն համամիտ և համակարծիք եղողներուն հետ երկայն ատեն գժտեալ չկրնար մնալ· վերջապէս կը հաշտուի։ Բայց իւր զգացմանց և կարծեաց հակառակ զգացում ունեցողներուն հետ սիրով և միաբանութեամբ ապրելու վայրապար կաշխատի· այսպիսիք կանուխ կամ անագան կը բաժնուին իրարմէ։

7· Կոչականը նախադասութեան միւս մասէն ստորակէտով կը բաժնուի։ Նոյնպէս՝ ահ, աւաղ, և ուրիշ ասոնց նման բառ մը որ ուրիշի մը խօսքը յառաջ կը բերէ, և նախադասութեան մը մէջ է, ստորակէտով կը բաժնուի, զոր օրինակ·

Ով արժանաւոր որդիդ իմաստնոյն Ոդիսեայ, հորդ զգօնութիւնը քու վրադ կը տեսնեմ։

Ով է, ըսաւ դիցուհին, հայրդ զոր կը փնտռես·
Հայրս, ըսաւ Տելեմաք, Ոդիսեւս կը կոչուի·



Ահ, աւաղ եւայլն բայերէն ետքը միջակէտ կը դրուի, և յաջորդ խօսքը որ ուրիշինն է՝ գլխագրով կը սկսի, եթէ յիշեալ բայերը յաջորդ խօսքէն առաջ են, զոր օրինակ·

Դիցուհին ըսաւ· Ով է հայրդ զոր կը փնտռես· Տելեմաք պատասխան տուաւ· Հայրս Ոդիսեւս կը կոչուի, եւայլն։

11· Հ· Ի՞նչ բառեր կէտանշանով չեն բաժնուիր։
Պ· Ամենեւին կէտանշանով չեն բաժնուիր.

1· Երկու նոյնատեսակ բառեր, զոր օրինակ· երկու ածական, երկու տէր բայի, երկու բայ, որ միեւնոյն գոյականի, բայի և տէր բայի կը վերաբերին, և եւ, ու, կամ, բայց, և ուրիշ ասոնց նման շաղկապներով կապուած են, և կից մասեր չունին, զոր օրինակ·

Պատիժն և մրցութիւնն անբաժին են։ Քու մարդոց կորուստը կամ փրկութիւնը կախում ունի քու կորստենէդ կամ փրկութենէդ։ Մարդուս կիրքերն անոր վնասակար բայց սիրելի թշնամիներն են։

2· Կրկնուած շաղկապներով կամ մակբայներով կապուած բառեր· զոր օրինակ·

Ամէն տեղ ծաղկած կը տեսնենք Թէ Պոմոնայի պտուղները Թէ Փլորայի ընծաները։ Մի թողուր ոչ ազահութեան ոչ հպարտութեան որ քարշածեն զքեզ։

3· Որ, Թէ շաղկապներով կապուած նախադասութիւն մը որ նախընթաց բային խնդիր է, զոր օրինակ·

Չենք կամիր որ յանդիմանէ զմեզ ոք, քանզի ուղղուիլ չենք կամիր։ Շողոքորդութենէ կը խաբուինք, քանզի կը կարծենք թէ ուրիշներն այնչափ կոյր են, որ չեն տեսներ մեր մոլութիւնները։

12. Հ. Ի՞նչ է Պարոյկ։

Պ. Պարոյկն (°) հարցական նշան է, և հարցական բառին վրայ կը դրուի։

13. Հ. Ի՞նչ է Երկար։

Պ. Երկարը (՛) զարմացական նշան է, և հոգւոյ կիրք նշանակող բառերու վրայ կը դրուի։

14. Ի՞նչ է կախում։

Պ. Կախումը՝ որ երեք կէտ է (. . .), կը գործածուի ցուցնելու համար թէ խօսքը պակաս կամ կիսկատար մնացած է։

15. Հ. Ի՞նչ է Գիծ։

Պ. Գիծը (—) կը գործածուի նախ՝ ի մէջ հարցման և պատասխանւոյ. առանց գործածելու կ'ըսէ, ըսաւ, պատասխան տուաւ, եւլն։ Երկրորդ՝ փոխանակ փակագծի։

16. Հ. Ի՞նչ է Չակերտ։

Պ. Չակերտը (») կը դրուի խօսքի մը սկիզբը և վերջը, եթէ այն խօսքը վկայութիւն կամ կոչում է հեղինակէ մը, կամ ուրիշի խօսքն է։

17. Հ. Ի՞նչ է փակագիծ։

Պ. Փակագիծը որ սա () նշանն է, խօսքին մարմինէն դուրս, բայց անոր յաւելուած մաս մը կը զատէ բուն խօսքէն։

ՎԵՐՋ

2531-2533

ՀՀ Ազգային գրադարան
NL0059653

ՀՀ Ազգային գրադարան
NL0059654

ՀՀ Ազգային գրադարան
NL0059655